

ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ

ПСИХОЛОГИЯ И ЖИЗНЬ
PSYCHOLOGY AND LIFE

2013
1-2



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԵՍԻ ՀԻՄՆԱԴԻՐՆ Է «ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ»

«ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մկրտչյան Սոկրատ – խորհրդի նախագահ, «Տաթև ԳԿՀ»-ի գլխավոր տնօրեն
Պողոսյան Վազգեն – գլխավոր խմբագիր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ավանեսյան Հրանտ – հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Բերբերյան Ասյա – հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Բաբայան Հարություն – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Գևորգյան Սրբուհի – հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գրին Էլդա – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Խուդոյան Սամվել – հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Կարապետյան Վլադիմիր – հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հակոբյան Նաիրա – հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մկրտումյան Մելս – հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ներսիսյան Լեմա – մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սեդրակյան Սեդրակ – հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ ЖУРНАЛА “ПСИХОЛОГИЯ И ЖИЗНЬ”

Մկրտչյան Սոկրատ – *председатель совета, ген. директор "НОК Tatev"*
Պոգոսյան Վազգեն – *главный редактор, кандидат психологических наук, доцент*
Ավանեսյան Հրանտ – *доктор психологических наук, профессор*
Այոպյան Նաիրա – *доктор психологических наук, профессор*
Բերբերյան Ասյա – *доктор психологических наук, профессор*
Բաբայան Սրբուհի – *кандидат психологических наук, профессор*
Գևորգյան Սրբուհի – *доктор психологических наук, профессор*
Գրին Էլդա – *кандидат психологических наук, профессор*
Կարապետյան Վլադիմիր – *доктор психологических наук, профессор*
Մկրտումյան Մելս – *доктор психологических наук, профессор*
Ներսիսյան Լեմա – *доктор педагогических наук, профессор*
Սեդրակյան Սեդրակ – *кандидат психологических наук, доцент*
Մուդոյան Սամվել – *доктор психологических наук, доцент*

EDITORIAL COUNCIL OF THE JOURNAL “PSYCHOLOGY AND LIFE”

Mkrtychyan Sokrat – *The Chairman of Council, The general director of "Tatev Scientific educational" complex*
Poghosyan Vazgen – *primary editor, PhD in psychology, associate professor*
Avanesyan Hrant – *doctor of psychology, professor*
Berberyan Asya – *doctor of psychology, professor*
Babayan Harutyun – *PhD in psychology, professor*
Gevorgyan Srбуhi – *doctor of psychology, professor*
Grin Elda – *PhD in psychology, professor*
Hakobyan Naira – *doctor of psychology, professor*
Karapetyan Vladimir – *doctor of psychology, professor*
Mkrtumyan Mels – *doctor of psychology, professor*
Nersisyan Lems – *doctor of pedagogy, professor*
Sedrakyan Sedrak – *PhD in psychology, associate professor*
Xudoyan Samvel – *doctor of psychology, associate professor*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՆԱՅԻՆ ՓՈԽՎԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵՍԵՄԱՆՏԻԿ ՄԵԹՈԴՈՎ

Պահանջմունքն անձնավորության դրդապատճառային կառույցի այն բաղադրիչն է, որը բացահայտում է գործունեության՝ որպես սոցիալական ակտիվության ներքին աղբյուրը: Պահանջմունքներով են բնութագրվում անձնավորության հուզական, իմացական ոլորտների առանձնահատկությունները, միաժամանակ պահանջմունքները նպաստում են անձնային հատկությունների և որակների ձևավորմանը:

Պահանջմունքների և դրդապատճառների փոխհարաբերությամբ է պայմանավորվում անձի՝ իրականության, սոցիալական միջավայրի նկատմամբ վերաբերմունքների համակարգը, սոցիալական ադապտացիան միջավայրում:

Պահանջմունքների հիմնախնդրի տեսական հարցերը քննարկվել են Վ. Ն. Մյասիշևի, Ա. Ն. Լեոնտևի, Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ա. Վ. Պետրովսկու, Պ. Վ. Սիմոնովի, Բ. Ի. Դոդոնովի, Վ. Ա. Յադովի, Լ. Ի. Բոժովիչի, Վ. Ս. Մագունի, Դ. Ա. Կիկնաձեի, Կ. Ա. Օբուխովսկու աշխատանքներում: Հոգեբանական գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ պահանջմունքները գործունեության, վարքի շարժիչ ուժերն են, ունեն ակտիվության

դրդիչի գործառույթ [3]: Պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունն է, որ դառնում է դրդապատճառ և անձնավորությանը մղում որևէ գործունեության:

Պահանջմունքների ուսումնասիրության բարդությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք դրսևորվում են անձնային կառույցի մյուս բաղադրիչների հետ փոխներգործությամբ, իրենց ազդեցությունն են ունենում այլ կառույցների ձևավորման, դրսևորման վրա և կրում են նրանց ազդեցությունը: Այդ իսկ պատճառով պահանջմունքների ուսումնասիրության նպատակով ընտրվեց Ի. Լ. Սոլովյովի կողմից մշակված թաքնված մոտիվացիայի հոգեսեմանտիկ ախտորոշման մեթոդական կոմպլեքսի (ՄԴՍՄ) մեջ մտնող պահանջմունքների ուսումնասիրության գունային փոխհարաբերությունների հոգեսեմանտիկ մեթոդիկան [1]:

Գունային փոխհարաբերությունների մեթոդիկան վերաբերմունքների գունային մեթոդիկայի ձևափոխված տարբերակն է: Մոտիվացիայի հոգեսեմանտիկ ախտորոշման գործընթացում տարբերում են հիմնային և ակտուալ պահանջմունքներ: Հիմնային են համարվում կայուն պահանջ-

մունքները: Հիմնային պահանջմունքները որոշում են մարդու հետաքրքրությունների և ձգտումների բովանդակությունը, անձնավորության ընդհանուր ուղղվածությունը: Ակտուալ պահանջմունքներն իրադրորեն պայմանավորված պահանջմունքներն են, որոնք առաջացել են արտաքին հանգամանքների ազդեցությամբ:

Գունային փոխհարաբերության մեթոդիկայում հիմնական կատեգորիաներն են.

- ♦ արժեքներ և պահանջմունքներ (նյութական, անվտանգության, սոցիալական, ինքնարտահայտման, ինքնադրսևորման),
- ♦ գործունեության տեսակներ, մարդիկ և զբաղմունքներ,
- ♦ հուզական ապրումներ,
- ♦ կյանքի ուղու փուլեր և իրադարձություններ:

Գիտափորձին մասնակցել է ՀՊՄՀ-ի 2-րդ կուրսի 139 ուսանող: Գիտափորձի ընտրակազմում ընդգրկվել են կենսաբանության բաժնի 31, անգլիական բաժնի 45, մաթեմատիկայի բաժնի 27, երաժշտական կրթության բաժնի 36 ուսանողներ:

Գունային փոխհարաբերությունների մեթոդիկայի արդյունքները վերլուծելիս ելակետ ենք ընդունել հետևյալ երկու սկզբունքները.

1. Եթե հասկացություններն ամենագրավիչ գույնով են նշվել, ապա դա կարող է վկայել այդ հասկացությունների գրավչության, վերջիններիս նկատմամբ դրական վերաբերմունքի մասին: Եվ, ընդհակառակը, հասկացությունները, որոնք ամենատհաճ գույնով են նշվել, բնութագրվում են նեգատիվ վերաբերմունքով:

2. Տարբեր հասկացությունների նշանակումը միևնույն գույնով դրանց սուբյեկ-

տիվ նմանության անուղղակի ցուցանիշ է, բնութագրվում են դրանց նկատմամբ հուզական վերաբերմունքի նմանությամբ դրանք փորձարկվողի գիտակցության մեջ կապված են:

3. Թեև այս մեթոդիկան չի հենվում գույների հոգեբանական իմաստի վրա, արդյունքները վերլուծելիս հիմք ենք ընդունել այն դրույթը, որ յուրաքանչյուր գույն բնութագրում է որոշակի պահանջմունք, զուգորդվում վերջինիս հետ, այդ պահանջմունքի խորհրդանիշն է [2, 83]:

Ընտրակազմի չորս խմբերի տվյալների ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են տարբեր հասկացությունների գունային ընտրությունները, միևնույն գունային ընտրության խմբի մեջ մտնող հասկացությունները:

Վերլուծելով, թե ինչ հասկացություններ են մտնում միևնույն խմբի մեջ, այսինքն՝ նշված են միևնույն գույնով, մենք առանձնացրել ենք, թե ինչ պահանջմունքների հետ է կապված մեզ հետաքրքրող գործունեության տեսակը կամ ինչ հուզական ապրումներով են ուղեկցվում տարբեր զբաղմունքներ, մարդիկ և իրադարձություններ: Նախ վերլուծել ենք ամենահաճելի գույներով նշված հասկացությունները, այնուհետև՝ այն խմբերը, որոնք մտնում են «իմ հրապուրանքը» և «հետաքրքիր զբաղմունք» հասկացությունների խմբում, ապա այն հասկացությունները, որոնք կապված են «ներկա», «ապագա», «անցյալ» հասկացությունների հետ: Հետո բացահայտվել է, թե որ հասկացությունների հետ է զուգորդվում «իրականում ինչպիսին եմ» և «ինչպիսին եմ ցանկանում լինել» հասկացությունները: Բացահայտվել է անձի վերաբերմունքը կոնկրետ զբաղմունքներին, մարդկանց

կամ կենսական իրադրություններին (աշխատանք, ուսում, ընկերներ):

Քանի որ մեթոդիկայի տվյալների անհատական վերլուծությունը մեծ ծավալ է զբաղեցնում, իսկ տարբեր հասկացությունների և գունային փոխհարաբերությունների վերլուծությունն առավելապես ախտորոշիչ նպատակով կարելի է կիրառել, ապա մենք նպատակահարմար ենք համարել ներկայացնել միայն խմբային վերլուծության արդյունքները:

Պահանջմունքների ուսումնասիրության հոգեսեմանտիկ մեթոդիկայի խմբային տվյալների քանակական վերլուծությունից պարզվել է, որ հասկացությունների տարբեր համադրությունները փորձարկվողների գիտակցության մեջ զուգորդվել են առավելապես կանաչ և կարմիր գույների հետ: Տարբեր հասկացությունների կանաչ գույնով նշումը վկայում է փորձարկվողների մոտիվացիոն համակարգում գերակայության, իշխանության, անկախության պահանջմունքի առանցքային նշանակության մասին: Ընդ որում՝ գույնի առաջին դիրքերի բարձր ցուցանիշները վկայում են այս պահանջմունքների առավել ակտուալության մասին: Տարբեր հասկացությունների, զբաղմունքների, գործունեության տեսակների հետ այս գույնի զուգորդումը ճանաչման, վստահության, համառության և հաստատակամության ձգտման ցուցանիշ է: Ի տարբերություն մյուս խմբերի՝ այս ցուցանիշը հատկապես երաժիշտների մոտ բարձր է:

Կարմիր գույնը՝ որպես հաջողության, նվաճման, պայքարի, նախաձեռնության պահանջմունքի խորհրդանիշ, տարբեր հասկացությունների զուգորդմամբ հանդիպել է հիմնականում առաջին և միջին դիրքերում, ինչը վկայում է փորձարկվող-

ների ակտիվության մեջ այս պահանջմունքների ակտուալությունն ու միջին բավարարվածությունը:

Կապույտ գույնը՝ որպես մտերմության, սիրո ու հանգստության պահանջմունք, հասկացման, համաձայնության, վստահության ձգտման արտահայտություն, ընկերասիրության, կապվածության, հուզակցման ձգտման խորհրդանիշ, հիմնականում չի արձանագրվել առաջին դիրքերում: Տարբեր հասկացությունների հետ զուգորդվելով՝ այն հանդիպել է միջին դիրքերում, ինչը վկայում է, որ սոցիալական պահանջմունքները կամ ավելի թույլ արտահայտվածություն ունեն, կամ գտնվում են բավարարվածության գոտում:

Արդյունքների վերլուծությունից պարզվում է, որ ուսումնական գործունեությունը փորձարկվողների մոտ սերտորեն կապվում է հաղորդակցման, ինտերակցիայի, միջանձնային հարաբերությունների, համագործակցության, խմբային պատկանելության և կապվածության հետ:

Մանուշակագույնը՝ որպես գեղագիտական ապրումների ձգտման, զգացմունքայնության խորհրդանիշ, տարբեր հասկացությունների զուգորդմամբ հանդիպել է առաջին և միջին դիրքերում: Քանի որ մեր տվյալների համաձայն փորձարարական խմբերում էկզալտիվությունը շեշտված գիծ է և կապված է նուրբ, խիստ մարդկային հույզերի հետ, ապա բնական է, որ այս հատկությունը հատկապես բնութագրական է գեղարվեստական տիպի մարդկանց (նկարիչներ, պոետներ), ինչն էլ պայմանավորել է այն հանգամանքը, որ երաժշտության, արվեստի, բնության նկատմամբ սերը համապատասխան մասնագիտական խմբերի այս տիպի մարդկանց մոտիվացիոն համակարգում

առանցքային են եղել գեղագիտական հույզերի և զգացմունքների ապրման ձգտումը: Այդ է պատճառը, որ երաժիշտների, կենսաբանների մոտ այն տարբեր հասկացությունների զուգորդմամբ հանդիպել է առաջին դիրքերում, իսկ մաթեմատիկների և ՕԼՖ խմբերում՝ միջին:

Փորձարարական ընտրակազմի չորս խմբերի հասկացությունների վերլուծության արդյունքում պարզվել է, որ սիրո, ազատության, հաջողության, նյութական բարեհարմարության և անվտանգության ապահովման ձգտումները հիմնային պահանջմունքներ են: Փորձարկվողների սեմանտիկ դաշտում «իմ ներկան» զուգորդված է ազատության հետ: Արդյունքների վերլուծությունից պարզվում է, որ վերջինս հիմնային պահանջումք է, բայց տեղորոշվում է ապագայում: Ամենայն հավանականությամբ ազատության ձգտումը ներկայում ևս ակտուալ է, բայց փորձարկվողների գերակշիռ մասի մոտ ապագայի հետ կապը նշանակում է, որ վերջինիս բավարարման հույսերն ապագայի հետ են կապվում:

Ուսումնական գործունեության մեջ առաջադիմության բարձր մակարդակ ունեցող փորձարկվողների մոտ առաջատար գործունեությունն ընկալվում է որպես գիտելիքների, ինֆորմացիայի, հաջողության աղբյուր: Վերջիններիս մոտ հաջողության պահանջումնքը բավարարված է ներկայում: Սա ենթադրում է գործունեության նկատմամբ դրական վերաբերմունք, հաջողություններից հուզական բավարարվածության ապրում, իմացական պահանջումքների բավարարման արդյունքում կոզնիտիվ և ինտելեկտուալ զգացմունքների դրսևորում: Այս դեպքում արտահայտվել է

փորձարկվողների մասնագիտական կողմնորոշման բարձր մակարդակը, մասնագիտական գիտելիքներ ստանալու և մասնագիտությամբ աշխատելու ձգտումն ու պատրաստակամությունը, իսկ մյուսների մոտ հաջողությունը զուգորդվել է «իդեալական ես»-ի հետ և տեղորոշվել ապագայում: Երաժիշտների խմբում հաջողությունը մի կողմից հարաբերվում է ստեղծագործության, մյուս կողմից՝ նյութական բարեկեցության հետ, այսինքն՝ ինքնադրսևորման և նյութական պահանջմունքները միահյուսվում են:

Փորձարկվողների միջին զանգվածի մոտ ուսումնական գործունեությունն իմացական պահանջումքներով ու հետաքրքրություններով դրդապատճառավորված չէ, պարտականությունների ուղղակի կատարում է: Հոգսեմանտիկ վերլուծությունից պարզվել է, որ փորձարկվողների մոտ գիտելիքներն ընկալվում են որպես հաջողության, իշխանության, ազատության, սոցիումում ցանկալի դրություն ապահովելու, սոցիալական դիրքի ամրապնդման երաշխիք, մրցակցության աղբյուր: Սա վկայում է, որ փորձարկվողների պահանջմունքային համակարգում առանցքային են ընդունման և ճանաչման արժանանալու պահանջումքները: Արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ փորձարկվողների ակտուալ պահանջումքները կապված են ընկերական շփման, գիտելիքների ձեռքբերման, ազատության և անվտանգության, նյութական միջոցների ապահովման հետ: Ներկայում հիմնային պահանջումքների բավարարվածության դեպքում հիմնային պահանջումքները համընկնում են ակտուալ պահանջումքների հետ:

Փորձարկվողների սեմանտիկ դաշտում ապագան զուգորդվում է սիրո, ընտանիքի, աշխատանքային գործունեության հետ: Աշխատանքը փորձարկվողների գիտակցության մեջ զուգորդվում է վաստակի, նյութական բարեկեցության ապահովման, սոցիալական դիրքի և ինքնադրսևորման միջոցների հետ:

Անձնային և մասնագիտական ուղիվածության բարձր մակարդակ ունեցող փորձարկվողների սեմանտիկ դաշտում «գիտելիք», «կրթություն», «աշխատանք» հասկացությունները հարաբերակցվում են ինքնիրացման ձգտման բարձր մակարդակի հետ:

Փորձարկվողների սեմանտիկ դաշտում ուսումնական գործունեության և «տհաճություններ», «կոնֆլիկտներ», «գրգռվածություն» հասկացությունների հետ կապը վկայում է, որ այս դեպքում գործունեությունը կապված է անհաջողությունների, հուզական լարվածության, բացասական ապրումների հետ: Գործունեության և բացասական հուզական ապրումների միջև կապը վկայում է գործունեությունից խուսափման մասին: Վերջինս, ընդհանուր առմամբ, գործունեության և սոցիալական միջավայրի պայմաններին ադապտացիայի ցածր մակարդակի ցուցանիշ է:

Արդյունքների անհատական ուսումնասիրություններից պարզվել է, որ «իմ ուսումը» հասկացությունը տհաճ գույնով (սև) նշած փորձարկվողների մոտ զուգորդվել է «տհաճություններ», «անհաջողություններ», «տխրություն», «վախ», «սպառնալիք», «մրցակցություն» հասկացությունների հետ: Գործունեության արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ այս փորձարկվողների մոտ

առաջադիմության միջին ցուցանիշի անկում է գրանցվել ադապտացիոն գործընթացի ավարտին: Հավանաբար, գործունեության մեջ անհաջողություններն ու հուզական անբավարարվածությունն են պատճառ հանդիսացել, որ «իմ ուսումը» հասկացությունը զուգակցվել է բացասական հույզերի հետ: Տվյալների անհատական վերլուծությունից պարզվել է, որ նման արդյունքներ արձանագրվել են նաև այն փորձարկվողների մոտ, որոնք շրջափոխման արդյունքում ուսուցման անվճար համակարգից տեղափոխվել են վճարովի համակարգ, ինչը, բնականաբար, ուղեկցվել է բացասական հուզական ապրումներով: Տրավմատիկ ապրումներն արտահայտվել են սեմանտիկ դաշտում այս հասկացությունների միավորմամբ, կրթության նկատմամբ բացասական վերաբերմունքի, մերժման հետ:

Այսպիսով՝ պահանջմունքների ուսումնասիրության հոգեսեմանտիկ մեթոդը կարելի է օգտագործել ինչպես մոտիվացիայի անհատական ախտորոշման, այնպես էլ խմբային ցուցանիշների բացահայտման համար՝ գործունեության, ակտիվության արդյունավետության բարձրացման, շտկողական աշխատանքների կազմակերպման նպատակով: Պահանջմունքային համակարգի հոգեսեմանտիկ ուսումնասիրության արդյունքում կարող ենք ընտրել հիմնային պահանջմունքների արտահայտվածության մակարդակի քանակական ախտորոշման համարժեք մեթոդիկա: Մեթոդիկայի կիրառությունն արդյունավետ է, քանի որ արդյունքում արտահայտվում են գիտակցության և ենթագիտակցության փոխհարաբերության դրսևորումները:

Գրականություն

1. Соломин И. Л., Современные методы психологической экспресс-диагностики и профессионального консультирования. СПб.: Речь, 2006, 172 с.
2. Столяренко Л. Д., Основы психологии. Практикум, Постов н/Д, Феникс, 2006, 704 с.
3. Ильин Е. П. Мотивация и мотивы.– СПб.: Питер, 2006, 512 с.

Изучение потребностей психосемантическим методом цветowych метафор

А. Аракелян

В статье представлены результаты экспериментов, полученные с помощью методики цветowych метафор. Проанализированы особенности системы потребностей студентов. Представлены базовые и актуальные потребности студентов.

The study of needs by color metaphors of psychosemantic method

A. Araqelyan

The results of the experiments got by using the method of color metaphors are presented in this article. The features of students needs are analysed here. The basic and actual needs of students are presented.

ԱՆՆԱ ՄԱՄՅԱԼ

ՄԱՐՄՆԻ ԽՆԱՄՔԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԴԻԴԱՊԱՏՃԱՌՆԵՐ. ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՛ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

«Մարմինը նման է ժամապահի, ով կանգնած է մարդու խոսքերի և գործողությունների հիմքում, խարխիս, որը ամրապնդում է մեզ այս աշխարհում և միաժամանակ միջոց է, որի օգնությամբ մենք տիրապետում ենք աշխարհին»:

Մերլո-Պոնտի

«Մարմին» հասկացությունը դեռևս անտիկ շրջանից մշտապես եղել է մարդկանց ուշադրության կենտրոնում, թեև կախված ժամանակաշրջանից մի շարք տարբեր, իսկ երբեմն նույնիսկ հակասող մոտեցումներ են ձևավորվել այս հասկացության վերլուծության համար:

Արդեն 20-րդ դարում մի շարք ուղղություններ իրենց ուշադրությունը բևեռեցին մարդու միմիայն մարմնական սկզբի վրա, և ստեղծվեցին մարմնականին վերաբերող մի շարք պրակտիկաներ: Այսօր մարդիկ ձգտում են առավել երկար լինելու երիտասարդ և որպես վերջինիս հասնելու միջոց են տեսնում մարմնի խնամքը: Հասարակությունը և մշակույթը բարձրացնում են մարմնի դերը և ստեղծում «ճիշտ» մարմնի գաղափար, որը համապատասխանում է սոցիումի կողմից սահմանված գեղեցկության որոշակի չափանիշներին: Իսկ չիտունելը այս չափանիշներին երբեմն ոչ թե չեզոք է ընկալվում, այլ անգամ բացասական: Սրա հիման վրա էլ ավելի է կարևորվում մարմնային պրակտիկաների դերը և այժմ օրեցօր նոր ծառայություններ են ստեղծվում, որոնք ուղղված են մարմինը երիտասարդ, գեղեցիկ և առողջ պահելուն, այն խնամելուն և ստեղծված կատարյալ կերպարին համապատասխանեցնելուն:

Սրանց կարելի է դասել սպորտը, գեղեցկության սրահները, նաև պլաստիկ վիրահատությունները: Այս պրակտիկաները կրում են մասսայական բնույթ, և այդ իսկ պատճառով առավել կենտրոնական է դառնում մարմին հասկացության բազմակողմանի ուսումնասիրությունը գիտության մեջ: Այս համատեքստում Բ. Մարկովը նշում է, որ հաշվի առնելով մշակույթի փորձը՝ հասարակությանը անհրաժեշտ է արհեստական, սիմվոլիկ մարմինների ստեղծում: Արդյունքում բավական արագ ձևափոխում է «բնական» մարմինը:

Այսպես, շեշտադրելու, ինչպես նաև եզրութապես բնական և մշակութային մարմինների տարբերակման նպատակով հիմնավորված է տարբեր եզրույթների օգտագործումը՝ «մարմին» և «մարմնականություն»:

«Մարմին» հասկացությունը ինչպես առօրյա, այնպես էլ գիտական բառապաշարում նշանակում է նյութական օբյեկտ, որն ունի որոշակի բնական բնութագրեր և հատկություններ, որոնք գոնե արդեն այդ պատճառով բնական ընկալման ուսումնասիրության առարկա են հանդիսանում: Ըստ Տխոստովի, «մարմնականություն» ասելով հասկանում ենք ոչ թե մարդու մարմինը որպես այդպիսին, այլ

նրա վերափոխությունը՝ «ձեռքբերված» վիճակը: Դա մարմինն է «մարդկայնացված», որն իր սկզբնական, բնական բնութագրերին ավելացրել է այն որակները և հատկությունները, որոնք ծագում են սոցիոմշակութային միջավայրում, և որոնք որոշում են նրա գոյության պայմանները, իմաստավորման բնույթը, նրա օգտագործման և ձևափոխման սկզբունքները: «Մարմին» և «մարմնականություն» հասկացության տարբերակումը կապված է նաև այն հանգամանքի հետ, որ առաջինը հաճախ զուգորդվում է որևէ կայուն, սահմանափակված անատոմոֆիզիոլոգիական օբյեկտի հետ: «Մարմնականություն» հասկացությունը օգտագործվում է ոչ միայն «սոմայի» բնութագրման համար, այլ նաև ներդնում է լրացուցիչ իմաստ՝ կապված մարմնի դինամիկ բնութագրի՝ նրա շարժողական ակտիվության հետ [7]:

Գեղեցկության ենթատեքստում վերջերս անգամ ստեղծվել է մի նոր ուղղություն, որը կոչվում է հոգեկոսմետոլոգիա: Վեջինիս համար հիմք է հանդիսացել այն փաստը, որ դեմքի և մարմնի դրական պատկերի ձևավորումը աջակցում է մարդու ինքնազգացողության լավացմանը: Լիսեցկին նշում է. «Հոգեկան պատկերները ապահովում են մարդու գիտակցության և մարմնի կապը: Երբ արտաքին և ներքին աշխարհները մշտապես չեն համապատասխանում, մարդը սկսում է կամ տառապել, կամ ձևափոխել աշխարհներից մեկը: Յուրաքանչյուր մարդ ունի կարևոր հոգեկան պատկեր՝ սեփական պատկերը: Նրա «տարածքում» հանդիպում են արտաքին և ներքին աշխարհները: Հոգեբանության մեջ, ինչպես նշեցինք, այս պատկերը նշվում է որպես «Ես»» [2, 8]:

Ֆիզիկական Ես-ի պատկերը՝ որպես Ես-կոնցեպցիայի բաղկացուցիչ, շատ է կարևորվում, անգամ համարվում է, որ վերջինս ձևավորվում է առաջինի հիման վրա: Հետևաբար, ֆիզիկական Ես-ը որոշակիորեն ներգործում է Ես-կոնցեպցիայի մյուս բաղադրիչների վրա, համարվում հիմք՝ մնացածի ձևավորման և վերափոխման համար: Այդ իսկ պատճառով խիստ կարևորվում են այն պրակտիկաները, որոնք ուղղված են ֆիզիկական Ես-ի ձևափոխմանը:

Մարմնի խնամքի հիմքում է ընկած և սերտ կապված է վերջինիս հետ առողջություն հասկացությունը: Վերաբերմունքը առողջությանը անձի անհատական, ընտրական կապերի համակարգն է՝ կապված շրջապատող իրականության հետ, որը աջակցում կամ վնասում է առողջությանը, նաև որոշում է անհատի կողմից իր ֆիզիկական և հոգեկան վիճակի գնահատումը: Վերաբերմունքը առողջությանը՝ ինքնապաշտպանողական վարքի մասնիկներից է: Այն ներառում է երեք բաղադրիչ՝ կոգնիտիվ, հուզական, դրդապատճառավարքային [5]:

Կարող ենք ասել, որ միևնույն պրակտիկաները կարող են կիրառվել ինչպես արտաքին տեսքի, այնպես էլ առողջության բարելավման նպատակով: Եվ հենց այս կետում ծագում է «առողջություն, թե՛ գեղեցկություն» հարցը:

Օրինակ, որպես մարմնի խնամքի տարատեսակ այժմ խիստ տարածված են SPA ծառայությունները: Վերջինս լատիներեն արտահայտության՝ «Sanus per Aquam» կամ «Sanitas per Aquam» հապավումն է, ինչը նշանակում է «առողջություն ջրի միջոցով», այսինքն՝ ջրաբուժություն: Սակայն այժմ այս պրակտիկայի կիրառման նպատակը ևս դարձել է ոչ միանշանակ:

Այսպես, ստորև կներկայացվեն մարմնի խնամքի դրդապատճառների՝ մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները: Հետազոտությանը մասնակցել են անձինք, ովքեր օգտվում են մարմնի խնամքին ուղղված ծառայություններից: Նպատակահարմար գտանք համակազմը բաժանել երկու հիմնական խմբի: Վերջիններիս տարանջատման համար հիմք է հանդիսացել այն, թե ինչ տիպի ծառայություններից են օգտվում հետազոտվողները իրենց մարմնի խնամքի համար: Ընտրել ենք այն ծառայությունները, որոնք անմիջապես չեն ենթադրում առողջությանը կամ գեղեցկությանը ուղղված պրակտիկաներ, այլ առաջին հերթին շեշտադրում են մարմնին ուղղված աշխատանքը, մարմնի զգացողությունները: Այդ իսկ պատճառով առաջին խմբում ներառել ենք անձանց, ովքեր օգտվում են SPA ծառայություններից, իսկ երկրորդ խմբում ընդգրկել ենք անձանց, ովքեր օգտվում են մարզաառողջային համալիրի ծառայություններից, որը ներառում է մարզադահլիճ, լողավազան, ատրոֆիկա, այսինքն այն ամենը, ինչը ուղղված է ֆիզիկական որակների բարելավմանը, սակայն այստեղ ևս չենք կարող տալ «առողջություն, թե՛ գեղեցկություն» հարցի պատասխանը: Բացի այդ, մեր ընտրությունը պայմանավորված էր նաև նրանով, որ առաջինը մարմնի խնամքի պասիվ տիպ է, իսկ մյուսը՝ ակտիվ: Հետազոտական աշխատանքի իրականացմանը մասնակցել են 20–40 տարեկան անձինք, ովքեր օգտվում են մարզաառողջային համալիրի կամ SPA կենտրոնի ծառայություններից:


Մեր հետազոտական աշխատանքի ընթացքում փորձագիտական հարցման արդյունքում դուրս ենք բերել հետևյալ տվյալները.

մարզաառողջային համալիրի հաճախորդների կեսից ավելին կազմում են տղամարդիկ, իսկ SPA կենտրոնինը՝ կանայք: Սա բացատրվում է այն փաստով, որ առաջին դեպքում կանայք առավել զբաղված են, հատկապես կենցաղային գործերով, իսկ SPA կենտրոն հաճախող կանայք այդքան ծանրաբեռնված չեն,

երկու դեպքում էլ նշվում է այն փաստը, որ կան մարդիկ, ովքեր հստակ գալիս են նիհարելու կամ առողջական վիճակի բարելավման նպատակով և երկրորդ տիպը՝ հաճախում են զուտ հաճելի ժամանակ անցկացնելու նպատակով,

երկու դեպքում էլ նշվում է այն փաստը, որ ընդհանուր ինքնազգացողության բարելավումը ևս հաճախ հիմք է հանդիսանում մարմնի խնամքին ուղղված ծառայությունների ընտրության հարցում:

Այսպես, առանձնացրել ենք հիմնական դրդապատճառները, որոնցից ելնելով մարդիկ խնամում են իրենց մարմինը, դրանք են ժամանցը, գեղեցկությունը, ֆիզիկական ինքնազգացողությունը, առողջությունը և պրեստիժը (սոցիալական հեղինակությունը): Հինգ հիմնական դրդապատճառների միջին ցուցանիշների համեմատությունը ունի հետևյալ տեսքը.



Նկար 1. Մարմնի խնամքի հիմնական դրդապատճառների միջին ցուցանիշները մարզաառողջային համալիր SPA կենտրոնի հաճախող անձանց մոտ (N=50)

Ինչպես երևում է, որպես մարմնի խնամքի հիմնական դրդապատճառ կարող ենք նշել ֆիզիկական ինքնազգացողությունը: Այսինքն, մարդիկ նախևառաջ իրենց մարմինը խնամում են սեփական ինքնազգացողության բարելավման համար, որը ներառում է, օրինակ, ինքն իրեն առույգ, ուժեղ, հանգիստ զգալը: Առաջնահերթ է ոչ թե արտաքին տեսքը, ներկայանալի լինելը սոցիալական միջավայրում, այլ ինքնազգացողությունը: Հաջորդը՝ առողջությունն է, որի դեպքում մարմնի խնամքի նպատակն է առողջ լինելը կամ հիվանդությունների կանխարգելումը: Իսկ գեղեցկությունը ըստ արտահայտվածու-

թյան երրորդ տեղում է, սակայն միջին ցուցանիշով գրեթե հավասար է առողջությանը: Ընդհանուր տվյալների վերլուծության արդյունքում երևում է, որ ամենաթույլն է արտահայտված պրեստիժը՝ որպես մարմնի խնամքի դրդապատճառ: Պարզվում է, որ այս դրդապատճառները նաև որոշակիորեն փոխկապակցված են, ինչը դուրս ենք բերել կորելյացիոն վերլուծության միջոցով: Վերջինս նաև թույլ է տվել փոխկապակցվածության դեպքում հասկանալ այդ դրդապատճառների արտահայտվածության հարաբերությունը:

Ստորև ներկայացված են այն կապերը, որոնք առկա են դրդապատճառների միջև.

Աղյուսակ.

Մարմնի խնամքի հիմնական դրդապատճառների վիճակագրական ցուցանիշները մարզաառողջային համալիր և SPA կենտրոն հաճախող անձանց մոտ (N=50)

Ժամանց	գեղեցկություն	ֆիզիկական ինքնազգացողություն	առողջություն	պրեստիժ	պրեստիժ
Ժամանց	–	,107	,133	,074	,496**
գեղեցկություն	,107	–	,395**	,495**	,553**
ֆիզ. ինքն.	,133	,395**	–	,466**	,352*
առողջություն	,074	,495**	,466**	–	,270
պրեստիժ	,496**	,553**	,352*	,270	–


*. p<0.05, **. p<0.01

Նշանակալի կապ է նկատվում պրեստիժի և ժամանցի միջև, ինչը կարելի է բացատրել նրանով, որ սոցիալական հեղինակության, այսինքն պրեստիժի բարձրացման համար անհրաժեշտ են նաև որոշակի սոցիալական հարաբերություններ, միջանձնային շփում: Անդրադառնալով «առողջություն, թե՛ գեղեցկություն» հարցին նշենք, որ առողջությունը կապված է գեղեցկության և ֆիզիկական ինքնազգացողության հետ: Իսկ գեղեցկությունը կապված է ֆիզիկական ինքնազգացո-

ղության, առողջության և նաև պրեստիժի հետ: Ֆիզիկական ինքնազգացողությունը, իր հերթին, կապված է առողջության, գեղեցկության և պրեստիժի հետ: Վերջիններս ևս ուղիղ կորելյացիայի մեջ են, և մեկի աճը բերում է մյուսի աճին: Ստացվում է, որ ֆիզիկական ինքնազգացողությունը բավական մոտ է գեղեցկությանը: Ինչպես նկատեցինք, թեև առողջության և գեղեցկության միջև նկատվում է վիճակագրական նշանակություն ունեցող կապ, սակայն կա ևս մեկ դրդապատճառ՝ ֆիզի-

կական ինքնազգացողությունը, որը կապված է երկուսի հետ, միավորում է դրանք:

Հաջորդը դիտարկենք մարզաառողջային և SPA կենտրոնի հաճախորդ անձանց դրդապատճառների միջին ցուցանիշների հարաբերությունը.




Սկար 2. Մարմնի խնամքի հիմնական դրդապատճառների հարաբերությունը մարզաառողջային համալիր (N=30) և SPA կենտրոն (N=20) հաճախող անձանց մոտ

Հետաքրքիր է այն փաստը, որ երկու խմբերի համար էլ առաջնային դրդապատճառ է հանդիսանում ֆիզիկական ինքնազգացողությունը՝ հավասար արտահայտվածությամբ: Մարզաառողջային համալիր հաճախող անձանց համար, թեև ֆիզիկական ինքնազգացողությունը առաջնային է, սակայն գեղեցկությունը, ֆիզիկական ինքնազգացողությունը և առողջությունը գրեթե հավասար արտահայտվածություն ունեն: Սա բացատրվում է նրանով, որ մարմնի խնամքի այս տիպը ընտրելիս մարդիկ առաջնորդվում են ոչ թե մեկ, այլ մի քանի դրդապատճառներով: SPA կենտրոն հաճախող անձանց դեպքում դրդապատճառների արտահայտվածության տարբերությունը ակնհայտ է: Բացի այդ՝ միջին ցուցանիշների համեմատություն ենք իրականացրել է- գործակցի միջոցով: Վերջինիս արդյուն-

քում պարզվում է, որ վիճակագրական նշանակություն ունեցող տարբերություն կա այս երկու խմբերի միջին ցուցանիշների միջև ըստ հետևյալ դրդապատճառների՝ ժամանցի, գեղեցկության և պրեստիժի, որոնք շատ ավելի արտահայտված են մարզաառողջային համալիրի ծառայություններից օգտվող անձանց մոտ:

Ստորև ներկայացնենք դրդապատճառների արտահայտվածությունը՝ կախված սեռից.



Սկար 3. Մարմնի խնամքի հիմնական դրդապատճառների հարաբերությունը մարզաառողջային համալիր և SPA կենտրոն հաճախող կանանց (N=25) և տղամարդկանց (N=25) մոտ

Վերլուծելով մարմնի խնամքի կանանց դրդապատճառները՝ պարզվում է, որ ևս առաջնահերթ է ֆիզիկական ինքնազգացողությունը, որին հաջորդում է գեղեցիկ լինելու դրդապատճառը: Իսկ գեղեցկությունն ունի գրեթե հավասար արտահայտվածություն, ինչ առողջությունը: Կարող ենք եզրակացնել, որ կանանց համար մարմնի խնամքի դրդապատճառը հստակ արտահայտված չէ, այլ առավել բազմաբաղադրիչ է՝ ներառում է մի քանի դրդապատճառ՝ ֆիզիկական ինքնազգացողությունը, առողջությունը և գեղեցկությունը:

Վերլուծելով տղամարդկանց մարմնի խնամքի դրդապատճառների արդյունքները՝ նկատվում է, որ տղամարդկանց համար

ևս առաջնահերթ է ֆիզիկական ինքնագ-
գացողությունը, սակայն, ի տարբերություն
կանանց, այս խմբի մոտ ըստ կարևորու-
թյան երկրորդ տեղում է առողջությունը,
իսկ գեղեցկության դրդապատճառը բա-
վականին թույլ է արտահայտված: Համե-
մատության արդյունքում կարելի է նաև
նշել, որ, առհասարակ, կանանց մարմնի
խնամքի դրդապատճառները ըստ բոլոր
ցուցանիշների (բացառությամբ ժամանցի)
շատ ավելի արտահայտված են: Հետաքր-
քիր է, որ ըստ t-գործակցի միջոցով իրա-
կանացված վերլուծության՝ նշանակալի
տարբերություն է նկատվում գեղեցկության
և առողջության դրդապատճառների միջին
ցուցանիշների միջև: Այսինքն, վերջիններս
նշանակալիորեն ավելի են կարևորվում
կանանց խմբում:

Այսպես, եկանք այն եզրակացության,
որ մարմնի խնամքը պայմանավորվում է

հինգ հիմնական դրդապատճառներից՝
ժամանց, գեղեցկություն, ֆիզիկական
ինքնագգացողություն, առողջություն և
պրեստիժ, որևէ մեկով: Հետազոտության
արդյունքում պարզ դարձավ, որ այդ հիմ-
նական դրդապատճառներից մարմնի
խնամքի առաջնային դրդապատճառ է
ֆիզիկական ինքնագգացողությունը, որը
բազմաբաղադրիչ է և մի կողմից կապ-
ված է ներքին ինքնագգացողության՝
առողջության հետ, իսկ մյուս կողմից
ունի *արտաքին* ասպեկտ՝ կապված է
ներկայանալի լինելու՝ գեղեցկության և
պրեստիժի հետ:

Այսինքն, «գեղեցկություն, թե՛ առող-
ջություն» հարցադրումը լուծվում է նոր
դրդապատճառի՝ *ֆիզիկական ինքնա-*
գգացողության առաջացմամբ, այդ իսկ
պատճառով վերջինս դրդապատճառնե-
րից ամենաարտահայտվածն է:

Գրականություն

1. Кольшко А. М., Психология самоотношения. Учебное пособие, Гродно: ГрГУ, 2004, 102 с.
2. Лисецкий К. С., Психокосметология: теория и практика/ К.С. Лисецкий, Самара: Изд-во «Универс групп», 2006, 138 с.
3. Марков Б. В., Храм и рынок. Человек в пространстве культуры – Научное издание. Изд-во «АЛЕТЕЙЯ» Санкт-Петербург, 1999.
4. Мацумото Д., Психология и культура. 1-ое издание, 2003, 720 с.
5. Психология здоровья: Учебник для вузов/Под ред. Г. С.Никифорова, СПб: Питер, 2006, 607 с.
6. Суэми В., Фернхем А., Психология красоты и привлекательности / Пер. с англ. под ред. Е. И. Николаевой. – СПб.: Питер, 2009 240с., ил. – (Серия «Мастера психологии»)
7. Тхостов Ф. Ш., Психология телесности, М., Смысл, 2002, 287 с.
8. Фрейджер Р., Фэйдимен Д., Теории личности и личностный рост. 4-е издание. Пер с англ. М Мир, 2004, 608 с.
9. Body image: understanding body dissatisfaction in men, women,
10. and children / Sarah Grogan. – 2nd ed. 2007, 250 p.
11. Ron Kurtz, Hector Presteria – The body reveals: An illustrated guide to the psychology of the body
12. <http://www.animaclan.com/cltt13r3part1.html>
13. <http://telesnost.ru>

Мотивы ухода за телом: красота или здоровье

А. Мамян

Человеческое тело, как объект изучения всегда находилось в центре внимания ученых разных специальностей и простых людей. Сегодня особенно большое внимание уделяется вопросу телесности.

В статье рассматриваются основные мотивы ухода за телом, которые практически не изучены в психологии. Изучается вопрос, какой из мотивов первичней: красота или здоровье. Поскольку преобразование физического–Я влияет не только на внешние данные, но и на внутренние психологические особенности человека, необходимо изучить мотивы ухода за телом, и на основании полученных данных более эффективно организовать услуги по уходу за телом. В статье также представлены результаты исследований мотивов ухода за телом людей, которые пользуются услугами SPA центров и спортивно–оздоровительных комплексов.

The motives of the body care: Beauty or Health

A. Mamyan

The human body, as an object of study, has always been the center of attention of scientists from different specializations, as well as of ordinary people. Especially today, much attention is paid to the issue of cor.

The article considers the main motives of the body care, which have hardly been studied in psychology. We study the question of which of the motives is primary: Beauty or Health. Since the transformation of the physical self not only affects appearance, but also on the internal characteristics of a person, it is necessary to examine the motives of the body care, and on the basis of the data more efficiently organize services for the body care. The article also presents the studies results of the body care motives of people, who use the services provided by SPA and fitness centers.

ПРЕДСТАВЛЕНИЯ О ЗДОРОВОЙ ЛИЧНОСТИ В ТЕОРИЯХ РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ

Современный этап развития психологических знаний о человеке характеризуется необходимостью расширения и углубления понимания психологии развития человека. В психологической науке, как и в других направлениях, имеющих дело с человеком (человеческий фактор) четко прослеживается тенденция к созданию целостного учения о человеке, опирающегося не только на эмпирические данные психологических исследований, но и на богатый научно-практический багаж накопленных знаний о его природе в различных областях.

Исследования в области психологии личности начались очень давно, и они имеют свою историю. По крайней мере, можно выделить три периода развития психологии личности: философско-литературный, клинический и экспериментальный. Первый период исследований начался с работ древних мыслителей и продолжался до начала XIX в. Основной акцент в философско-литературный период изучения личности ставился на нравственной и социальной характеристиках человека. Поэтому первые определения личности были достаточно широкими. Они включали в себя все то, что есть в человеке и что он может назвать своим, личным: его биологию, психологию, поведение, этно-культуральные особенности, мораль и нравственность. Такой подход к пониманию личности отчасти сохранился и в более позднее время.

В первые десятилетия XIX в. наряду с философами проблемами психологии личности начали заниматься врачи-психиатры. Они первыми стали вести систематические наблюдения за личностью больного в клинических условиях, изучать историю его жизни для того, чтобы лучше понять его поведение. При этом делались не только профессиональные заключения, связанные с диагностикой и лечением душевных заболеваний, но и общенаучные выводы о природе человеческой личности. В клинический период изучения личности представление о ней как об особом феномене было сужено по сравнению с философско-литературным периодом. В центре внимания психиатров оказались особенности личности, обычно обнаруживающиеся у больного человека. В дальнейшем было установлено, что многие обнаруженные ими особенности есть практически у всех здоровых людей, но у них эти особенности выражены умеренно, а у больных, как правило, гипертрофированы. Это относится, например, к тревожности и ригидности, заторможенности и возбудимости. Определения личности врачами-психиатрами давались в терминах (эпилептоидная, шизоидная, невротическая), которые были переняты затем психологами и с помощью которых стали описать и вполне нормальную, и патологическую, и акцентуированную (как крайний вариант нормы) личность. Тем не менее и данный подход с точки зрения психологии представляется несовершенным. Дело в

том, что такие определения для целостного описания нормальной личности являлись слишком узкими [6].

Следует отметить, что вплоть до начала XX в. философско–литературный и клинический подходы к исследованию личности были единственными, в рамках которых предпринимались попытки проникновения в сущность данного феномена. Лишь в первые десятилетия XX в. личность стали изучать психологи, которые до этого времени главным образом занимались исследованием познавательных процессов и состояний человека. Поскольку начало XX в. характеризовалось бурным развитием экспериментальных исследований в психологии, была предпринята попытка ввести в них математико–статистическую обработку данных с целью точной проверки гипотез и получения достоверных фактов. В связи с этим первоочередной задачей для психологов на долгие годы стала разработка надежных и валидных тестовых методов исследования нормальной личности [6].

С. Л. Рубинштейн (1989) различал в структуре личности темперамент, характер, способности, направленность и самосознание. Но А.Н. Леонтьев (1989), основоположник теории деятельности, считал, что личность – исключительно социальная сущность человека, и поэтому темперамент, характер, способности, а также знания человека не входят в состав личности в качестве ее подструктур; они составляют лишь условия формирования этого социального образования.

Б. Г. Ананьев (2008) рассматривал личность как современницу определенной эпохи, которая наделяет ее множеством

социально–психологических свойств. К их числу он относил принадлежность личности к определенному классу, национальности, профессии и пр. А.В.Петровский (1982) охарактеризовал личность в системе межличностных отношений, в связи с чем им были выделены три аспекта личности: интраиндивидуальный, который отражает свойства, присущие самому субъекту; интериндивидуальный, рассматривающий особенности взаимодействия личности с другими людьми; и метаиндивидуальный, описывающий воздействие данной личности на других людей.

Личность, по Бехтереву, – это человек со своим индивидуальным психическим укладом в единстве умственных и душевных качеств, с активным отношением к окружающему его внешним условиям, способный к управлению своим поведением и собственной деятельностью. Главное, что организует личность, – это ее направленность, то есть то, что придает ее жизнедеятельности устремленный, нацеленный характер, что руководит мыслями, действиями и поступками [4].

В своей книге А.Тадевосян использовала рабочую концепцию, определив человека как волевое сознающее триединство (биологического, психического, социального). "Триединство" развивается, совершенствуется в постоянно меняющемся мире, флюктуирует вместе с физическими и социальными мирами, с миром собственных мыслей, чувств и созданной на их основе "субъективной психической реальностью", в которой человек живет, действует и проживает свою жизнь [10].

Существуют несколько наиболее популярных теоретических концепций здоро-

вой личности. Каждая концепция, созданная тем или иным автором или школой, имеет специфику – ядро, которое и рассматривается авторами как «доминирующим» в развитии здоровой личности.

Рассмотрим основные теории.

Теория развития личности

3. Фрейд. Психоаналитическая теория развития основывается на двух предпосылках. Первая, или генетическая предпосылка, делает упор на том, что переживания раннего детства играют критическую роль в формировании взрослой личности. Фрейд был убежден в том, что основной фундамент личности индивидуума закладывается в очень раннем возрасте, до пяти лет. Вторая предпосылка состоит в том, что человек рождается с определенным количеством половой энергии (либидо), которая затем проходит в своем развитии через несколько психосексуальных стадий, коренящихся в инстинктивных процессах организма. У здоровой личности, по Фрейду, существует динамический баланс между силами «Я», связанными с реальностью и, в значительной степени, осознанными, силами «сверх-Я», включающими моральные аспекты, и силами «Оно», представляющими хранилище бессознательных влечений и скрытых, подавленных желаний [11].

Аналитическая теория личности К.

Юнга. Он рассматривал основные проблемы здоровья и патологии в аспекте высшей целостности, к обретению которой (часто неосознанно) стремится человек и которая бесконечно превосходит ограниченность индивидуального сознания. Юнг подчеркивал динамические отношения между целостностью как наиболее глу-

бинным бессознательным эталоном, формирующим Я-сознание и определяющим перипетии личностного развития, с одной стороны, и ограниченным Эго (сознательным Я) индивидуума, – с другой. Ему удалось обнаружить в глубинах коллективного бессознательного универсальную, общую для всех людей, интегрирующую структуру психики, которую обозначил как Самость, центральный архетип целостности и порядка. Предназначение человека состоит в обретении высшей психической и духовной целостности, которая потенциально заключена в архетипе Самости. Обретенная самость — это примирение исконных внутриличностных противоположностей, интеграция сознательного и бессознательного, индивидуального и коллективного. Обретение Самости через процесс самореализации, согласно Юнгу, является главной целью человеческой жизни. Когда это происходит, человек ощущает единство, гармонию и целостность, иными словами, он психически здоров [3].

Индивидуальная психология личности А.Адлера. Развитие личности по Адлеру проистекает из универсального стремления к успеху, совершенству, а также чувства общности, готовности сотрудничать с другими людьми для достижения общих целей. Обсуждая главные препятствия для роста и развития человека, Адлер прежде всего отмечал три негативных обстоятельства, связанных с детством: органическую неполноценность, избалованность и заброшенность. Он подчеркивал, что все неврозы взрослых имеют свои корни в попытках преодолеть чувство неполноценности, которое приводит к все увеличивающейся изоляции и отчуждению от

окружающего мира. Неврозы и фактически все другие психологические проблемы возникают, когда мы стараемся добиться личного превосходства вместо того, чтобы стремиться к здоровому конструктивному поведению [1].

Теория развития личности К. Роджерса. Первым и непеременимым условием здорового развития личности Роджерс считал безусловное «позитивное внимание» к ребенку, что предполагает безоговорочное проявление к нему любви и притяжения его, особенно в раннем детстве. Он также рассматривает здоровье в аспекте естественного личностного развития, роста — как атрибут свободно развивающейся и открытой опыту личности. Он вводит понятие конгруэнтности, отражающее способность личности реагировать и действовать, искренне, открыто выражая свои подлинные чувства и установки. Часто человек пытается скрыть или фальсифицировать их, желая получить одобрение от окружающих, и такая неконгруэнтность (неподлинность) препятствует его самореализации, негативно сказываясь и на душевном здоровье. С другой стороны, защищаясь от неприятных и болезненных переживаний, человек склонен отрицать негативные стороны жизни, лишая себя полноты жизненного опыта. Роджерс полагал, что «человек восстанавливает психическое здоровье, возвращая себе подавлявшиеся и отрицаемые части своего «Я» и ассимилируя негативные аспекты жизненного опыта [3].

В представлении Роджерса здоровая личность может быть охарактеризована такими чертами: открытость переживанию, жить полно и насыщенно в каждый

момент существования, доверие к самому себе, чувство свободы в мыслях и поступках, креативность [11].

Теория развития личности А. Маслоу. Маслоу провозгласил основным критерием здоровья «полную актуализацию возможностей человека», или «самоактуализацию». Согласно его точке зрения, «высочайшие порывы человеческой души практически всегда недооценивались», а «человеческая природа далеко не так плоха, как о ней думают». И именно те люди, которые достигли вершин самоактуализации, могут расцениваться как живые эталоны психического здоровья [7].

Таким образом, согласно концепции Маслоу, здоровый человек — это прежде всего счастливый, живущий в гармонии с самим собою, не ощущающий внутреннего разлада, защищающийся, но первым ни на кого не нападающий и пр. «Психически здоровый индивид характеризуется зрелостью и высокой степенью самоактуализации» [7].

Здоровый человек, согласно такому подходу, должен рассматриваться во всей совокупности его биологических, психологических и духовных проявлений.

Теория черт Г. Олпорта. Олпорт дал наиболее точное определение личности: "Личность — это динамическая организация тех психофизических систем внутри индивидуума, которые определяют характерные для него поведение и мышление". Выражение "психофизические системы" указывает на то, что в описании личности следует учитывать как элементы "разума", так и элементы "тела". Он вводит новый термин — проприум. По Олпорту, проприум охватывает все аспекты личности,

способствующие формированию чувства внутреннего единства. Олпорт видел качественную разницу между зрелой, здоровой и незрелой, или невротической, личностью. Он полагал, что личностный рост — это непрерывный, продолжающийся всю жизнь процесс становления. В понимании Олпорта, психологически зрелый человек характеризуется шестью чертами: зрелый человек имеет широкие границы Я, зрелый человек способен к теплым, сердечным социальным отношениям, зрелый человек демонстрирует эмоциональную стабильность и самопринятие, зрелый человек демонстрирует реалистическое восприятие, опыт и притязания, зрелый человек демонстрирует способность к самопознанию и чувство юмора, зрелый человек обладает цельной философией [11].

Психосоциальная теория развития

Э. Эриксона. Истоки личностного здоровья Эриксон видел в базовых предпосылках когнитивного и социального развития ребенка.

"...Личность развивается в соответствии с этапами, преддетерминированными в готовности человеческого организма побуждаться расширяющимся кругом значимых индивидов и социальных институтов, осознавать их и взаимодействовать с ними" [12, с. 102]. Эриксон, рассматривая становление человека как поэтапный про-

цесс, включающий определенные стадии с характерными для них кризисами, наглядно показывает, что самой логикой человеческого развития личность периодически подводится к выбору между зрелостью, здоровьем — и регрессом; личностным ростом, самоопределением — и болезнью, неврозом. С точки зрения Эриксона, человек, принимая вызов в ходе каждого психосоциального кризиса, получает шанс к личностному росту и расширению своих возможностей. Это указывает на то, что теория Эриксона предполагает наличие внутренних связей между личностным ростом и здоровьем [11].

Հատկանշական է, որ երբ երեխաները տազնապային են չափահասների նկատմամբ, նրանք տազնապային են երեխաների նկատմամբ ևս: Իսկ երեխաների հանդեպ տազնապայնությունը փոխկապված է թշնամանքի հետ: Կորելացիա կա չափահասների հանդեպ թշնամության և երեխաների հանդեպ տազնապայնության, թշնամանքի, հակահասարակական կամ շեղվող վարքի միջև:

«Անբավարար ենթարկվողականությունը հասարակական նորմերին» կորելացվում է երեխաների հանդեպ թշնամանքի, շրջապատի անբարենպաստ պայմանների և հոգեկան զարգացման հապաղման նշանների առկայության հետ:

Հուզական լարվածությունը փոխկապված է շրջապատի անբարենպաստ պայմանների, հոգեկան զարգացման հապաղման և օրգանական խանգարումների հետ:

Օրգանական խանգարումների, մարմնական թերությունների առկայության դեպքում երեխաներն ավելի ընկալունակ են շրջապատի անբարենպաստ պայմանների նկատմամբ:

Երեխաների մոտ հոգեկան զարգացման հապաղման նշանները կորելացվում

են հիվանդությունների, օրգանական խանգարումների, մարմնական թերությունների և այլ երեխաների հանդեպ թշնամանքի հետ:

Այսպիսով, վերը նշված կորելացիոն կապերի բազմազանությունը վկայում է, որ «դժվար» կամ չհարմարվող երեխաների մոտ դրսևորվող սինդրոմները փոխկապված են և մեկը մյուսով պայմանավորված, ու եթե ուսուցիչը նկատում է որևէ սինդրոմի ուժեղ դրսևորում, ապա նա իրազեկ է դառնում այդ և այլ սինդրոմների միջև փոխներգործությանը:

Հետազոտությունն իրականացնելիս ի սկզբանե մեր նպատակն էր ոչ միայն բացահայտել աշակերտների դպրոցական հարմարման առանձնահատկությունները, այլ նաև նպաստել, որ դպրոցական հոգեբանության բնագավառի գիտելիքները ներառվեն մանկավարժների մասնագիտական գործունեության մեջ և նրանց մտածողության համակարգի մաս դառնան: Հենվելով հետազոտության արդյունքների վրա՝ ուսուցիչների հետ կազմակերպեցինք խորհրդատվական բնույթի մի քանի հանդիպումներ, որոնց ընթացքում համապարփակ ձևով ներկայացրինք հետազոտության տվյալները և մեր կողմից կատարված եզրահանգումները, ինչպես նաև կատարեցինք գործնական առաջարկություններ թեմայի շրջանակներում: Եվ քանի որ ուսուցիչները աշակերտների հոգեբանական և անհատական առանձնահատկությունների, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների հետ կապված բազմաթիվ հարցեր ունեին, մեր խորհրդատվությունները արդյունքում վերածվում էին սեմինարի, որի ընթացքում կատարվում էր առանձին դեպքերի քննարկում, հարց ու պատասխան, փորձի փոխանակում ինչպես հոգեբան-ուսուցիչ, այնպես էլ ուսուցիչ-ուսուցիչ ձևաչափով: Ու-

սուցիչները նշում են, որ մանկավարժական գործունեության տարիների ընթացքում իրենց մոտ հոգեբանական բնույթի բազում հարցեր են կուտակվել, և որ դպրոցում ոչ միայն աշակերտներն են հոգեբանի կարիք զգում, այլ նաև ուսուցիչները: Հաճախակի են նաև ծնող-ուսուցիչ փոխհարաբերություններում առաջացող խնդիրները, և ուսուցիչներն անկեղծորեն խոստովանում են, որ երբեմն ի զորու չեն լինում ծնողների հետ կառուցողական հարաբերություններ ստեղծել: Այսպիսով, դպրոցական հոգեբանի գործունեության մեջ պետք է կարևորվի ոչ միայն աշակերտների հետ տարվող աշխատանքը, այլ նաև ուսուցիչներն և ծնողներն խորհրդատվություն տրամադրելը:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ ցանկանում ենք ընդգծել հետևյալ եզրահանգումները.

- ♦ աշակերտները դպրոց է հաճախում ոչ միայն կրթություն ստանալու համար. դպրոցը պարտավոր է նպաստել նրա անձի ձևավորմանը, դաստիարակությանը, հասարակական արժեքների, պատկերացումների փոխանցմանը, ադեկվատ սոցիալական վարքագծի մշակմանը (սոցիալական դերերի յուրացում, անկախության, ինքնուրույնության ձեռքբերում),
- ♦ տարրական դասարաններում աշակերտների մեծամասնությունը դպրոցի նկատմամբ դրական վերաբերմունք ունի, նրանց մոտ գերակշռում է դպրոցական նորմալ մոտիվացիան,
- ♦ մտավոր ունակությունների բարձր մակարդակը դեռևս չի ենթադրում դպրոցական մոտիվացիայի բարձր մակարդակ. լինում են դեպքեր, երբ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտն ունենում է դպրոցական ցածր մոտիվացիա,

- ♦ աշակերտների անձնային, հոգեբանական բնույթի և ֆիզիկական թերություններով պայմանավորված դժվարությունները միշտ չէ, որ հանգեցնում են դպրոցական ցածր մոտիվացիայի,
 - ♦ ներդպրոցական հարաբերություններում աշակերտները տազնապային վերաբերմունք են դրսևորում ուսուցիչների նկատմամբ,
 - ♦ հասակակիցների հետ հարաբերություններում աշակերտների մոտ նկատվում է հանդուրժողականության, տոլերանտության պակաս,
 - ♦ ուսուցիչներն ամենից հաճախ աշակերտին համարում են «դժվար» այն դեպքում, երբ նրա մոտ նկատում են ընկճվածություն, ինքնապարփակում, անվստահություն շրջապատի նկատմամբ, տազնապայնություն մեծահասակների հանդեպ,
 - ♦ բարձր հուզական լարվածություն ունեցող երեխաները, որպես կանոն, ուսուցիչների համար չեն համարվում «դժվար», քանի որ իրենց վարքով անհանգստություն չեն պատճառում,
 - ♦ ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում առկա է փոխվստահության պակաս. ուսուցիչը հաճախ չգիտի, թե ինչ մտահոգություններ, անհանգստություններ ունի աշակերտը, այդ պատճառով էլ չի կարողանում աշակերտի հետ ադեկվատ փոխհարաբերություններ կառուցել,
 - ♦ աշակերտի անձնային, անհատական և միջանձնային փոխհարաբերությունների առանձնահատկություններն ավելի լավ հասկանալու համար ուսուցիչը պետք է համագործակցի ծնողի հետ:
- Հիմնվելով հետազոտության ընթացքում մեր դիտարկումների և ստացված արդյունքների վրա՝ նպատակահարմար

ենք գտնում կատարելի հետևյալ առաջարկությունները. դպրոցներում ցանկալի է՝

- ♦ չհարմարված վարքագիծ դրսևորող աշակերտների հետ անցկացնել հոգեշտկողական աշխատանք՝ ուղղված նրանց հաղորդակցման հմտությունների զարգացմանը, ագրեսիվության, թշնամանքի դրսևորումների նվազեցմանը, հուզական լարվածության թուլացմանը,
- ♦ աջակցել մանկավարժներին «դժվար» կամ չհարմարված աշակերտների հետ տարվող մեթոդական աշխատանքի ընթացքում, անհրաժեշտության դեպքում անցկացնել հոգեբանական խորհրդատվություն. ինչպես

ցույց տվեց մեր փորձը, ինֆորմացիա ստանալով, իրազեկվելով աշակերտների հոգեբանական յուրահատկությունների, դպրոցական հարմարման առանձնահատկությունների մասին, ըստ այդմ ուսուցիչները վերակառուցում են իրենց փոխհարաբերությունները աշակերտների հետ,

- ♦ իրականացնել հոգեբանական խորհրդատվական աշխատանք ծնողների հետ,
- ♦ ամրապնդել ծնող-ուսուցիչ համագործակցությունը, օրինակ՝ դպրոցներում ժամանակ առ ժամանակ կազմակերպելով ծնող-ուսուցիչ հանդիպումներ:

Գրականություն

1. Հոգեբանական թեստեր, խմբ. Գ. Վարդանյան, Երևան, 1997:
2. Битянова М. Р., Азарова Т. В., Афанасьева Е. И., Васильева Н. Л. Работа психолога в начальной школе. М., 1998.
3. Овчарова Р. В., Справочная книга школьного психолога. М., 1996.
4. Психологическая диагностика. Под ред. К. М. Гуревича и Е. М. Борисовой. М., 1997.
5. Ремшмидт Х., Подростковый и юношеский возраст: проблемы становления личности. М., 1994.

Психологические особенности школьной адаптации в начальных классах общеобразовательной школы

М. Микаелян, Э. Закарян

В статье обсуждаются результаты исследования, выявляющие уровень школьной мотивации учащихся начальных классов, а также психологические особенности “трудного” ученика, межличностные взаимоотношения учеников со сверстниками и педагогами. Обобщение полученных результатов позволило провести консультирование с педагогами начальных классов.

Psychological Characteristics of School Adaptation in the Early grades of Secondary school

M. Mikayelyan, E. Zakaryan

The paper discusses the results of a study revealing the level of School motivation of Primary school classes as well as the Psychological characteristics of “difficult” student, interpersonal relationships with peers, students and teachers. A Summary of the results allowed for Consultation with teachers of Primary classes.

ԱՐՄԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ՀՈԳԵՔԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՈԳԵՔԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Հոգեբանությունը պատկանում է այն մասնագիտությունների թվին, որոնցում բացի այլ մասնագիտական գործառույթներից, առանձին տեղ է գրավում միջանձնային շփումը, այդ իսկ պատճառով հոգեբան մասնագետի համար կարևորվում են ոչ միայն մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները, այլ նաև տվյալ մասնագետի անձը: Հոգեբանի անձին բազմաթիվ պահանջներ են ներկայացվում, որոնց մեջ են միջանձնային շփման մեջ դրսևորվող կարևոր որակներ համարվող էմպաթիան և տոլերանտությունը: Ներկայումս անհրաժեշտություն կա բացահայտելու, թե արդյոք «հոգեբանություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթությունը նպաստում է շփման մեջ դրսևորվող հոգեբանի այդ անձնային որակների զարգացմանը: Կարևոր է հասկանալ, թե մասնագիտական գիտելիքների, հմտությունների, ունակությունների ձեռքբերման գործընթացը ինչպես է անդրադառնում ապագա հոգեբանների մասնագիտական անձնային որակների զարգացման վրա: Հետևաբար, մեր հետազոտության նպատակն էր բացահայտել մասնագիտական կրթության ազդեցությունը հոգեբան ուսանողների էմպաթիայի և տոլերանտության զարգացման վրա, և առաջ էր քաշվել վարկած, ըստ որի՝ մասնագիտական կրթությունը նպաստում է հոգեբան ուսանողների էմպաթիայի և տոլե-

րանտության մակարդակի բարձրացմանը: Փորձարարական հետազոտությունն իրականացվել է հետևյալ մեթոդիկաներով՝ 1. Տոլերանտության չափման համար հարցարանը՝ մշակված Վ. Ս. Մագունի, Մ. Ս. Ժամկոջանի և Մ. Մ. Մագուրայի կողմից, 2. «Տոլերանտության ինդեքս» էքսպրես-հարցարան (Գ. ՈՒ. Սոլդատովա, Օ. Ա. Կրավցովա, Օ. Ե. Խուխլան, Լ. Ա. Շայգերովա) [1] 3. Ի. Մ. Յուսուպովի կողմից մշակված «էմպաթիայի մակարդակի դիագնոստիկա» մեթոդիկան, 4. «Սոցիալական էմպաթիայի դիագնոստիկա» թեստ-հարցարանը [3], 5. Մասնագիտական ներգրավվածությունը և բուհական կրթությունից բացի մասնագիտական աճին նպաստող այլ միջոցառումներին մասնակցելու աստիճանը բացահայտող մեր կողմից մշակված հարցաշարի հիման վրա իրականացված հարցազրույցը: Հետազոտության ընտրանքը կազմել են ԵՊՀ առաջին և չորրորդ կուրսի հոգեբան ուսանողները և ԵՊՀ առաջին և չորրորդ կուրսի բանասեր ուսանողները: Վերջիններս, հանդիսանալով մարդ-նշան համակարգի մասնագիտության ներկայացուցիչներ, իրենց մասնագիտական կրթությամբ տարբերվում են հոգեբան ուսանողներից: Ընտրանքը բաղկացած է 120 հետազոտվողից՝ 30-ական հետազոտվող յուրաքանչյուր խմբում:

Քանի որ հետազոտության ընտրանքը կազմված է ուսանողներից, հարկավոր է անդրադառնալ ուսանողների տարիքային առանձնահատկություններին: Որոշ հեղինակներ այս շրջանը անվանում են ուշ պատանեկություն, մյուսները՝ վաղ երիտասարդություն: Հաշվի առնելով մեր երկրում կրթական համակարգի առանձնահատկությունները՝ կարող ենք ասել, որ ուսանողական տարիքը համարվում է 18–25–ը, ուստի այն ներառում է ինչպես պատանեկությունը, այնպես էլ երիտասարդությունը՝ կախված այն բանից, թե որ հեղինակի դասակարգումն ենք դիտարկում [5]:

Պատանիները և երիտասարդները, կատարելով մասնագիտության ընտրությունը և դառնալով ուսանողներ, հանդես են գալիս որպես ուսումնական գործունեության սուբյեկտներ: Ուսանողական տարիքում ինտելեկտի բարդագույն ձևավորում է տեղի ունենում, ինչը շատ անհատական է և վարիատիվ: Ուսանողությունը մարդու և, ընդհանրապես, անձի կայացման, նրա ամենատարբեր հետաքրքրությունների դրսևորման կենտրոնական շրջանն է: Բուհում ուսանելու ժամանակ պատանիների և երիտասարդների մոտ ձևավորվում է ամուր հիմք աշխատանքային, մասնագիտական գործունեության համար [2, էջ 84]:

Հոգեբանի՝ որպես մասնագետի համար շատ կարևոր է իր անձը, այն հանդիսանում է իր մասնագիտական գործունեության գլխավոր գործիքը: Կարելի է առանձնացնել հաջող մասնագիտական գործունեությունն ապահովող՝ մասնագետի հետևյալ անձնային առանձնահատկությունները՝ ոչ գնահատողական վերաբերմունք մարդկանց անհատական

տարբերություններին, նրբանկատություն մարդու հուզական վիճակի հանդեպ, պլաստիկություն (դինամիկություն + ճկունություն), հուզական զսպվածություն և դիմացկունություն, վարքի ընդհանուր մշակույթի պահպանում, սեփական վարքագիծը կառուցելու և մինչև վերջ պահպանելու կարողություն, կոնֆլիկտներում մարդկանց հնարավոր վարքի մասին գիտելիքների առկայություն, մարդկանց հանդեպ խորը հետաքրքրվածության արտահայտում, որի հետևանքն է հանդուրժողականությունը նրանց հետ շփման մեջ, այլ մարդկանց վարքի և դիրքորոշումների նկատմամբ զգայունակություն, ամենատարբեր մարդկանց հետ նույնականանալու ընդունակություն, հուզական կայունություն և օբյեկտիվություն, աուտենտիկություն, սեփական փորձի հանդեպ բացություն, զարգացած ինքնաճանաչում, ուժեղ ինքնություն, հանդուրժողականություն անորոշության նկատմամբ, անձնային պատասխանատվության ընդունում, ձգտում դեպի միջանձնային հարաբերությունների խորքը, իրատեսական նպատակադրում, ապրումակցման կարողություն [4]:

Որպես հոգեբանի անձին ներկայացվող պահանջներ դիտարկելով էմպաթիան և տոլերանտությունը, կարող ենք ասել, որ դրանք անհրաժեշտ են հոգեբանների համար, քանի որ դրսևորվում են միջանձնային շփման մակարդակում, իսկ հոգեբանությունը մարդ–մարդ համակարգի մասնագիտություն է, որտեղ միջանձնային հաղորդակցումը մեծ դեր ունի: Էմպաթիան՝ ապրումակցելու և կարեկցելու, այլ մարդու ապրումները հասկանալու և նրա հուզական վիճակի մեջ մտնելու ամե-

նալավ միջոցն է [1; 3]: Տոլերանտությունը այլ մարդուն ընդունելու, նրա հանդեպ ոչ քննադատական վերաբերմունք ունենալու, սեփական կարծիքից, մշակույթից, դիրքորոշումներից, ազգությունից տարբերվող մարդու հանդեպ ոչ բացասական վերաբերմունք և հանդուրժողականություն ունենալու ամենակարևոր նախապայմանն է [1; 3]:

Անցկացնելով հետազոտությունը վերոնշյալ մեթոդիկաներով՝ ստացված արդյունքները կարող ենք ամփոփել հետևյալ կերպ. մենք իրականացրել ենք արդյունքների վիճակագրական վերլուծություն Ստյուդենտի t չափորոշիչի միջոցով, որը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Թեստ/Սանդղակ	T Student
Տոլերանտության մակարդակ	0,032376041
Ընդհանուր տոլերանտություն	0,57977725
Սոցիալական տոլերանտություն	0,715153
Էթնիկ տոլերանտություն	0,6697
Տոլերանտություն՝ որպես անձնային գիծ	0,616783
Էմպաթիկ հակումներ	0,12308375
Էմպաթիա ծնողների հանդեպ	0,13371987
Էմպաթիա կենդանիների հանդեպ	0,616817493
Էմպաթիա ծերերի հանդեպ	0,072254
Էմպաթիա երեխաների հանդեպ	0,574877185
Էմպաթիա գեղ. հերոսների հանդեպ	0,5619042
Էմպաթիա անձանոթների/ քիչ ծանոթների հանդեպ	0,131219
Սոցիալական էմպաթիա	0,133398378


Արդյունքների վիճակագրական վերլուծություն հետազոտվող 2 խմբերի համար

Ինչպես տեսնում ենք՝ յուրաքանչյուր սանդղակի համար վիճակագրական վերլուծությունից ստացված արդյունքները ցույց են տալիս, որ չկա նշանակալի տարբերություն երկու խմբերի՝ հոգեբանության առաջին և չորրորդ կուրսերի էմպաթիայի և տոլերանտության մակարդակների միջև: Հարցազրույցից ստաց-

ված արդյունքների համաձայն՝ հոգեբանության առաջին կուրսի ուսանողները բացի մասնագիտական կրթությունից այլ միջոցառումներին մասնակցություն չեն ցուցաբերել, մինչդեռ հոգեբանության չորրորդ կուրսի ուսանողների 70 %-ից ավելին մասնակցել են բացի մասնագիտական կրթությունից այլ միջոցառում-

ներին՝ թրեյնինգներ, կոնֆերանսներ, կինոդիտումներ, սեմինարներ: Բուհական կրթությունից զատ այլ միջոցառումներին մասնակցած և չմասնակցած

խմբերի էմպաթիայի և տոլերանտության մակարդակների միջև տարբերության համեմատական վերլուծությունը ներկայացված է նկար 1-ում:



Նկար 1. Էմպաթիայի և տոլերանտության մակարդակների համեմատական ցուցանիշները հեղափոխվող խմբի ներսում (միջինացված արդյունքներ)

Ինչպես տեսնում ենք՝ բուհական կրթությունից բացի այլ միջոցառումների մասնակցած և չմասնակցած խմբերում էմպաթիայի և տոլերանտության մակարդակների տարբերությունները աննշան են:

Այսպիսով՝ հոգեբան ուսանողների էմպաթիայի և տոլերանտության զարգացումը պայմանավորված չէ մասնագիտական կրթությամբ, ինչպես նաև բուհական կրթությունից բացի այլ մաս-

նագիտական-կրթական միջոցառումների մասնակցությամբ: Հետևաբար կարող ենք ասել, որ մեր կողմից առաջ քաշված վարկածը հերքվեց, քանի որ հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ չկա նշանակալի տարբերություն հոգեբանության առաջին կուրսի և հոգեբանության չորրորդ կուրսի ուսանողների էմպաթիայի և տոլերանտության մակարդակների միջև:

Գրականություն

1. Бойко В. В., «Энергия эмоций в общении: взгляд на себя и на других»; М.: Информационно-издательский дом «Филинь», 1996, 472 с.
2. Зимняя И. А., «Педагогическая психология»; М.: Логос, 2004, 384 с.
3. Ильин Е. П., «Психология общения и межличностных отношений»; СПб.: Питер, 2009 – 576с.
4. Кочюнас Р., «Основы психологического консультирования», М., Академический проект, 1999, 240 с.
5. Шаповаленко И. В., «Возрастная психология (психология развития и возрастная психология)», М.: Гардарики, 2005, 349 с.

Развитие профессиональных качеств психолога у студентов–психологов в условиях профессионального обучения

А. Айрапетян

В настоящее время важно понять, вносит ли профессиональное образование свой вклад в развитие личностных качества психолога, которые проявляются в межличностном общении, например – эмпатия и толерантность. Наше исследование направлено на изучение влияния профессионального образования на развитие эмпатии и толерантности студентов психологов.

Development of psychologist's professional qualities in psychology students during their professional education

А. Hayrapetyan

At present, it is important to understand whether professional education contribute to the development of psychologist's personality qualities that occur in interpersonal communication, for example – empathy and tolerance. Our research is aimed at studying the impact of professional education on the development of empathy and tolerance of psychology students.

ՍԻԼՎԻ ԹԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԵՊՐԻՎԱՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻ ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Երեխաների առողջ հոգեկան զարգացումը ներկայումս հասարակության կարևորագույն խնդիրներից է: Այդ իսկ պատճառով հոգեբանական դեպրիվացիան մանկական տարիքի հոգեախտաբանության, դպրոցական դաստիարակության մեջ մեծ տեղ է գրավում: Դեպրիվացիան այն հոգեկան վիճակ է, որն առաջանում է կյանքի այնպիսի պայմաններում, երբ անհատին որոշակի ժամանակահատվածում հնարավորություն չի ընձեռվել բավարարելու իր որոշ հիմնական հոգեկան պահանջմունքները բավարար չափով: Ըստ մասնագետների պնդման՝ երեխան վաղ տարիքում պետք է դաստիարակվի սիրո և հոգատարության ջերմ մթնոլորտում և հուզական կապ ունենա մոր հետ (կամ մորը փոխարինող անձի): Այն իրադարձությունները, որոնց ժամանակ երեխան տանջվում է այդ հուզական կապի պակասից, բերում են հոգեկան առողջության մի շարք խախտումների [2, 67]:

Դեպրիվացիայի երևույթը առանձնապես սուր է դրսևորվում այն երեխաների մոտ, ովքեր ներգրավված են սոցիալական օգնության տարատեսակ կազմակերպություններում: Խնդիրը գտնվում է հոգեբանների, սոցիալական աշխատողների, հատուկ մանկավարժների և բժիշկների հետաքրքրության ոլորտում:

Բնական է, որ դեպրիվացիան յուրաքանչյուր անձի հոգեկանի վրա թողնում է տարբեր ազդեցություններ: Տարբեր երեխաներ, որոնք ունեցել են նույն դեպրիվացիոն իրավիճակը, տարբեր վարք են հանդես բերում, իսկ հասուն տարիքում այս

կապակցությամբ տարբեր հետևություններ են անում, քանի որ նրանք այդ իրավիճակի մեջ դնում են իրենց անձի առանձնահատկությունները: Մենք կատարել ենք հետազոտություն, որպեսզի պարզենք, թե ինչ հետևանքներ և ազդեցություններ է թողնում դեպրիվացիան երեխաների վրա և մանկական տարիքում, և արդեն հասուն ժամանակ:

Դեպրիվացիայի հետևանքների սեփական ուսումնասիրության փորձ

Փորձ է կատարվել էմպիրիկ հետազոտության ենթարկել դեպրիվացիայի խնդիր ունեցող երեխաներին: Հետազոտությունը կատարվել է ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ»-ում, 20 երեխաների հետ: Կիրառվել են հոգեբանական գրույցի, դիտման, թեստերի («գոյություն չունեցող կենդանու» թեստ) և նկարելու մեթոդը: Զուգահեռաբար միևնույն մեթոդիկաների կիրառմամբ ուսումնասիրվել են նույնքան երեխաներ՝ ստուգիչ խմբից ստացված տվյալներ ունենալու նպատակով:

Նկարների աշխատանքը վեր հանեց երեխաների հոգեվիճակի հետ կապված հետաքրքիր տվյալներ, մասնավորապես՝ երեխաների կյանքում սիրո, ջերմության, ծնողական հոգատարության կարոտը:

Հետաքրքիր է, որ այս աշխատանքի արդյունքում մենք ստացանք նաև առաջին հայացքից հակասական տվյալներ: Օրինակ՝ վեց տարեկան տղայի դեպքում, որը վարքային տեսակետից ակնհայտորեն

րեն ագրեսիվ երեխա էր, թեստի արդյունքում ստացվեցին ագրեսիայի մակարդակի շատ ցածր ցուցիչներ: Սակայն այս հակասությունը նույնպես հոգեբանական օրինաչափության դրսևորում է: Խոսքը հոգեբանության մեջ հայտնի փոխհատուցող ակտիվության մասին է, երբ վարքային տեսակետից որևէ յուրահատկության կարող է համապատասխանել դիրքորոշումների հակառակ վիճակը (համարձակ վարք, որի հիմքում ընկած է վախը):

Նկատեցինք մի շատ հետաքրքրական երևույթ: Հաստատությունում գտնվող երեխաների մոտ առկա էր չափազանց ուժեղ «մենք»-ի զգացումը, որը առաջացել է այս երեխաներին միացնող ընդհանուր գործոնների հիման վրա: Լինելով շատ ներփակված անձնավորություններ՝ նրանք իրենց մոտ չէին թողնում ոչ մեկին, բացի իրենց հասակակիցներից: Նրանք միայն իրար մեջ էին տեսնում հենարան, պաշտպան, իրենց մասին հոգ տանող անձնավորություն: Խոսքը խմբային ֆավորիտիզմի մասին է, որի հիմքը, կարելի է ենթադրել, ճակատագրի նմանությունն է:

Մենք ցանկանում էին ստուգել նաև այն, թե դեպրիվացիան անձի մեջ առաջացնում է որոշակի բացասական փոփոխություններ, մասնավորապես, տագնապայնության բարձր մակարդակ, մեր կողմից հետազոտություն է անցկացվել նաև մեծահասակների հետ: Առանձնացվեց երկու խումբ: Հետազոտությանը մասնակցել է քսան հոգի, տասնչորսը՝ կին, վեցը՝ տղամարդ, որից տասը դեպրիվացիա ապրած անձինք, իսկ մյուս տասը՝ ոչ դեպրիվացված անձինք: Հետազոտությունը ցույց տվեց, որ գոյություն չունի պատճառահետևանքային կապ դեպրիվացիայի փաստի և անձնային տագնապայնության մակարդակի միջև:

Թվում է, թե պարադոքսալ արդյունք է, բայց զրույցի մեթոդի կիրառումը թույլ տվեց ստացված արդյունքները մեկնաբանել՝ հիմնվելով որոշակի գործոնների վրա: Քանի որ կյանքի ընթացքում անձը ստիպված է բախվել բազմաթիվ դժվարությունների, նրան օգնության են գալիս բազմաթիվ հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ: Դեպրիվացված անձանց դեպքում փոխհատուցող մեխանիզմն այնքան ուժեղ է աշխատել, որ նրանց օգնել է ադապտացվել կյանքի յուրաքանչյուր պայմաններին: Դեպրիվացիան ճակատագիր չէ, և նրա ազդեցությունները պարտադիր չէ, որ շատ խորը լինեն անձի մեջ: Ինչպես վերը նշված, այնպես էլ այլ մեխանիզմների շնորհիվ հնարավոր է հասնել անձնային հոգեվիճակի բավարարվածության:

Թեև դեպրիվացված անձանց անձնային տագնապայնության մակարդակը ցածր էր, այնուամենայնիվ նրանք տագնապներ, նույնիսկ վախեր ունեին կյանքի որոշակի հատվածների՝ ընտանեկան կյանքի նկատմամբ: Չունենալով լիակատար ընտանիքի մոդել՝ նրանք տագնապներ ունեին կին-ամուսին, ծնող-երեխա հարաբերությունների նկատմամբ:

Դեպրիվացիայի մասին դասական աշխատությունները բավականին հռետես եզրահանգման են գալիս [3, 25]: Այն է՝ երկարատև հոգեբանական դեպրիվացիայի հետևանքները վաղ հասակում շատ խորն են, դրանք մնայուն և գրեթե անփոփոխ են մինչև հասունություն: Եթե դեպրիվացիոն խախտումը արդեն տեղի է ունեցել, ապա երեխայի տեղափոխումը ավելի դրական միջավայր արդեն չի օգնի:

Սակայն հետագա աշխատությունները ցույց են տալիս, որ նախորդ նկատառումները հիմնավորված չեն: Պարզվում է, որ առաջընթաց է երևում արդեն իսկ երիտա-

սարդության ժամանակ և վաղ հասունության տարիքում:

Եթե կարծիքները ընդհանրացնենք, ապա կարելի է ասել, որ ծանր և շարունակական դեպրիվացիան երեխայի հոգեկան կառուցվածքի մեջ խորը փոփոխություններ է թողնում, որոնք կարող են մշտական լինել: Ինչքան փոքր է երեխան և ինչքան երկար է դեպրիվացիան տևում, այդքան ավելի քիչ հույս կա շտկելու դեպրիվացիայի հետևանքները: Ջ. Բուլբին [1, 124] նշում է, որ նույնիսկ շատ կարճ դեպրիվացիոն փորձը, որը անցնում է առանց բացահայտ ազդեցությունների, թողնում է թեկուզ մեկ թաքնված հետև-

անք, այն է՝ բարձր «խոցելիություն» նման փորձի կրկնվելու կամ այլ անբարենպաստ իրավիճակի դեպքում: Քանի որ դեռ սահմանված չէ այն տարիքը, որից հետո երեխան զգայուն է դառնում դեպրիվացիայի հանդեպ, ապա հնարավոր չէ նաև հաստատել այն սահմանը, որից հետո դեպրիվացիայի ազդեցության ուղղումը կամ թուլացումը անիմաստ կլինի:

Սեփական հետազոտական աշխատանքի արդյունքում մենք եկանք այն եզրահանգման, որ պետք չէ սպասել մինչև դեպրիվացիայի հետևանքների ի հայտ գալը, այլ պետք է դիտարկել խնդիրը պրոակտիվ եղանակով:

Գրականություն

1. Боулби Дж., Привязанность; Перевод с английского; Данное издание выпущено в рамках проекта «Translation Project» при поддержке Института «Открытое общество» (Фонд Сороса) – Россия и Института «Открытое общество» – Будапешт, 2003 г.
2. Лангмейер И., Матейчек З. Психическая депривация в детском возрасте. Авивценум. Медицинское издательство Прага, ЧССР. Издание 1–ое русское– 1984 г.
3. Freud, A, Burlingham, D.T.: Infants without Families. New York, Internat. Univ. Press, 1944

Воздействие психологической депривации на психическое развитие личности

С. Тарджуманян

Статье представлена депривация как психологическое явление, ее такие виды как материнская, отцовская, социальная, депривация братьев и сестер а также депривация вследствие разводов родителей. В статье подробно представлена собственная исследовательская работа направленная на выявление последствий депривации на ребенка в детском а также в зрелом возрасте.

The Influence of Psychological Deprivation On Psychic Development of a Person

S. Tarjumanyan

The paper studies the phenomenon of deprivation, its ways of manifestation, like social, mother's, father's, sister's and brother's, also deprivation as a consequence of parental divorces. In the article there is presented own research work directed to revelation of consequences of deprivation on children both in childhood and in mature age.

LEILA ABIDI

ROLES OF EMOTIONAL INTELLIGENCE IN STUDENTS' COOPERATION OF HIGHER EDUCATION

Abstract

The purpose of this research paper is to investigate the potential relationship between emotional intelligence and the development of teamwork efforts among individuals, groups, and organizations. The foundations of emotional intelligence in literature will be reviewed, as well as a basic evaluation of common understandings regarding effective teamwork. Emotional intelligence is commonly discussed in the context of effective leadership, while teamwork is typically reviewed relative to the effectiveness of the combined efforts of teams made up of different members. This article works towards studying the literature on these two subjects by discerningly delving into the characteristics emotional intelligence may have on enhancing the prospects for effective teamwork.

The review of literature will establish the underpinnings of emotional intelligence and teamwork models existing currently. The literature does not adequately consider the possible effect emotional intelligence may have on teamwork. This paper will present a distinctive and dynamic look at the interaction emotional intelligence competencies may have on improved teamwork skills for individuals, groups and organizations. For those involved in cooperative efforts or projects, acknowledgment of this writing will presumably offer a practical analysis and applied skillfulness set to improve cooperative attainments. This distinctive perspective of emotional intelligence and its relationship to effective teamwork will complement the recent literature on these topics, and fill a gap where they are not considered together.

Discussion: THE IMPACT OF EMOTIONAL INTELLIGENCE ON TEAMWORK

“Continuous innovation requires technical competence, a nurturing climate, management commitment and cooperative relationships calling for an extraordinary degree of trust among the participants”. (Hattori & Lapidus, 2004, p. 97) This level of trust and relationship building can be enabled by a team of emotionally competent members. “Emotional intelligence is defined as the competency to think intelligently about emotions and to use emotions to think intelligently”. (Druskat & Wolff, 1999, p. 3) This intelligence is individual as well as social, and leads to certain behaviors. These behaviors, whether positive or negative, depend in large part on how these emotions are interpreted. Understanding the individual and social effect these behaviors have on teamwork is where the emotional intelligence construct comes in. The more leaders understand themselves and their employees the more likely they are to lead their teams to victory (Xavier, 2005).

Application of emotional intelligence can also be seen as a leader’s competency to effectively deal with their interpersonal relationships. It is based on the idea that one explores their emotions looking at such attributes as empathy, self-image, social skills, feelings, flexibility, happiness, stress tolerance, optimism, assertiveness, and trust and impulse control. Followers need a sense of security, and the behaviors of the leader play a role in their competency to feel secure. If the leader is not in control of his or her emotions, followers may lose confidence and

support for the leader. Conversely, if leaders have no understanding or consideration of the feelings of followers, they will be less effective in maintaining cohesion and team effectiveness. The objective is to strengthen and exploit the emotions of the situation in order to accomplish a desired goal in a cooperative environment.

Developing as an effective cooperative leader or team member is about learning and having confidence and belief in who you are, and improving the individual qualities and skills that inspire people to work with you. Emotionally intelligent leaders are thought to be happier and more committed to their organization, achieve greater success, perform better in the workplace, take advantage of and use positive emotions to envision major improvements in organizational functioning, and use emotions to improve their decision-making while instilling a sense of enthusiasm, trust, and cooperation in their employees through interpersonal relationships (Gardner&Stough,2002).Furthermore, “emotional intelligence enhances a leader’s ability to solve problems and to address issues and opportunities facing them and the organization. A leader high in emotional intelligence is able to accurately appraise how their followers feel and use this information to influence their subordinate’s emotions, so that they are receptive and supportive of the goals and objectives of the organization” (Gardner, tough, 2002, p.70). “Leaders who are able to use emotions to guide decision-making are able to motivate subordinates by engaging in activities facilitated by emotions, and are able to encourage open-minded idea generation, decision-making and planning, because they can consider multiple points of view” (Gardner &Stough, 2002, p.70).Effective leaders who are able to manage positive and negative emotions within themselves and

within others are able to articulate a vision for the future, talk optimistically, provide encouragement, stimulate thinking, encourage the expression of new ideas, and intervene in problems before they become serious. Emotional management may underlie the competency of the leader to be inspirationally motivating and intellectually stimulating. For the competency to identify and understand the emotions of others in the workplace is significant for leaders so that they can influence the feeling of subordinates to maintain enthusiasm, productivity, and organizational effectiveness (Gardner &Stough, 2002).

Emotional self-awareness is a further crucial skillfulness in teamwork. This relies on the competency of an individual to have a strong sense of self-worth, so as to be confident in presenting new ideas. “Having the courage to speak out is an emotional competency based on self-confidence; a dimension of self-awareness” (Slater, 2005, p. 329). This also means being aware of your strengths and weaknesses, where in a cooperative situation individuals recognize the strengths they bring to the group, but also acknowledging of when other people can do it better. It should be reasonable to say at this point that “relationships are the building blocks of teamwork” (Slater, 2005, p. 330). Individuals and leaders that are adept at building relationships are more likely to succeed in this regard as they share time and experiences together through open communication, trust, and rising above an initial common ground. This enables the development of main competencies required for facilitation, reaching consensus, conflict resolution, team building and problem solving in a shared context. Non-verbal behavior has also been acknowledged as an effective measure for reducing conflict and promoting positive relationships. The emotional

characteristics of cooperative work are thus significant to understand, perhaps even crucial for effective teamwork.

Conclusions

In taking full advantage of one's leadership or individual effectiveness, and having the competency to influence and move people, one must possess the knowledge and skills of emotional intelligence. We know that "emotional intelligence is described as a set of abilities that refer in part to how effectively one deals with emotions both within oneself and others" (Palmer et al., 2001, p. 5). Thus, cooperative team leaders and members "who are emotionally intelligent are essential to developing a climate where employees are encouraged to perform to the best of their ability" (Koman & Wolff, 2008, p. 59). Therefore we have seen regardless of the leadership model, effectiveness is enhanced by leaders possessing emotional intelligence (Higgs, 2003). Individual, team and organizationally, emotional intelligence competency is main to leaders of the future and their leadership effectiveness. For executives who understand and adapt to change, and assess themselves and their employees through emotional intelligence foster an emotional and intellectually healthy environment for all to thrive in (Xavier, 2005). Establishing a team of emotionally intelligent members is essentially the same as in developing an individual. The more these skills and competencies are developed throughout the team, the more effective the group can become. This is particularly significant because it allows teams to dispel norms, and organizations to develop new and more prosperous cultures. Confronted with the enduring need to remain competitive in an advancing market, the importance of emotional intelligence cannot be overlooked. Successful, effective,

and inspirational leaders of the future who are commanding and retaining of the highest talent, will certainly be demonstrative of the emotional intelligence competencies. For if they are not, the consequences seem quite predictable. "Given that the key components of the cooperative process are inherently emotional in nature, leaders who are successful in developing cooperative work cultures may be those who are able to manage, rather than deny, their emotional selves" (Slater, 2005, p. 330). Since teamwork has the potential to yield positive results not otherwise attainable, understanding the emotional underpinnings of positive cooperative behaviors in managing the emotional aspects of the cooperative process would seem paramount to retain. Briefly, this means collaborators at all levels need to learn to manage the emotional aspects of their work (Slater, 2005). Therefore to complement the contribution of a cooperative team member, it seems prudent to add emotional intelligence competency to rationale, technical, and organizational decision making. Emotionally intelligent cooperative teams build social capital, which influences effective task processes and individual engagement in those processes, i.e., effective information sharing, knowledge and idea integration, and action leading to positive results. Emotion drives behavior, and behavior affects relationships between individuals, groups and the cooperative environment.

SUGGESTIONS AND IMPLICATIONS

It is intended that this literature review provided a foundation of understanding on the main construct of emotional intelligence, while complimented with views on effective teamwork. Beyond this, it was also a goal of the study to specifically identify correlation of the main subjects as they relate to each

other beyond the extant literature already in place. It has been observed in the literature that emotional intelligence, particularly positive emotional intelligence, can be beneficial in negotiation. Emotionally intelligent individuals use positive emotions to envision major improvements in organizational functioning, and use emotions to improve their decision-making while instilling a sense of enthusiasm, trust, and cooperation in others through interpersonal relationships (Gardner & Stough, 2002). Furthermore, emotional intelligence enhances an individual's competency to solve problems and to address issues and opportunities facing them. An individual high in emotional intelligence is able to accurately appraise how others feel and use this information to influence their emotions, so that they are receptive and supportive of the goals and objectives presented to them (Gardner, Stough, 2002).

Individual emotional intelligence has a group analog, as cooperative groups boost their performance by developing their team's emotional intelligence. Absent of emotional intelligence, a cooperative group can still continue through the motions of participation and cooperation, but the team will not be as effective as it could be because members will hold back rather than fully engage. To be most effective, the team needs to develop and nurture emotionally intelligent norms, as these norms or behaviors support the building of trust, group cooperation and

efficacy (Druskatt, Wolff, 2001). To be sure however, "a team with emotionally intelligent members does not necessarily make for an emotional intelligent group...creating an upward, self-reinforcing spiral of trust, group identity, and group efficacy requires more than a few members who exhibit emotionally intelligent behavior. It requires a team atmosphere in which the norms build emotional capacity and influence emotions in constructive ways." (Druskatt & Wolff, 2001, p. 2) Effective participation, cooperation and teamwork follows trust, emotional intelligence and group efficacy (Druskatt & Wolff, 2001).

The preceding literature has shown that emotional intelligence improves one's competency to be socially effective, and can lead to improved cooperative results. However, some suggestions for future research have emerged as a result. Positive Organizational Scholarship and Appreciative Inquiry are other mainstream constructs that may positively influence cooperative results. Teamwork with other researchers engaged in the development of positive behavior based theories may pave the way for continued research and exploration. In the end, the research goal is to advance the desirable notion proposed by Druskatt and Wolff; "by working to establish norms for emotional awareness and regulation at all levels of interaction, teams can build the solid foundation of trust, group identity, and group efficacy they need for true cooperation and teamwork – and high performance overall" .

References

1. Bodtker, A., and Jameson, J. (2001). Emotion in conflict formation and its transformation: Application to organizational conflict management. *International Journal of Conflict Management*, 12(3),
3. Boyatzis, R. (2007). Competencies in the 21st century. *Journal of Management Development*, 27(1), 5–12.
4. Bramson, R., and Buss, T. (2002). Methods for whole system change in public organizations and communities: An overview of the issues. *Public Organization Review: A Global Journal*, 2, 211–221.
5. Cameron, J., Dutton, E., and Quinn, R. (2003). *Positive Organizational Scholarship* (1st ed.).
6. Chrusciel, D. (2006). Considerations of emotional intelligence (EI) in dealing with change 644–657.

ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆԻ ՂԱԶՈՅԱՆ

ՔՐՈՆԻԿ ՍՈՄԱՏԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցանկացած հիվանդություն իր ազդեցությունն է ունենում մարդու, նրա անհատականության վրա: Մենք մեր փորձից գիտենք, որ սովորական հարբուխը կամ աստամի հեռացումը կարող է լրջորեն ազդել մեզ վրա և առաջացնել խուճապ, վատ տրամադրություն: Հաճախ այդ ռեակցիաները հիվանդության ժամանակ ընդհանրանում են ապրումներ և վարք տերմինների շուրջ:

Հիվանդի ապրումների և վարքի անհամապատասխանությունը կարող են դժվարացնել հիվանդության ախտորոշումը և բուժման ընթացքը: Այդ իսկ պատճառով էլ շատ կարևոր է իմանալ և հասկանալ, թե ինչ է կատարվում հիվանդի հոգեկանում, քանի որ դա կարող է նպաստել համապատասխան վերականգնողական միջոցառումների կազմակերպմանը:[5, 203-204]

Կարևոր է նաև պատկերացում կազմել «հիվանդության ներքին պատկեր»-ի մասին:

Վերջինս բնութագրվում է հիվանդի մոտ իր հիվանդության մասին որոշակի զգացումների, պատկերացումների և գիտելիքների ձևավորմամբ:

Հիվանդությունը, որպես պաթոլոգիական գործընթաց, երկակի ձևով է մասնակցում հիվանդության ներքին պատկերի կառուցման գործում.

1. Տեղային և մարմնական բնույթի զգացումները բերում են հիվանդության

պատկերի արտացոլման զգայական մակարդակի առաջացմանը: Հիվանդության ներքին պատկերի առաջացման գործում կենսաբանական գործոնի դերի մակարդակը որոշվում է կլինիկական դրսևորումների ծանրությամբ, ասթենիայով և ցավային զգացումներով:

2. Հիվանդությունը հիվանդի մոտ առաջացնում է կենսահոգեբանական իրավիճակ: Այդ իրավիճակը իր մեջ ներառում է բազմաթիվ տարատեսակ պահեր. պրոցեդուրաներ, դեղորայքի ընդունում, բժիշկների հետ շփում, հարազատների և աշխատակիցների հետ հարաբերությունների վերականգնում:

Այս և մի քանի ուրիշ պահեր իրենց ազդեցությունն են թողնում սեփական հիվանդության գնահատման վրա և ձևավորում են սեփական հիվանդության նկատմամբ վերջնական փոփոխություն:[5,251-252]

Քրոնիկ սոմատիկ հիվանդության կլինիկական պատկերը որոշվում է երեք հիմնական գործոնների միասնությամբ՝ կենսաբանական (հիպոքսիա, ինտոքսիկացիա), հոգեբանական(երկարատև հիվանդության պայմաններում անձի փոփոխություններ) և սոցիալական (հասարակական կյանքում սահմանափակումներ): Կենսաբանական գործոնը տանում է նյարդային համակարգի թուլացմա-

նը, առաջանում է ասթենիկ սինդրոմը (գրգռվածություն, հուզական լաբիլություն, իմացական գործընթացների վատացում երկարատև հիվանդությամբ տառապող հիվանդների մոտ): Հոգեբանական գործունը ներկայանում է հիվանդության ներքին պատկերի ձևով՝ մարդու գիտակցության մեջ հիվանդության արտացոլման բնույթով, անբարենպաստ հիվանդության պայմաններում անձնային նոր առանձնահատկությունների ձևավորմամբ: [2,83]

Պետք է նշել, որ մարմնի և հոգեկանի միջև փոխհարաբերությունների գործում մեծ դեր են խաղում, այսպես կոչված, «փակ շրջանի» գործընթացները: Այն փոփոխությունները, որոնք սկզբում ռեակցիաներ են առաջացնում մարմնական ոլորտում, ռեակցիաներ են առաջացնում հոգեկան ոլորտում, իսկ վերջիններս էլ հետագա սոմատիկ փոփոխությունների պատճառ են հանդիսանում: Այսպես էլ «փակ շրջանի» ձևով կազմվում է հիվանդության ամբողջական պատկերը: «Փակ շրջանի» դերը հատկապես մեծ է հոգեսոմատիկ հիվանդությունների պարզեցնելու և թաքնված դեպրեսիայի դեպքում: [5,253]

Հիվանդության ապրումը ընդհանուր գիտակցական և հուզական երանգն է, որի հիման վրա առաջանում են հիվանդության հետ կապված զգացումները, պատկերացումները, պսիխոզեն ռեակցիաները և այլ հոգեկան գոյություններ: «Հիվանդության ապրումը» սերտորեն կապված է «հիվանդության գիտակցման» հետ, չնայած որ դրանք նույնը չեն:

Հիվանդության հանդեպ վերաբերմունքը գալիս է «հիվանդության գիտակցումից», որն էլ հենց ձևավորում է հիվանդության նկատմամբ վերաբերմունքը: Հիվանդության նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում է հիվանդի կողմից իր հի-

վանդության ընկալման, գնահատման, դրա հետ կապված ապրումների և այդ տեսակ վերաբերմունքից բխող մտադրությունների և գործողությունների հիման վրա: [5, 254]

Կարելի է առանձնացնել հիվանդի՝ իր հիվանդության նկատմամբ վերաբերմունքի երեք հիմնական ռեակցիա.

1. սթենիկ
2. ասթենիկ
3. ռացիոնալ

Բուժման և հետազոտության հանդեպ հիվանդի ակտիվ կենսական դիրքորոշումների դեպքում կարելի է խոսել սթենիկ ռեակցիայի մասին: Սակայն գոյություն ունի այս տեսակ վարքի բացասական կողմը, քանի որ հիվանդը կարող է թույլ գտնվել և չկարողանալ տանել կենսազորոնեության սահմանափակումները, որոնք առաջանում են հիվանդության պատճառով: Հիվանդության նկատմամբ ասթենիկ ռեակցիայի դեպքում հիվանդի մոտ նկատվում են վատատեսության և կասկածամտության միտումներ: Ռացիոնալ տիպի ռեակցիայի դեպքում տեղի է ունենում իրավիճակի ճիշտ գնահատում և խուսափում ֆրոստրացիայից:

Գոյություն ունեն հիվանդության նկատմամբ անձնային ռեակցիայի հետևյալ տեսակները.

1. Բարեկամական հակազդում. բնորոշ է այն մարկանց, ովքեր ունեն զարգացած ինտելեկտ: Նրանք հիվանդության առաջին իսկ օրերից դառնում են բժիշկի «օգնականները»՝ ցուցաբերելով ոչ միայն ենթարկվողություն, այլև բացառիկ ճշտապահություն, ուշադրություն, բարյացկամություն: Նրանք անսահման վստահում են իրենց բուժող բժշկին և երախտապարտ են նրան օգնության համար:

2. Հանգիստ ռեակցիա. այս ռեակցիան բնորոշ է այն մարդկանց, ովքեր ունեն հուզական, կամային գործընթացների կայունություն: Նրանք ճշտապահ են, ադեկվատ են վերաբերվում բժիշկի բոլոր ցուցումներին, ճիշտ են կատարում բոլոր այն հրահանգները, որոնք կապված են բուժման և վերականգնման հետ: Նրանք ոչ միայն հանգիստ են, այլև ներկայանում են որպես ծանրակշիռ և հավասարակշռված անձնավորություն, բժշկական անձնակազմի հետ հեշտ են փոխհարաբերություններ հաստատում: Երբեմն կարող են չգիտակցել իրենց հիվանդությունը, ինչն էլ հիվանդին խանգարում է բացահայտել հիվանդության զարգացման վրա հոգեկանի ազդեցությունը:
3. Անգիտակցական ռեակցիա. այսպիսի ռեակցիան պաթոլոգիկ հիմք ունի, շատ հաճախ պաշտպանական մեխանիզմի դեր է կատարում, այդ տեսակ պաշտպանությունը ոչ միշտ է անհրաժեշտ վերացնել, առավել ևս ոչ բարեհաջող ավարտ ունեցող ծանր հիվանդությունների դեպքում:
4. Հետևանքային ռեակցիա. չնայած հիվանդության բարեհաջող ավարտին՝ հիվանդները գտնվում են հիվանդագին կասկածների, հիվանդության կրկնման սպասման մեջ: Հիվանդությունից հետո նրանք հյուծված են, նույնիսկ գտնվում են դեպրեսիայի մեջ, հակված են հիպոխոնդրիկ ռեակցիաների, շարունակում են այցելել հիվանդանոց և գտնում են, որ դարձել են քրոնիկ, անբուժելի հիվանդ:[5,256–257]
5. Բացասական ռեակցիա. հիվանդները գտնվում են նախապաշարմունքների, հակումների ազդեցության տակ: Նրանք

կասկածամիտ են, չվստահող, դժվարությամբ են փոխհարաբերությունների մեջ մտնում բժիշկի հետ, առանձնապես ուշադրություն չեն դարձնում նրա ցուցումներին և խորհուրդներին: Նրանք հաճախակի են կոնֆլիկտի մեջ մտնում բուժող անձնակազմի հետ: Չնայած հոգեպես առողջ են, այդուհանդերձ, դրսևորում են, այսպես կոչված, «երկակի կողմնորոշում»:

6. Խուճապային ռեակցիա. հիվանդները գտնվում են վախի ազդեցության տակ, հեշտ են ներշնչվում, հաճախ ոչ հետևողական են, միաժամանակ տարբեր բուժհաստատություններ են հաճախում՝ բժիշկներին փորձելու համար: Հաճախ բուժվում են հեքիմների մոտ: Նրանց գործողությունները ոչ ադեկվատ են, սխալական, բնութագրական է աֆեկտիվ անկայունությունը:
 7. Ավերիչ ռեակցիա. հիվանդները իրենց պահում են ոչ ադեկվատ, անզգույշ՝ արհամարհելով բուժող բժիշկի բոլոր ցուցումները: Այս տեսակ մարդիկ չեն ցանկանում փոխել իրենց սովորական ապրելակերպը, մասնագիտական ծանրաբեռնվածությունը: Սա ուղեկցվում է դեղերն ընդունելը, հիվանդանոցային բուժում ստանալը մերժելով: Այս ռեակցիայի հետևանքները հաճախ լինում են անբարենպաստ: [5, 258]
- Քրոնիկ հիվանդության պայմաններում գոյություն ունի վարքի երկու տեսակ՝ ակտիվ և պասիվ: Հիվանդը պետք է գիտակցի կենսագործունեության ընդհանուր փոփոխությունը և փորձի հաղթահարել տհաճությունները նոր, հիվանդությանը հարմարված կենսաձևի հետ կապված, տհաճությունները: Դժվար է հարմարվել «հիվանդության հետ ապրե-

լու» փաստի հետ, այդ իսկ պատճառով էլ մարդիկ հաճախ հիվանդությանը արձագանքում են այնպիսի հոգեպաթոլոգիական խանգարումներով, ինչպիսիք են՝ վախը, ապաթիան, դեպրեսիան և այլն: Պասիվ վարքի դասին են պատկանում պաշտպանական այնպիսի մեխանիզմները, ինչպիսիք են՝ հիվանդության լրջության արհամարհումը, ինքնախաբեությունը, ռացիոնալիզացիան կամ գերվերահսկումը: [1, 501]

Հիվանդության սուբյեկտիվ գնահատականի և դրա օբյեկտիվ դրսևորումների միջև տարաձայնությունները դրսևորվում են երիտասարդ և ծեր հասկաներում:[5,261]Քրոնիկ հիվանդություններով տառապող երեխաների մոտ 1/5 մասը սահմանափակված են իրենց առօրյա գործողություններում և ընկերներ ձեռք բերելու գործում, դպրոց հաճախելիս և ուղղակի կյանքի նորմալ որակներին հասնելու գործում հանդիպում են մի շարք դժվարությունների: Երեխաները և դեռահասները, ում առողջությունը և գործունեության հնարավորությունները քրոնիկական հիվանդության պատճառով դիսկի են ենթարկվում, իրենց զարգացման և ադապտացիայի ժամանակ մեծ դժվարությունների են հանդիպում: Շաքարային դիաբետով տառապող երեխաները ամեն օր պետք է կարգավորեն արյան մեջ շաքարի քանակը և հետևեն դիետային, ինչպես նաև կատարել ինսուլինի ներարկումներ: Ասթմայով տառապող երեխաները պետք է մեծ զգուշավորությամբ վերաբերվեն յուրաքանչյուր նոր իրավիճակի, զգոն լինել նոպաներից առաջ, որը կարող է բառացիորեն զրկել նրանց կյանքից, իսկ այն երեխաները, ովքեր քաղցկեղ ունեն, պետք է հաղթահարեն

հասակակիցների անթարթ հայացքները կամ արտահայտությունները, ովքեր քիչ պատկերացումներ ունեն այն բանի վերաբերյալ, թե ինչու ուրիշ երեխան այլ տեսք ունի և հիվանդ է երևում: Վարքի հետ կապված մյուս հիվանդությունների դեպքում էլ այդ պատճառները ազդում են ոչ միայն երեխայի, այլ նաև հասակակիցների և ընտանիքի անդամների վրա: Այս ազդեցությունները, իրենց հերթին, ազդում են երեխայի՝ այդ դժվար պայմաններին հարմարվելու վրա:[3,424–425]

Քրոնիկ հիվանդության պայմաններում դեռահասի մոտ (փոքր երեխաների հետ համեմատած) դիտվում է հիպոխոնդրիկ տեսակին պատկանող ռեակցիա, առաջանում են նյարդային հիպոխոնդրիկ, հիստերիկ խանգարումներ: Որպես կանոն, քրոնիկ հիվանդությունները մանկական տարիքում զուգակցվում են անձի ձևավորման պաթոլոգիայով:[4,141]

Հիվանդ դեռահասների հոգեկան առանձնահատկություններն ուսումնասիրելուց հետո կարելի է նշել, որ, ի տարբերություն մեծահասակների, դեռահասներից ոչ մեկի մոտ չի նկատվել հիվանդության բացառման փաստ: Կապիլը առանձնացնում է հետևյալ երևույթները, որոնց հիմքում ընկած է պաշտպանական մեխանիզմների ակտիվությունը. փախուստ հիվանդությունից. ա) անցյալ, բ) երևակայություն, գ) ապագա(երբ ընդունում են, որ խոչընդոտները ժամանակավոր են):

ա) Փախուստ անցյալ

Սա հստակ արտահայտվում է դեռահասների արտահայտություններում: Անցյալը գնահատվում է որպես երջանկության գրավական: Այն ամենը, ինչը նախկինում չէր գնահատվում, համար-

վում էր սովորական՝ առողջությունը, կողքին գտնվող ընկերները, դառնում են երջանկության խորհրդանիշ, քանի որ, եթե առողջ ես, ապա արդեն երջանիկ ես:

բ) Փախուստ երևակայություն

Սա կատարվում է այն դեպքում, երբ երեխայի մոտ բացակայում է իրականության հետ կապը:

գ) Փախուստ ապագա

Հիվանդությունից փախուստը կարող է դիտարկվել նաև որպես ձգտում դեպի ապագան: Այս դեպքում հիվանդությունը դիտարկվում է որպես խոչընդոտ, որը ժամանակավոր բնույթ ունի:[4,144]

Ոչ առաջին անգամ բուժում ստացող դեռահասներին բնորոշ են պաշտպանական առանձնահատուկ դրսևորումներ. դրա համար օգտագործվում է ցանկացած արտաքին ազդակ: Դա կարող է լինել և՛ բժիշկի կողմից արտաբերված բառերի մտապահումը, և՛ նոր դեղերը:

Այն դեռահասների մոտ, ովքեր ոչ առաջին անգամ են գտնվում հիվանդանոցում, բնորոշ է ներքին, երբեմն գիտակցված աշխատանքը, որը նպաստում է հոգեբանական պաշտպանվածությանը:[4,145–146]

Հիվանդությունը մեծ տրավմա է այն դեռահասների համար, ովքեր լիդեր են, զբաղվում են հասարակական աշխատանքով: Նրանց համար հիվանդությունը ամեն ինչից զրկումն է, անարդար և անհասկանալի երևույթ է: Այնուամենայնիվ, այդպիսի երեխաների մոտ նույնպես տեղի է ունենում հարմարում հիվանդությանը: Առավել հաջող կերպով է ընթանում ադապտացիան այն դեռահասների մոտ, ովքեր շատ են կապված եղել իրենց ծնողների հետ նախքան հիվանդությունը, ինչպես նաև այն դեռահասների, ովքեր պրիմորբիտում պահանջմունքների նեղ շրջանակ ունեն:

Իհարկե նրանց համար էլ է հիվանդությունը տրավմա, բայց, այնուամենայնիվ, այն ոչ այնքան բազմակողմանի է: Այս երեխաները նույնպես կոնֆլիկտի մեջ են մտնում իրենց հարազատների և հասակակիցների հետ, մյուս հիվանդներին առավել մեղմ են վերաբերվում, ունեն նրանց օգնելու ցանկություն:

Անկասկած, գոյություն ունի կապ հիվանդությանը հարմարվելու և տարիքի միջև: Հիվանդանոցային պայմանները առավել ծանր են ընդունում փոքր տարիքի երեխաները: Նրանց մոտ առավել հաճախ հանդիպում է դիսթիմիկ տեսակի արձագանք, հոգեբանական հետազոտության պայմաններում իրեն հավաքելու անկարողություն:

Պաշտպանական միջոցների ձևավորման գործում ծնողների դերի մասին խոսելով՝ կարելի է առանձնացնել նրանց դերի երկակի նշանակություն: Նույնիսկ երեխայի շատ ծանր վիճակի դեպքում նրանք իրենց մեջ ուժ են գտնում թե՛ իրենց և թե՛ երեխայի նկատմամբ դրական տրամադրվելու համար, նպաստում են հիվանդության որոշ տրավմահարույց ազդեցությունների հանմանը:

Հիվանդ դեռահասների մոտ նկատվում է նաև հիվանդության պատճառով առաջացած դեֆեկտները կոմպենսացնելու միտում: Հոգեբանական կոմպենսացիայի մեխանիզմները դիտարկվում են որպես այնպիսի հոգեբանական հնարքների համակցություններ, որոնք թույլ կտան հարաբերականորեն հաջող իրականացնել ինքնաիրականացումը՝ չնայած նրան, որ այդ գործընթացը դժվարանում է՝ կապված իրավիճակների և որոշ խոչընդոտների հետ: Այս մեխանիզմները կարող են լինել ինչպես ներքին, այնպես

էլ արտաքին, դրանք կարող են առնչվել հիվանդի ընդհանուր վիճակի կամ արտաքին կենսական հանգամանքների փոփոխատուցմանը: [4,146–148]

Երեխաների մոտ հիվանդության սուբյեկտիվ կողմը գնահատելիս միշտ պետք է հաշվի առնել երեխայի տարիքը, հոգեբանական զարգացվածության և անձնագրային տարիքի համապատասխանությունը: Ինչպես արդեն նշեցինք, երեխաների մոտ երկարատև սոմատիկ հիվանդությունը հաճախ ֆիզիկական և հոգեբանական զարգացման դանդաղեցման պատճառ է հանդիսանում: Բացի դա, մանկական հասակում հիվանդանալու դեպքում հաճախ տեղի է ունենում ոչ միայն զարգացման դանդաղեցում, այլև ռեգրեսիա(վերադարձ հոգեբանական ռեակցիայի այն տեսակներին, որոնք բնորոշ են առավել փոքր տարիքին), որը դիտարկվում է որպես հոգեբանական պաշտպանական մեխանիզմ: Երեխաների մոտ պաշտպանական ակտիվությունը նպաստում է նրան, որ «հիվանդություն» հասկացության օբյեկտիվ նշանակությունը հաճախ չի ընկալվում, հետագա կյանքի համար տեղի չի ունենում դրա ծանրության և հետևանքների գիտակցում՝ հետագա կյանքի համար:

Մինչև վեց տարեկան երեխաների մոտ կարելի է հանդիպել հիվանդության մասին այնպիսի ֆանտաստիկ պատկերացումների, որոնք կապված են ներարկումների, բժշկական այլ միջամտությունների հանդեպ ունեցած վախի հետ:

Մեծահասակները հիվանդները հիվանդությունը առավել ծանր են տանում: Տարիքի հետ կապված, մարդու մոտ առաջանում են մի շարք տարիքային հոգեբանական դրսևորումներ, անհանգստություն, անհատական ռեակցիաների և կենսական

կարծրատիպերի էական փոփոխություն: Առաջանում է անինքնավստահություն, վատատեսություն, նեղացկոտություն, վախ մենակությունից, անօգնական մնալուց նյութական դժվարություններից: Նկատելիորեն նվազում է հետաքրքրությունը նորի և, առհասարակ, արտաքին աշխարհի հանդեպ, նկատվում է կենտրոնացում անցյալի և դրա վերագնահատման վրա: Այնուամենայնիվ այստեղ միանշանակ չի կարելի խոսել մարդու ռեգրեսիայի մասին, քանի որ շատ մարդիկ մինչև խորը ծերություն պահպանում են իրենց լավատեսությունը և ստեղծագործական հնարավորությունները:[5,261]

Քրոնիկ հիվանդությամբ տառապող անձը պետք է պատրաստ լինի ինքնագագացողության հետագա վատացմանը, աշխատունակության ենթադրյալ իջեցմանը, համակերպվի այն փաստի հետ, որ ինքն էլ երբեք չի կարողանա անել այն, ինչ կցանականա, ինչպես առաջ էր:

Այս սահմանափակումների հետևանքով մարդը հաճախ հայտնվում է հակասությունների մեջ այն բանի հետ, թե ինչ է ինքը սպասում իրենից և ինչ են իրենից սպասում ուրիշները:

Համաձայն Կալինկայի, հիվանդը պետք է ձգտի նրան, որ մեղմացնի շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունը և օգտագործի այն հնարավորությունները, որոնք կնպաստեն վիճակի լավացմանը, պետք է կարողանա աղեկվատ գնահատել տիպիկ իրադարձությունները և փաստերը, կարողանա հարմարվել դրան, կարողանա պահպանել իր սեփական դրական կերպարը, հուզական հավասարակշռությունը և հանգստությունը, շրջապատող մարդկանց հետ սովորական հարաբերությունները:[1,501–502]

Քրոնիկ հիվանդության հետևանքով տեղի են ունենում անձի փոփոխություններ: Անձի փոփոխության կլինիկական ձևերը տարատեսակ են, դրանք կարող են դրսևորվել.

1. Էմոցիաների փոփոխման տեսքով (դեպրեսիա, գրգռվածություն, ագրեսիվություն):
2. Դրդապատճառային ոլորտում խանգարումների տեսքով:
3. Իր և շրջապատի հանդեպ վերաբերմունքի փոփոխության տեսքով (քննադատության խանգարում):

4. Ակտիվության խանգարման տեսքով: Յուրաքանչյուր խրոնիկական հիվանդություն ունի իր կլինիկական առանձնահատկությունը՝ կախված հիվանդության բնույթից, բայց շատ հետազոտողներ հակված են այն մտքին, որ գոյություն ունեն վարքային և անձնային փոփոխությունների մի ամբողջ փաթեթ, որը տարբեր հիվանդների մոտ կարող է տարբեր լինել՝ կախված բնավորության գծերից և իրավիճակից: [2,85–86]

Գրականություն

1. Карвасарский Б. Д., Клиническая психология, М., 2004г., 541 с.
2. Лисковский О. В., Медицинская психология, Учебно–методологический комплекс, Минск, ФУСТ БГУ, 2003г., 114 с.
3. Мэш Э., Вольф Д., Детская патопсихология, Сахкт Петербург, »Прайм–Еврознак», Москва, «Олма–Пресс», 2003г., 384 с.
4. Николаева В. В., Влияние хронической болезни на психику, М., Издательство московского университета, 1987г., 168 с.
5. Сидоров П. И., Парняков А. В., Введение в клиническую психологию, М., Академический Проект, Екатеринбург: Деловая книга, 2000 г., 416 с.

Психологические особенности людей с хроническими соматическими заболеваниями

А. Казоян

В данной статье затронуты особенности людей с хроническими соматическими заболеваниями, а также поведенческие проявления больных, их отношение к болезни.

Psychological peculiarity of people with chronic somatic diseases

A. Ghazoyan

The article arouses psychological peculiarity of people with chronic somatic diseases, also their behavior, attitude to the disease.

ԱԴԻԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՂԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Հղիության հոգեբանությունը պերինատալ (մերձծննդյան, որը ներառում է պրենատալ, նատալ և պոստնատալ շրջանները) հոգեբանության բաժիններից մեկն է, որը բժիշկները և հոգեբանները կարևորում են հղի կանանց հոգեբանական առանձնահատկությունները ուսումնասիրելու առումով: Պերինատալ հոգեբանությունը հետաքրքիր է իր հետազոտման օբյեկտով՝ «մայր-պտուղ-երեխայի ծնունդ»: Հույզերը, որոնք վերապրում է ապագա մայրը, առաջացնում են փոփոխություններ արյան կենսաքիմիական կազմում, շնչառության հաճախականության, սրտի աշխատանքի, զարկերակային ճնշման մեջ: Այսպիսով, չնայած հղի կնոջ և պտղի միջև նյարդային համակարգի ուղիղ կապի բացակայությանը, պտուղը ենթարկվում է փոփոխվող հուզական ֆոնի ազդեցությանը: Դա հաստատվում է նրանով, որ մայրիկի անհանգստության պահին մեծանում է պտղի շարժողական ակտիվությունը [2, 79]:

Իրականացավ, վերջապես, կինը ազատվեց պղտոր հանելուկներից և հոգնեցուցիչ կասկածներից, հիմա նա վստահ գիտի, որ դա հղիություն է, որի տևողությունն է ինը ամիս: Դա օրգանիզմում հսկայական փոփոխությունների ժամանակաշրջանն է, որոնք ուղեկցվում են կնոջ ֆիզիոլոգիական և հոգեբանական որոշակի փոփոխություններով: Կնոջ օրգանիզմում հղիության առաջին եռամսյակում ֆիզիոլոգիական առումով սկսվում է հորմոնային «գրոհ»: Այն ուղեկցվում է

մի շարք տհաճ վիճակներով, ինչպիսիք են՝ սրտխառնոցը, բարձր քրտնարտադրությունը, ուշագնացության վիճակները, առավոտյան փսխումը և այլն: Բժիշկները այդ վիճակը անվանում են «հղիների վաղ տոքսիկոզ»: Կնոջ հոգեվիճակում ևս իրականանում են հսկայական փոփոխություններ: Դա, այսպես կոչված, փոփոխությունների ճգնաժամն է: Առաջին հերթին նրա զգացողությունները լցվում են ուրախությամբ և, միևնույն ժամանակ, տագնապայնությամբ: Նրա ներքին, մտերմիկ միջավայրում՝ իր «ես»-ում, հայտնվել է մեկ այլ, էակի միջավայր, որի գոյության հետ պետք է ոչ միայն համակերպվել, այլ հնարավոր է, վերափոխել ողջ կյանքը, փոխել բոլոր պլանները: Առաջանում է բարձր դյուրագրգռվածություն: Կինը դառնում է հուզականորեն խոցելի, հակված է անհանգստության, ավելի զգայուն է բացասական ապրումների նկատմամբ: Կարծես թե նեղվելու պատճառը անիմաստ է, իսկ աչքերը «թաց տեղում են» և ոչինչ չի ուրախացնում: Կնոջ հոգում տեղի են ունենում այնքան շատ փոփոխություններ, որ նա կարող է իրեն զգալ շատ միայնակ նոր ապրումների հորձանուտի հեղեղում: Նրան շրջապատող բոլոր մարդիկ մնացել են նույնը, միայն ինքն է միայնակ մնացել «հղիության զգացումի» իշխանությունում: Նույնիսկ եթե մինչև հղիությունը կինը տարբերվում էր հանգիստ բնավորությամբ, հիմա, սակայն, կարող է հեշտությամբ խուճապի մատնվել հղիության ընթացքի բարդություններից վերաբերող

իր բժշկի վերացական հիմնավորումներից, կամ էքսցենտրիկ ընկերուհու ծննդաբերության մասին պատմությունից [2, 80]: Կինը փորձում է քնել նույնիսկ ամենաանհարմար վայրերում: Օրինակ՝ աշխատավայրում, բազկաթոռի մեջ, երբեմն նույնիսկ լոգարանում: Այդ պահին նա չի լսում կողմնակի ձայները, նրան ուղղակի համակում է քնելու անհագ ցանկությունը: Ի հայտ է գալիս «կենդանական» ախորժակ և կինը սկսում է ուտել մի քանի անգամ ավելի (եթե նա մինչև այդ նույնիսկ դիետա էր պահում): Այդ պահին նրան դժվար է խորհուրդ տալ օգտագործել օրգանիզմի համար սովորական ուտելիքներ, այն պահանջում է բացակայող տարրեր՝ ամենաանհնարին սննդի տեսքով: Անշուշտ դա շատ է զայրացնում կնոջը. նա նյարդայնանում է և ստիպում է նյարդայնանալ իրեն շրջապատողներին (առաջին հերթին՝ ամուսնուն, որն էլ սովորաբար իրականացնում է նրա բոլոր խոհարարական քմահաճույքները): Բայց, ցավոք սրտի, իրավիճակը փոխել չի կարելի և ավելի լավ է բավարարել օրգանիզմի պահանջները [1, 21]:

Մասնագետների կարծիքով առաջին եռամսյակում կինը երեխայի մասին չի մտածում որպես կենդանի էակի. ամենայն հավանականությամբ դա պայմանավորված է օրգանիզմի պաշտպանական մեխանիզմով հնարավոր վիժման դեպքում, որի հավանականությունը մեծանում է հղիության հատկապես առաջին շաբաթների ընթացքում: Ուսումնասիրությունների համաձայն կանայք առաջին եռամսյակում պարբերաբար վախենում են. կարող է հանկարծ երեխան ծնվի նորմայից շեղումներով, խանգարումներով կամ ընդ-

հանրապես չծնվի: Ծննդաբերության օրվա մոտենալը միայն ուժեղացնում է այդ վախը: Վիժման վախից շատ կանայք առաջին եռամսյակում լռում են իրենց հղիության մասին: Գտնվելով նման հոգեկան անհավասարակշիռ վիճակում՝ կնոջը կարող են այցելել մահվան մասին մտքեր. այդ շրջանում հղի կնոջ հոգեկանը շատ անկայուն է: Այսպիսով, երեխայի մասին պատմությունը, որը մահացել է դժբախտ պատահարի հետևանքով, կարող է հասցնել նրան լացի, ստիպել ողբալ:

Կրկնածին կանանց մոտ այս շրջանը նույնպես այդպես է ընթանում, բացառությամբ այն բանի, որ նրանք արդեն գիտեն փոփոխությունները, որոնք կատարվում են օրգանիզմում հղիության ժամանակ և ներքուստ փորձում են դրանց պատրաստվել: Նրանց մոտ կան այլ խնդիրներ, որոնք, ինչ-որ ձևով հարթում են այդ «հեղափոխական վերակառուցումը»: Դրանք կապված են իր մյուս երեխաների հետ, որոնք ինչպես պահանջում էին, այնպես և շարունակում են պահանջել շատ ուշադրություն և ծնողական խնամք: Եվ այս խնդիրները շարունակում են մնալ ողջ հղիության ընթացքում: Առաջին եռամսյակի վերջը շատ կանանց համար համարվում է ինքնազգացողության «արմատական բեկում»:¹ Վաղ տոքսիկոզը թուլացնում է իր «հարձակումը», և ամեն ինչ աստիճանաբար սկսում է կայունանալ: Հղիության առաջին և երկրորդ եռամսյակի սահմանագծում առաջանում է առաջիկա մայրության զգացողություն, և այդ զգացողությունը, որը աճում է օրեցօր, իհարկե, համարվում է ամենաթանկ զգացողություններից մեկը, որը ապրվում է շատ կանանց կողմից [2, 80–90]:

Հղիության երկրորդ եռամսյակում օրգանիզմում ֆիզիոլոգիական բնույթի փոփոխությունները շարունակվում են, բայց դրանց կինն արդեն հարմարվում է: Կազմվածքը արդեն ընդհանրապես նման չէ նախկինին՝ ընդգծվում է որովայնը, կրծքավանդակի չափը մեծանում է, կոնքերը կլորանում են: Դա բնական է, քանի որ երեխան զարգանում և մեծանում է, նրան հարկավոր է մեծ տարածություն՝ արգանդում բարեկեցիկ մնալու համար: Որոշ կանանց մոտ տոքսիկոզի երևույթը կարող է շարունակվել, սակայն շուտով դա կանցնի: Առաջանում են նոր խնդիրներ, ինչպիսիք են փորկապությունը, թուփքը, հաճախ ցանկություն է առաջանում պառկելու և հանգստանալու, բայց ամեն ինչ այդքան էլ վատ չէ. հենց այս եռամսյակում ապագա մայրը սկսում է արգանդում զգալ պտղի առաջին շարժումները, ինչը հոգեբանական առումով շատ կարևոր պահ է հղիության ընթացքում: Կինը սկսում է համակերպվել իր նոր «ես»-ին: Առաջանում է մեծ պատասխանատվություն ամեն բանի համար, ինչը նա անում է իր կյանքում: Հղին վախով սկսում է տեսակավորել դիսկի բոլոր գործոնները, որոնց նա ենթարկվում էր հղիության սկզբից և մտածում, թե ինչպես են դրանք կազդեն երեխայի վրա: Ընթացքում գալիս են հիշողություններ՝ ընկած մեկ բաժակ գինու կամ ասպիրինի մասին, երբ հղիության մասին դեռ ոչինչ հայտնի չէր, հարազատ քաղաքի օդի աղտոտվածության մասին մտածմունքները կամ իր աշխատանքային սեղանի համակարգչի մոնիտորի ճառագայթումը: Դա նորմալ է, սակայն մայրիկին հասցնում է մեծ տագնապի: Կինը սկսում է մտածել այն ամենի մասին, թե ինչ է նրան սպաս-

վում մոտ ապագայում: Առաջնածինները դեռ չգիտեն, թե ինչ է ծննդաբերությունը: Նրանք այդ մասին կարդում են գրքերում, լսում են իրենց մայրերից և ընկերուհիներից: Պատկերացնում են հղիության այդ կարևոր արդյունքը: Գրեթե բոլորի մոտ ծննդաբերությունից առաջ առաջանում է վախ: Այդ շրջանում նույնպես նրանք բախվում են այնպիսի խնդրի հետ, ինչպիսին հղիության սպառնալիքն է: Շատ դեպքերում դա ուղեկցվում է հիվանդանոցում հոսպիտալացումով: Կնոջ համար դա համարվում է լրացուցիչ տագնապ այդ բարդ ժամանակահատվածում [2, 80–90]:

Հղիության երկրորդ եռամսյակում կանայք հարմարվում են իրենց կազմվածքի նոր ձևին: Ապագա շատ մայրերի մոտ, ովքեր սովոր են հետևել իրենց կազմվածքին, հղիության ընթացքում գոտկատեղի և ազդրերի չափերի փոփոխությունները առաջացնում են ծանրության տարբեր աստիճանների հոգեբանական շոկ, երբ հանկարծ սիրելի կիսաշրջագեստը կամ տաբատը դառնում են փոքր: Ընդունել և սիրել սեփական մարմնի փոփոխությունները, ինքն իրեն զգալ նորովի գեղեցիկ և սիրված՝ ահա թե ինչին է հարկավոր ձգտել հղիության երկրորդ եռամսյակում: Կնոջ ներսում մեծանում է երեխա՝ ամբողջական մարդ, և շատ քիչ զգացողություններ են մնում նախկինի պես: Դա հատկապես վերաբերում է սեռերի փոխհարաբերություններին: Ամուսնու հետ մենակ մնալով, հղին կրկին ու կրկին զգում է, որ իրենց հետ կա երրորդը: Եվ որոշ զույգերի այդ զգացողությունը կարող է խանգարել [8]:

Նկատվում են նաև ինքնագնահատականի մակարդակի տատանումներ: Հաճախ ապագա մայրիկը կարող է իրեն

զգալ համարյա թագուիու կարգավիճակում, իսկ հենց հաջորդ պահին՝ ոչ ոքի չհետաքրքրող մոխրոտիկ: Էյֆորիային փոխարինում են կասկածները [6, 136]:

Հղիության հորմոնալ ֆոնը ճոճանակի պես տատանվում է: Հաճախ գլորվում են ուժեղ հույզերի ալիքները՝ չիրականացված առիթներով: Անհրաժեշտ է ընդունել այդ փոփոխություններն իր մեջ, ինչպես ընդունում է իր մարմնում երեխայի շարժումները: Եթե բոլոր փոփոխությունները, որոնց մասին վերևում նշված էին, կատարվել են, ապա հղիներն ունեն բոլոր հնարավորությունները, որպեսզի ուղղակիորեն ուրախանան կյանքով, իրենով, երեխայով, ականջ դնեն նոր զգացողություններին և վայելեն իրենց նոր վիճակը: Շատ մշակույթներում կլորիկ որովայնով կանայք համարվում են գեղեցկության, ներդաշնակության, կյանքով լեցուն լինելու սիմվոլ: Հղիության միջին ժամանակահատվածում հղիները կարող են ունենալ երանության, հանգստի, ամբողջականության, ներդաշնակության վիճակներ: Անհրաժեշտ է պահպանել այդ վիճակները [8]:

Հղիության երրորդ եռամսյակում ֆիզիոլոգիական առումով առաջանում են բազմաթիվ խնդիրներ: Դժվարանում է շնչառությունը, առաջանում է այրոցք, զուգարան գնալու հաճախակի ցանկություն, այդ ամենի պատճառը արգանդի մեծացումն է, որը սեղմում է բոլոր ներքին օրգանները: Այդ բոլոր պատճառներով խանգարվում է նորմալ քունը: Կարող է առաջանալ այնպիսի պաթոլոգիա, ինչպիսին երակների վարիկոզ լայնացումն է: Սակայն այս ամենը շուտով կավարտվի: Այս եռամսյակի վերջում կրկին հեշտանում է շնչելը, քնանում է այրոցքը, քանի որ

պտուղն իջնում է փոքր տազի տարածք և հարևան օրգանների վրա գործող ճնշումը փոքրանում է:

Հոգեբանական առումով այս եռամսյակում մեծանում է հղի կնոջ սենսորային (զգայական) ծանրաբեռնվածությունը: Կնոջ մարմինը, որը հղիության սկզբում նրան պատճառում էր մեծ ուրախություն, ինչ-որ ժամանակ դառնում է ծանրաշարժ (կնոջ պատկերացմամբ՝ անճոռնի) և սկսում է զայրացնել իր դանդաղաշարժությամբ: Կինը սկսում է իրեն նմանեցնել գետաձիու կամ կետի, որը հայտնվել է ափին. դա նրան բազմաթիվ բացասական հույզեր է պատճառում, նա դադարում է սիրել իր մարմինը:

Հուզական առումով կարող է առաջանալ զգայական ծանրաբեռնվածություն: Անցկացված հետազոտությունների համաձայն պարզվել է, որ վախերը, որոնք ուղեկցում էին կնոջն առաջին եռամսյակում, վերադառնում են վերջին եռամսյակում նոր ուժգնությամբ: Կինը սկսում է անհանգստանալ իր առողջության, երեխայի կյանքի համար. նա վախենում է ծննդաբերությունից, անհանգստանում է առաջացած լայնացումներից: Եթե տանը կան մեծ երեխաներ, կնոջը կարող է մտահոգել նրանց վերաբերմունքը ապագայում ծնվող երեխայի նկատմամբ: Բացի դրանից, կինը վախենում է, թե նա կկարողանա՞ արդյոք իրականացնել մոր դերը (եթե երեխան առաջինն է): Եվ եթե կինը նախկինում այդ մասին մտածում էր ապագա ժամանակով, ապա վերջին եռամսյակում մոտենում է անխուսափելին, և ժամանակը դառնում է ավելի քիչ. այդ մտքերը կնոջը ճնշում են [2, 80–90]:

Անհրաժեշտ է նշել, որ վերջին եռամսյակը ոչ միայն ժամանակ է թախիժի և վախերի համար: Դա երեխայի հետ հանդիպման սպասման ժամանակաշրջան է, զգացողությունների մեջ խորասուզվելու պահ: Շատ կանայք, անհամբերությամբ երեխային սպասելով, մոռանում են իրենց վախերի մասին: Դա ճիշտ մարտավարություն է, և այդպիսի զգացողությունը պիտի պահպանեն հղի կնոջ մտերիմները և ընկերները, դա կօգնի նրան չմտածել հնարավոր տհաճությունների մասին (հատկապես, եթե ծննդաբերության ժամանակ առկա են որոշակի հակացուցումներ) և շատ դեպքերում կինը ավելի հեշտ է տանում ցավը, եթե այդ մասին անընդհատ չի մտածում:

Եթե ընտանիքում ամեն ինչ լավ է, եթե կինը վստահ է նրանում, որ հղիությունը հիվանդություն չէ, իսկ ծննդաբերությունը՝ վիրահատական միջամտություն, եթե ընտանիքի անդամների և ուշադիր բժիշկների միջամտությունը ակնհայտ է, ապա հղի կնոջ հուզական աշխարհում նկատվում են փոփոխություններ. դրանք շատ կարևոր են ներդաշնակ հղիության համար: Հղիության վերջին երկու ամիսների ընթացքում կարելի է նկատել, որ կինը կարծես իր ներսում ինչ – որ բանի պարզ ենթարկվում է, քանի որ վերջին շրջանում պտղի շարժումները շատ զգալի են [1, 67]:

«Հղի կնոջ կրկնակի հոգեկան» հասկացությունը նրանում է, որ այն հիանալի բացատրում է հղիության վերջում շատ վիճակներ: Մայրը աստիճանաբար հարմարվում է այն մտքին, որ ինքը մենակ չէ: Եվ այդ մեկն իր ներսում է, իսկ այժմ ակնհայտորեն դրսևորում է իր ցանկությունները: Երբեմն նա չի թողնում քնել, հրում է

և պտտվում, իսկ հաճախ մոր մոտ քնելու անկառավարելի ցանկություն է առաջանում, քանի որ փոքրիկը որովայնում քնել է: Մոր և երեխայի քնի ու արթնության ռեժիմը կապված են: Բայց երբ երեխան ավելի շատ է քնում, դա կարող է մայրիկի մոտ առաջացնել բարձր քնկոտություն:

Այս շրջանին հատուկ է ներքին զգացողությունների մեջ խորասուզվելը: Հանկարծակի հղի կինը շեղվում է և կենտրոնանում որովայնում գտնվող երեխայի շարժումների վրա: Եվ հենց այդ, երբեմն ոչ այնքան ուժեղ, շարժումները հղի կնոջ համար դառնում են աշխարհում ամենակարևորը: Կարծես թե փոխվում է կենտրոնացման կարգավորումը (ինչպես ֆոտոխցիկը կամ տեսախցիկը) և պարզորոշ է դառնում այն, ինչը կնոջ ներսում է, իսկ մնացած ամբողջ աշխարհը կարծես թե կտրուկ կերպով կորչում է և դառնում ոչ կարևոր:

Կնոջ երազանքները և ֆանտազիաները ապագա երեխայի մասին տարբերվում են իրականությունից: Հաճախ հղի կինը կարող է մտածել, գուշակել՝ ինչպիսին կլինի նա, ում դեռ ոչ ոք չի տեսել ու չի բռնել ձեռքերով: Այդ մտքերը կարող են խանգարել քնելուն և արտահայտվել գունավոր ու պայծառ երազներում:

Կանայք հղիության վերջին շրջանում բնագոյաբար խուսափում են դժվար իրադրություններից, խառնաշփոթ հարաբերություններից, տհաճություններից, սարսափելի տեսարաններից՝ ծանրաբեռնված ուժեղ ապրումներով: Ապագա մայրիկի մոտ առաջանում է «ճիշտ» և «սխալ»-ի ճշգրիտ զգացողություն: Եվ սխալի դեպքում համարյա սրտխառնոց է առաջանում, ինչպես տոքսիկոզի ժամանակ:

Բարձր հոգեբանական հոգնածության, ավելորդ տպավորություններից հեռացման պատճառներից մեկն է, որ կինն իրեն հեռացնում է այդ ողջ աններդաշնակությունից: Ուղղակի նրա մոտ վերադառնում է չափի բնական զգացողությունը: Անիրաժեշտ է սովորել վստահել ինտուիցիային, չափի զգացողությանը և ճաշակին: Դա շատ է օգնում երեխայի կյանքի առաջին ամիսներին [8]:

Այս եռամսյակում ինտելեկտում առկա են արտահայտված փոփոխություններ՝ կանայք մեծամասամբ ունենում են դժվարություններ նրանում, որպեսզի հետևողական և համեմատաբար արագ տրամաբանորեն մտածեն հղիության վերջին երկու ամիսներին: Դա կարելի է բացատրել հղիության ընթացքում գլխուղեղի կեղևի ֆունկցիոնալ վիճակի իջեցումով, որն էլ պահպանվում է մինչև ծննդաբերությունը՝ առանց կտրուկ փոփոխությունների [4, 13–16]:

Հղիության երրորդ եռամսյակը ավարտվում է ծննդաբերությամբ և սկսվում է հետծննդաբերական շրջանը: Ծննդաբերությունը ֆիզիոլոգիական գործընթաց է, որը պահանջում է լարվածություն և ջանքեր ոչ միայն մայրիկից, այլ նաև պտղից: Սթրեսը, որն ապրում է երեխան ծննդաբերության ժամանակ, ընդունված է անվանել ծննդաբերական տրավմա կամ սթրես: Այդ սթրեսը համարվում է ֆիզիոլոգիական նորմա [7, 71]: Հետծննդաբերական շրջանում կնոջ մոտ կարող են առաջանալ հոգեկան և վարքային խանգարումներ, որոնք պայմանավորված են հղիության և ծննդաբերության ոչ բնականոն ընթացքով: Հետծննդաբերական հոգեկան խանգարումների պատճառական գործոններ

են համարվում կնոջ օրգանիզմում հղիությունից հետո կտրուկ հորմոնային տեղաշարժերը, սոմատիկ (մարմնական) բարդությունները ծննդաբերության ժամանակ, ինչպես նաև հոգեբանական սթրեսները, որոնք հաճախ ուղեկցում են ծննդաբերության ընթացքը: Շատ բան կախված է նրանից, թե որքանով է բարենպաստ ամուսնությունը, ինչպիսին է եղել ամուսինների վերաբերմունքը մոտալուտ հղիությանը, ինչպիսի ակնկալիքներ նրանք ունեն աշխարհ եկած երեխայի հետ: Որքան վատ են փոխհարաբերությունները ամուսինների միջև և անցանկալի է հղիությունը, այնքան ավելի մեծ է հետծննդաբերական հոգեկան խանգարումների հաճախականությունը: Հետծննդաբերական շրջանի խանգարումներն ունեն շատ լայն տարածում ընդհանուր պրակտիկայում և հիմնականում արտահայտվում են երեք տիպի խանգարումներով. այսպես կոչված հետծննդաբերական բլյուզներ (մելանխոլիա), հետծննդաբերական դեպրեսիաներ և հետծննդաբերական պսիխոզներ [9]:

Հետծննդաբերական բլյուզը (անգլերենից նշանակում է ճնշվածություն) վաղ հետծննդաբերական շրջանում հոգեհուզական ստատուսի խանգարում է: Այն առաջանում է ծննդկանների 50–70 % մոտ: Արտահայտվում է տրամադրության անկումով, անհանգստությամբ, տագնապով, հուզական անկայունությամբ (լաբիլություն), տրամադրության տատանումներով (ճնշվածությունից մինչև բարձրացում, անհիմն պատճառներով լացկանություն, ուշադրության կենտրոնացման խանգարումներ, ինքնագնահատականի իջեցում), նորածնի համար աղեկվատ խնամք ապահովելու սեփական անկարողության

վախով: Որոշ դեպքերում դա ուղեկցվում է մեղքի զգացումով, ապագայի մասին հոռետեսական պատկերացումներով, ամուսնու, բարեկամների նկատմամբ բացասական վերաբերմունքով: Նկարագրված ախտանիշները սովորաբար սկսվում են ծննդաբերության հենց առաջին օրվանից, հասնում մաքսիմումի 3–5 օրերի ընթացքում և բավականին շուտ անհետանում (ծննդաբերությունից հետո 2–րդ շաբաթը սկսելուն պես): Առաջացման առավել հավանական պատճառներ են համարվում հորմոնային կտրուկ տատանումները, որոնք առաջանում են կնոջ օրգանիզմում անմիջապես ծննդաբերությունից հետո՝ հիմնականում կորտիզոնի պարունակության բարձրացումն է արյան պլազմայում, ինչպես նաև երեխայի ծննդին ոչ ադեկվատ պատասխանը [10]:

Հետծննդաբերական դեպրեսիան հոգեհուզական ոլորտի խանգարում է, որն առաջանում է հետծննդաբերական շրջանում և բնորոշվում է տրամադրության արտահայտված վատացումով: Այն բավականին տարածված վիճակ է, որի ժամանակ հիմնական դժգոհությունը համարվում է դեպրեսիվ համախտանիշը: Հետծննդաբերական դեպրեսիայի կլինիկական պատկերը հետևյալն է. վատ տրամադրություն, նյարդայնության բարձրացում, տազնապայնություն և վախ, շրջապատի նկատմամբ անտարբերություն, ախորժակի փոփոխություններ, ոչ ադեկվատ վարք երեխայի հետ, հուզական անկայունություն, դյուրագրգռություն, կրճքով կերակրելու մերժում, ագեդոնիա՝ հոգեկան խանգարում ուրախության զգացման կորստի ձևով, շատ հազվադեպ սուցիդալ մտքեր,

կյանքի և հաճույքի ստացման նկատմամբ հետաքրքրությունների կորուստ, սեռական հարաբերություններ ունենալու ցանկության բացակայություն [5, 325–327]:

Հետծննդաբերական փսիխոզ

նկատվում է այն ժամանակ, երբ ծննդաբերությունից մի քանի օր կամ շաբաթանց կինն իրեն սկսում է տարօրինակ պահել՝ օրինակ, չի ուզում փողոց դուրս գալ, անտեղի անհանգստանում է երեխայի համար, ոչ մեկին երեխայի մոտ չի թողնում կամ, ընդհակառակը, անտարբեր է երեխայի նկատմամբ: 40–50 %–ի դեպքում հիվանդությունը պայմանավորված է մոր հոգեկան խանգարումներով, սակայն մնացած դեպքերում հիվանդության պատճառը հղիության ոչ նորմալ ընթացքն է: Հոգեկան շեղումներն աստիճանաբար են ի հայտ գալիս՝ ծննդաբերությունից մի քանի օր կամ շաբաթանց: Կինը նման դեպքերում իրեն տարօրինակ է պահում՝ անտարբեր է երեխայի նկատմամբ, երբեմն չարացած է նրա դեմ, կամ էլ շատ է անհանգստանում նրա համար, կարծում է, որ բոլորն ուզում են վնասել իր փոքրիկին: Նման դեպքերում պետք է դիմել հոգեբույժի: Կարևոր է նաև կնոջը երեխայի հետ մենակ չթողնել՝ կախված հիվանդության խորությունից, քանզի նա կարող է չգիտակցված արաքներ կատարել: Հետծննդաբերական փսիխոզը հիմնականում ավարտվում է ապաքինմամբ [3]:

Այսպիսով՝ հղիության և ծննդաբերության ժամանակ ծագող խնդիրները կարող են նպաստել հետծննդաբերական շրջանում հոգեկան բնույթի խանգարումների առաջացմանը:

Գրականություն

1. Алишани А., Стрельцова Д. Девять месяцев и вся жизнь. Роды нового тысячелетия, М., 2009 .
2. Добряков И.В. Перинатальная психология . Питер, 2010.
3. Каплан Г.И. Клиническая психиатрия. М., 2005.
4. Кочнева М. А., Сумовская А.Е. Психологические реакции у женщин при физиологическом течении беременности //Акушерство и гинекология, 1990., №3.
5. Кулакова В.И., Прилепской В.Н., Радзинский В. Е. Руководство по амбулаторно–поликлинической помощи в акушерстве и гинекологии // М.: Гэотар–Медиа, 2007.
6. Сирс У., Сирс М. В ожидании малыша. М.: «Крон–пресс» 2007.
7. Цареградская, Ж. В. Ребенок от зачатия до года . М., 2005 .
8. http://www.semya-rastet.ru/razd/jemocii_beremennojj_zhenshhiny/
9. <http://www.medkarta.com/?cat=article&id=20421>
10. <http://www.medsecret.net/akusherstvo/poslerodovyj-period/307-poslerodovyj-bljuz-melanholija>

Беременность как кризисный период

А. Кочарян

Течение беременности в жизни женщины является кризисным периодом не только в физиологическом, но и в психологическом плане. В статье обобщены trimestры беременности, психологические особенности беременной женщины и их поведенческие проявления, а также послеродовые психические расстройства, вызванные ненормальным течением беременности и родов.

Pregnancy is a critical period

A. Kocharyan

Pregnancy in a woman's life is considered to be a critical period not only physiologically, but also psychologically. The article summarizes pregnancy trimesters, psychological peculiarities and behavioral manifestations of pregnant women, as well as post-natal psychiatric disorders that are associated with a normal course of pregnancy and childbirth.

ԱՐԵՎԻԿ ԱՎԱԳՅԱՆՑ

ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ծխախոտային կախվածությունը մի գլոբալ հիմնախնդիր է, որի ծայրահեղ դրսևորումները՝ ծխախոտի գործածման հետևանքով առաջացած հոգեկան և վարքային խանգարումները, Համաշխարհային Առողջապահական Կազմակերպության կողմից ներառված են Հիվանդությունների Միջազգային Դասակարգման մեջ [1]: Այս հիմնախնդրի արմատները հասկանալու համար անհրաժեշտ է ցուցաբերել բազմակողմանի մոտեցում՝ չսահմանափակվելով միայն մեկ գիտական հայեցակարգով, միաժամանակ՝ ուշադրություն դարձնել խնդրի ոչ միայն հոգեբանական, այլև ֆիզիոլոգիական, մշակութային, տնտեսական, գենդերային, սոցիալական և այլ ասպեկտների վրա:

Ելնելով հիմնախնդրի բնույթից, մինչ բուն հետազոտությունն իրականացնելը, մենք անդրադարձ ենք կատարել դրա մի շարք ասպեկտներին և մանրամասն տեսական ուսումնասիրության ենթարկել դրանք, ինչը մեզ թույլ տվեց առավել մոտ լինել հիմնախնդրի էության բացահայտմանը:

Հաշվի առնելով այն անհերքելի փաստը, որ նիկոտինի նկատմամբ ֆիզիոլոգիական կախվածությունը շատ արագ է ձևավորվում, մենք, որպես առավել կարևոր հոգեբանական գործոններից մեկը, դիտարկում ենք անձի՝ ծխելու առաջին փորձերը: Մեզ հայտնի դարձավ, որ հետազոտվողների զգալի մասը ծխելու առաջին փորձն իրականացրել է հետաքրքրությունից դրդված: Ենթադրում

ենք, որ սոցիալական ծրագրավորումն (որը սկսվում է դեռ վաղ մանկությունից) ունեցել է իր մեծ դերը՝ հետաքրքրության ձևավորման գործում: Ծխախոտային կախվածության ձևավորման գործում իր ուրույն նշանակությունն է ունենում այն՝ որպես սոցիալապես ընդունելի և սովորական վարքագծի ամրապնդումը դեռևս երեխայի գիտակցության մեջ: Երեխան, գովազդներում և ֆիլմերում որպես գլխավոր հերոսներ հանդիպում է ծխող անձանց, որոնց կերպարները հաճախ նրա համար դառնում են հեղինակություն, որը, սա համադրվելով մի շարք այլ գործոնների հետ, կարող է դրսևորվել ծխախոտի օգտագործմամբ և, ենթազիտակցաբար նրանց նմանվելու մեծ ցանկությամբ: Արդյունքում արատավոր կապ է ձևավորվում «հերոս լինելու» կերպարի և ծխելու միջև: [2; 5]

Ծխախոտային կախվածության ձևավորման գործում մեծ դեր է խաղում այն հանգամանքը, թե ծխելու առաջին փորձերից սկսած անձը որպես ինչ է ընկալել ծխախոտի գլանակը և հետագայում ինչ սպասումներ է ձևավորել դրա շուրջ: Մասնավորապես, եթե անձի կողմից այն ընկալվում է որպես հանգստության կամ այլ սուբյեկտիվորեն հաճելի զգացողությունների աղբյուր, ապա այլընտրանքի բացակայության պայմաններում մեծ է նյութից կախվածության մեջ հայտնվելու վտանգը: Այս պարագայում անհրաժեշտ դրական ազդեցություն կարող են ունենալ դեռևս վաղ դեռահասությունից անձի հետ տարվող հոգեկանխարգելիչ աշխատանքները՝

ուղղված ինչպես համոզմունքային համակարգին, այնպես էլ անձնային աճի ապահովմանը, դժվար իրավիճակներում դրանց հաղթահարման հմտությունների բազմազանության ձևավորմանը: Եթե անձը ձգտում է հանգստության զգացողություն ունենալուն պարբերաբար, ապա նա պետք է տիրապետի դրան հասնելու միջոցների այլընտրանքների, այլապես ընտրության սակավ հնարավորությունը ևս, իր հերթին կնպաստի ցանկալիին հասնելու համար ոչ արդյունավետ միջոցների ընտրությանը:

Ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ ծխախոտային կախվածության ամրապնդման գործում, որպես հոգեբանական գործոն, մեծ տեղ են զբաղում ծխախոտի հետ կապված ծիսակարգային գործողությունները (որոնք ևս ծխելու գործընթացի «հաճելի» մասն են կազմում) և ծխողների գիտակցության մեջ սթրես-ծխախոտ, անհանգստություն-ծխախոտ կապերը:

Նման դեպքերում ծխողների հետ տարվող աշխատանքի ուղղվածությունը պետք է լինի ծիսակարգի գիտակցական և ենթագիտակցական իմաստների վերծանումը, ծիսակարգային գործողության փոխարինումը այլ՝ արդյունավետ տիպի գործունեությամբ, ինչպես նաև վերոնշյալ կապերի վերացումը:

Ծխողների մեծամասնության մոտ առկա էր ծխախոտից հոգեբանական կախվածություն: Ընդ որում, Ֆիզիոլոգիական կախվածության ուժեղ արտահայտված աստիճան ունեցող անձանց մոտ արտահայտված էր նաև հոգեբանական կախվածությունը ծխախոտից: Սա թույլ է տալիս ենթադրել, որ ուժեղ ֆիզիոլոգիական կախվածության առաջացմանը զուգընթաց գործի են դրվում նաև հոգեբանա-

կան մեխանիզմները: Անձը, ձեռք բերելով ուժեղ ֆիզիոլոգիական կախվածություն, բնականաբար առավել հաճախ է ծխախոտ օգտագործում, ավելի մեծ քանակներով, և դա անդրադառնում է նրա վրա, որ ամրապնդվում է երևույթից հոգեբանական կապը, պահանջը: Նշենք նաև, որ սոցիալական դեզադապտացիան, իմպուլսիվությունը, կոնֆլիկտայնությունը առավել բնորոշ են ծխողներին, քան չծխողներին:

Ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ ծխող և չծխող մարդկանց միջև առկա են սուբյեկտիվ վերահսկողության տեղակայման բևեռային տարբերություններ: Ընդ որում, սույն ուսումնասիրության շրջանակներում ծխողների մեջ գերակշռում էին ինտերնալները, չծխողների մեջ՝ էքստերնալները: Սա բացատրում ենք նրանով, որ ուսումնասիրության մասնակից ծխողները առավել հաճախ էին կենտրոնանում խնդրի լուծման, ելքեր փնտրելու վրա, սեփական ուժերով հաջողությունների հասնելու վրա, սակայն ոչ արդյունավետ եղանակով: Եվ ծխախոտը, այս պարագայում, հանդես էր եկել որպես յուրատեսակ «կատալիզատոր» իրենց և արտաքին աշխարհի միջև, սեփական ես-ի և արտաքին աշխարհում որոշումներ կայացնելու միջև, յուրատիպ «միջնորդ», որը օգնող օղակ է հանդիսանում, բայց ոչ՝ պատասխանատվության հիմնական կրողը: Ինչպես ցույց տվեցին հետազոտության արդյունքները, հետազոտվող խմբի ծխողների մեծամասնությունը կարծում էր, որ իրենց հետ կատարվող յուրաքանչյուր երևույթ պատահական չէ և հանդիսանում է իրենց սեփական գործողությունների արդյունք: Ի հակառակ դրան՝ ուսումնասիրության մեջ ներգրավված չծխողների մեծամասնության պատասխաններում գե-

րակշռում էին պատահականությունները որպես կյանքում հաճախ պատահող երևույթ տեսնելը, հաջողելը և այլն: Սովորաբար էքստերնալներին առավել բնորոշ է հուզական անկայունությունը (հուզական վիճակի արագ փոփոխությունը) և ոչ միջնորդավորված մտածողությունը, այն է՝ անմիջապես հակազդում տալը կատարվածին, իսկ ինտերնալներին՝ հուզական կայունությունը և հակվածությունը՝ տեսական մտածողության, վերացարկման և պատկերացումների համադրություն անելու: Մյուս կողմից ուշադրության առնենք այն փաստը, որ, երբ ծխողները խոսում են ինչ-որ մեկի հետ, նրանց անհրաժեշտ է առավել երկար մտածել պատասխանելուց առաջ, սակայն գրույցի բացը նրանք «պետք է լրացնեն» ինչ-որ կերպ, որտեղ նրանց օգնության է գալիս ծխախոտի գլանակը և հնարավորություն ընձեռում խորհելու և ուշ պատասխանելու խոսակցին: Սրա իմացությունը թույլ է տալիս որոշակի ենթադրություններ անել և ծխողների հետ տարվող հոգեբանական աշխատանքների համար մշակել համապատասխան ուղղություններ, մասնավորապես՝ մշակել գրույցի բացը կամ ազատ ժամանակը լրացնելու այլ տարբերակներ, անձի համոզմունքային համակարգին ուղղված հոգեբանական աշխատանքի միջոցով պարզել, թե հատկապես ինչն է ծխողը կարիք ունի «լցնելու» իր ժամանակի ամեն վայրկյանը: Այն դեպքում, երբ ծխող անձը ունի սուբյեկտիվ վերահսկողության ինտերնալ տեղակայում, հոգեբանական աշխատանքը կրում է առավել նպատակաուղղված բնույթ, քանի որ սեփական գործողությունների համար պատասխանատվությունը այցելուն կվերցնի իր վրա: Այս պարագայում ծխախոտային կախվածության

ֆիզիոլոգիական կողմերի և համապատասխան խնդիրների իմացությունը կօգնի հոգեբանական աշխատանքն առավել իրատեսական հիմքի վրա կառուցելուն: Ծխախոտային կախվածություն ունեցող անձի հետ ոչ իրատեսական հիմքի վրա կառուցվող հոգեբանական աշխատանքի արդյունավետությունը կլինի այնքան, որքան նույնպիսի հիմքի վրա կառուցվող՝ ծխելը թողնելու որոշումը:

Ամփոփելով ստացված տեսական և գործնական արդյունքները, գալիս ենք այն եզրակացության, որ ծխախոտային կախվածության հաղթահարման համար անհրաժեշտ է ցուցաբերել կոմպլեքս մոտեցում՝ հաշվի առնելով խնդրի և հոգեբանական, և ֆիզիոլոգիական ասպեկտները, ներգրավելով համապատասխան մասնագետներ և միասնական աշխատանք կատարելով: Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ անձը նախ և առաջ իրեն պետք է մանրամասն պատկերացնի որպես չծխող, հետո միայն՝ թողնի ծխելը: Իրեն որպես չծխող պատկերացնելու համար անհրաժեշտ է համապատասխան մոտիվացիա, հստակ ձևավորված և ծխող անձի կողմից հիմնավորված, փաստարկված դիրքորոշումներ:

Ծխախոտային կախվածության թեման դեռևս մնում է որպես քիչ ուսումնասիրված հոգեբանության ոլորտում և դրա շուրջ յուրաքանչյուր գիտական հետազոտություն կարող է արդյունավետորեն օգտագործվել՝ այցելուների հետ աշխատանքում գործնական նոր մոտեցումներ մշակելու նպատակով, ինչպես նաև նպաստելու համապատասխան նոր հայեցակարգերի զարգացմանը, գործնական աշխատանքում ծագող խնդիրների առավել արդյունավետ և ամբողջական լուծմանը:

Գրականություն

1. Հիվանդությունների միջազգային դասակարգում-10: Հոգեկան և վարքային խանգարումների դասակարգում, կլինիկական նկարագրություն և ախտորոշման ցուցումներ, Չանգակ-97, 2001 թ.:
2. Айвазова А. Е., Психологические аспекты зависимости, речь, Санкт-Петербург 2003, 78 стр.
3. Александрова В. Ю., Зыряева Л. А. Организация медико-психологической помощи в борьбе с табакокурением: Методические рекомендации. – М., 1997.
4. Андрух Г. П., Клиника и психотерапия хронического никотинизма, Харьков, 1979.
5. Бек Джудит, Когнитивная терапия: полное руководство: Пер. с англ., М., ООО «И. Д. Вильямс», 2006, 400 с.

Исследование психологических факторов формирования табачной зависимости

А. Авагянц

Статья содержит краткий обзор результатов исследования некоторых факторов формирования табачной зависимости, выявление как отличий локуса субъективного контроля между курящими и некурящими личностями, а также роли некоторых промежуточных факторов в укреплении данной зависимости.

Основываясь на результатах исследования, в статье также подитожили некоторые практические выводы и предложения о направленности работы, цель которых направлена на преодоление проблемы табачной зависимости.

The Research of Psychological Factors of Formation of Tobacco Dependence

A. Avagyants

The article includes a review of the research's results of some factors in the formation of tobacco dependence, the identification of differences in installation of subjective control between smokers and non-smokers, as well as the role of some intermediate factors in the strengthening of this dependence.

On the basis of the research results, we also rebounded of some practical conclusions about the problem of overcoming the tobacco dependence and suggestions for the realization of the work.

ЛИЛИЯ АСЛАНЯН

О ВНУТРЕННЕЙ КАРТИНЕ БОЛЕЗНИ

Как во времена Сократа и Платона, мы все еще делим врачей на врача тела и врача души. Для нас совершенно естественно, что терапевт, ставя себе целью «объективное» исследование больного и владея в совершенстве этой методикой, особенно лабораторной, в анализе внутренней болезни, ограничивается только формальным соби­ранием анамнеза и одной только сухой регистрацией субъективных жалоб больного, предоставляя весь его огромный внутрен­ний мир специалисту: психиатру, невропа­тологу или психотерапевту. Однако, очень важно понимать внутренний мир и пози­цию больного относительно его пережива­ний по поводу своего недуга.

Большой вклад в изучение проблемы осознания больным своей болезни внес А.Р.Лурия, сформулировав понятие «внут­ренней картины болезни», подразуме­вая всё то, что испытывает и переживает больной, всю массу его ощущений, не только местных болезненных, но и его об­щее самочувствие, самонаблюдение, его представления о своей болезни, всё то, что связано для больного с его приходом к врачу, – весь тот огромный внутренний мир больного, который состоит из весьма сложных сочетаний восприятия и ощу­щения, эмоций, аффектов, конфликтов, пси­хических переживаний и травм. [1]

Говоря о внутренней картине болезни, нужно помнить, что она охватывает раз­нообразные стороны субъективной сто­роны заболевания. Это сложное струк­турированное образование включает в себя, по крайней мере, четыре уровня

психического отражения болезни в психи­ке заболевшего:

- ♦ чувственный – комплекс болезненных ощущений;
- ♦ эмоциональный – переживание забо­левания и его последствий;
- ♦ интеллектуальный – выработка пред­ставления и знания о болезни паци­ентом и её реальная оценка, размыш­ления о её причинах и возможных последствиях;
- ♦ мотивационный – выработка опреде­лённого отношения к болезни и акту­ализация деятельности, направленной на выздоровление. [1]

Всю сумму этих ощущений, пережи­ваний, настроений больного вместе с его собственными представлениями о своей болезни Гольдшейдер назвал аутопласти­ческой картиной болезни и относит сюда не только субъективные симптомы боль­ного, но и ряд сведений о болезни, кото­рыми располагает больной из прежнего своего знакомства с медициной, из лите­ратуры, из бесед с окружающими, из срав­нения себя с аналогичными больными. [1]

В. Т. Кондрашенко и Д. И. Донской говорят о важности учёта внутренней кар­тины болезни в процессе рациональной терапии, называя это понятие скорее со­циально–психологическим, чем клини­ческим, и выделяют в нём три уровня: сенсорный, эмоциональный и интел­лектуальный. [3]

- ♦ Сенсорный уровень включает в себя отношение больного к своим болез­ненным ощущениям,

- ♦ эмоциональный – это оценка больным своей болезни с точки зрения опасности и безопасности,
- ♦ интеллектуальный уровень – это решение вопросов «болен или здоров», «чем, как и у кого лечится» и т.д.

В центре внимания проблемы внутренней картины болезни находится психология личности больного, а так же проблема поиска смысла жизни содержащая в себе цель жизни человека, «присвоенная» им и ставшая для него ценностью чрезвычайно высокого порядка – здоров он или болен. [3]

На сегодня существует множество классификаций личностного реагирования на болезнь, и так, представим некоторые из них. Отношение к болезни согласно Л.Л. Рохлину определяется понятием "сознание болезни", которое включает в себя с одной стороны гнозис болезни – познание болезни на основе интероцептивных ощущений больного, имеющих у него медицинских знаний, личного опыта собственной болезни или болезни близких; общие сдвиги в психике больного. Отношение больного к заболеванию определяется рядом факторов: спецификой заболевания, особенностями личности и нервной системы заболевшего, факторами социальной среды, формирующими сознание и поведение больного. К примеру К.А.Скворцов описывал различные типы отношения больных к болезни: "держаться выше болезни", "бороться с болезнью", "не обращать внимания на болезнь", "диссимулировать, считать болезнь позором", "полностью покоряться болезни", "становиться рабом болезни", "бояться болезни", "привыкать к болезни", "трагически переживать болезнь". [4]

Я. Липовски предложил свою типологию «психосоциальных реакций на болезнь»

- ♦ болезнь–угроза или вызов, типы реакций – противодействие, тревога, уход, борьба (иногда паранойяльная),
- ♦ болезнь–утрата, типы реакций – депрессия или ипохондрия, растерянность, горе, попытка привлечь к себе внимание, нарушение режима,
- ♦ болезнь–выигрыш или избавление, типы реакций – безразличие, жизнерадостность, нарушение режима, враждебность по отношению к врачу,
- ♦ болезнь–наказание, типы реакций – угнетенность, стыд, гнев;

Необходимость изучения субъективной стороны заболевания подчеркивалась многими авторами. Так, F. Alexander и H. Dunbar – представители психосоматического направления середины прошлого столетия, рассматривали психосоматические нарушения с позиций психоанализа. Согласно их теории аутопатологии болезнь представляет собой реализацию в определенных жизненных условиях психического профиля личности, который у каждого человека индивидуален и предопределен, главным образом, конституцией и наследственностью. [4]

В отечественной литературе проблема соотношения личности и болезни рассматривается в двух аспектах:

- ♦ как система отношений "личность и болезнь" – роль личности в этиологии заболевания, в выходе из болезни, в процессе реадaptации;
- ♦ система отношений "болезнь и личность" – выяснение проблемы непосредственных и опосредованных соматогений, возникающих у больного в результате тяжелых заболеваний, изучение влияния патологического процесса и его способности изменять личность.

Соматопсихическое направление было заложено трудами С.С. Корсакова, П.Б. Ганнушкина, В.А. Гиляровского, И.К. Краснушкина. В центре внимания находился вопрос влияния соматической болезни на личность.[2]

Для пациента внутренняя картина болезни складывается из понимания механизмов возникновения неприятных и болезненных ощущений, оценки их значения для будущего, а также отреагирования на болезнь в виде эмоциональных переживаний, выбора способа действий и поведения в новых для человека условиях. Однако многое в отношении к болезни не осознается и определяется бессознательными эмоционально-инстинктивными процессами. [2]

А. В. Квасенко и Ю. Г. Зубарев (1980) предлагают выделить три этапа, которые отражают формирование и динамику личностных реакций больного на свое страдание: сенсологический, оценочный и этап отношения к болезни. [5] Сенсологический этап – отражает реакции больного на развившиеся явления дискомфорта (неприятных ощущений), боли и связанное с ними чувство той или иной собственной недостаточности. Боль – это сигнал о болезни, имеет физиологический и психологический компоненты. Психологическая характеристика ощущений (дискомфорт, боль) с отрицательно окрашенными переживаниями, осознание ограничения своих прежних возможностей, чувство собственной неполноценности – все это можно объединить понятием дефицитарности. [5]

Оценочный этап – это результат внутренней переработки сенсологических данных, соответствует внутренней картине болезни. В ней важно определить баланс

мыслительной и эмоциональной составляющих для последующего психотерапевтического воздействия. Этап отношения к болезни – формируется у больного в процессе его индивидуального развития и воспитания. Он видел, как болеют другие, имеет личный опыт болезни, обладает медицинской и обывательской информацией о заболевании, имеет представления (верные или недостоверные) о последствиях болезни и их значимости для себя, семьи, общества. [5]

Согласно другой классификации можно выделить следующие типы личностного реагирования на болезнь: адекватную (гармоничную) реакцию; переоценку тяжести заболевания (уход в болезнь); недооценку тяжести заболевания, вплоть до его отрицания.[5]

Адекватная (гармоничная) реакция наблюдается, если больной правильно оценивает тяжесть своего состояния, мобилизуется на борьбу с болезнью. В этом ему помогают врач, психолог, социальный работник. Устанавливаются взаимопонимание, доверительные отношения с лечащим персоналом, выполняются все терапевтические предписания, принимается помощь близких. Больной не теряет надежды на улучшение состояния. При тяжелом прогнозе он разумно относится к неизбежному, обдумывает завещание, в случае возможного смертельного исхода, при инвалидности – адаптируется к новым условиям жизнедеятельности.[5]

Переоценка тяжести болезни или «уход в болезнь» представляет собой неосознанное преувеличение тяжести своего состояния. В таком случае болезнь – «условно желательное состояние», она дает какие-то преимущества больному. Такое

отношение обычно возникает у акцентуированных или психопатических личностей, а также при снижении интеллекта, наличии повышенной внушаемости и самовнушаемости. Степень переоценки колеблется в широких пределах: от легких пограничных сдвигов в психической деятельности до ипохондрического бреда, тяжелых депрессий, суицидальных попыток. «Уход в болезнь» часто возникает у личностей с истерическими чертами характера. У таких пациентов есть уверенность, что они тяжело больны, даже если заболевание течет благоприятно и с хорошим прогнозом. Эти пациенты требуют к себе повышенного внимания и неоправданно активного лечения, они стеничны в достижении целей, часто конфликтны и обидчивы, так как лечащий персонал, с их точки зрения, правильно не оценивает тяжести их страдания. Может наблюдаться регрессивно-инфантильный тип поведения: плачут, не встают с постели, в речи и поведении появляются детские интонации, беспомощность. [5] Недооценка тяжести заболевания ведут к снижению интереса к обследованию и лечению, игнорированию терапевтических рекомендаций. Несмотря на серьезность заболевания, больные остаются спокойными, благодушными (например, при инфаркте миокарда, туберкулезе). [5]

Очень часто бывает так, что больной не понимает ряда своих ощущений, не способен оценить свои жалобы и симптомы, свои знания о болезнях использует несоразмерно. Поэтому опасения, страх и тревога являются значительными факторами в аутопластической картине его болезни. Следует отметить, что существует два типа влияния страха. Первое, как

ни странно, – это положительное влияние страха, которое заключается в том, что он предупреждает об опасности, вытекающей из болезни или из поведения, которое могло бы вызвать болезнь или ухудшить ее. Страх перед последствиями болезни является наиболее часто тем мотивом, который приводит больного к врачу для медицинского обследования. Отрицательное значение страха и тревоги проявляется в нескольких направлениях. Поскольку эти эмоции очень часто бывают с выраженными вегетативными признаками, особенно сосудистого характера, следствием их может явиться ухудшение существующего заболевания. Например, чувство страха может вести к повышению артериального давления при гипертонической болезни и тем самым повышать опасность развития осложнений. Переходом между тревогой и страхом является также состояние беспокойства, которое постепенно сливается все более определенно со страхом за свою жизнь, со страхом смерти. [6] Что касается связи между информированностью больных и страхом, то здесь имеются различные варианты:

а) информированность (медицинская сознательность) очень низкая. Больной боится почти всего, что с ним делают. Это страх от незнания и от неизвестной опасности. Такой вид страха можно уменьшить тем, что больной после доступного и понятного разговора с врачом поговорит о том, что его ждет, с другим больным, уже перенесшим подобную манипуляцию; используют энергичное и авторитетное внушение; в общем с таким больным обращаются так, как с утраченным ребенком;

б) больной имеет некоторые, неполные сведения и частичные знания о своей бо-

лезни, но объясняет их искаженно, например временное колебание кровяного давления в смысле повышения понимает как симптом гипертонической болезни.

в) страх от одностороннего, хотя и правильно оцениваемого опыта. Примером может служить страх патологоанатома перед инфарктом миокарда, обусловленный тем, что патологоанатому лучше других на основании собственного опыта известно о смертельном конце этого заболевания.

г) страх имеет серьезное объективное основание, например, при злокачественном новообразовании. С психологической точки зрения такие ситуации являются самыми тяжелыми для медицинского персонала. Необходимо уяснить себе, что больной потребует тем больше психической поддержки и человеческого участия, чем больше ограничены возможности медицинской помощи.

д) если больной психически уравновешен, то реальные сведения о болезнях, их лечении и профилактике сообщают такому больному спокойствие и уверенность, подготавливают его психически к различным возможностям угрозы для здоровья, а в крайних случаях, когда он узнает или почувствует безвыходность ситуации, ведут его к мужественному примирению с тяжестью состояния. Такой человек нередко бывает способен сам себе разумно и без промедления оказать первую помощь. [6]

Отношение больного к своей болезни отчетливо характеризует В. Вондрачек с точки зрения того, какую цену имеет болезнь для больного; большей частью она бывает отрицательной, но иногда и положительной, будь то сознательно или подсознательно. Важно, чтобы врач знал о

таком отношении пациента к болезни и избирал соответствующий психологический подход к больному и тем самым предупреждал возможность ятрогении. [6]

Так, оценка личностных реакций на болезнь, внутренней картины болезни и тесно связанных с этими понятиями качества жизни и приверженности лечению является залогом успешного лечения больного. Психические процессы не являются иррациональными, а составляют специфическую биосоциальную сущность человека. Ведь выздоровление имеет биологическую и социально-психологическую стороны, которые не всегда совпадают. Часто физически уже здоровый человек, чувствует себя еще больным. Выздоровление после тяжелого заболевания всегда сопровождаются переживанием обновления своих возможностей, даже с эйфорией. В центре внимания клинического психолога находятся психические реакции человека, заболевшего тем или иным расстройством. Значимым становится анализ как их клинических особенностей и разнообразия, так и оценка факторов, способствующих возникновению у конкретного человека определенного типа психического реагирования на собственную болезнь. [7]

Таким образом, наиболее распространенными эмоциональными реакциями на болезнь являются: тревога, горе, депрессия, стыд, чувство вины. В то время как здоровье – это состояние полного физического, психического и социального благополучия, а не только отсутствие болезней или физических дефектов. Субъективно здоровье проявляется в чувстве оптимизма, благополучия, радости жизни.

Литература

1. Лурия Р. А., Внутренняя картина болезней и язтрогенные заболевания, 4-е изд, М., Медицина, 1977.
2. Малкина–Пых И. Г., Психосоматика. Справочник практического психолога, М., ЭКСМО, 2005.
3. Чудновский В. Э., Смысл жизни: проблема относительной эмансипированности от «внешнего» и «внутреннего»//Психол. журн, 1995, т. 16, с. 15–26.
4. Личность и болезнь: “внутренняя картина болезни”, качество жизни и приверженность лечению//Журнал "Заместитель главного врача", № 11, 2009.
5. О. В. Лисковский, Медицинская психология Учеб.–метод. комплекс, Минск: ФУСТ БГУ, 2003.
6. Конечный Р., Боухал М. Психология в медицине. Прага, Авиценум, 1983.
7. Менделевич В. Д., Клиническая и медицинская психология: Практическое руководство, М., МЕДпресс, 2001.

About the internal picture of the disease

L. Aslanyan

The focus of clinical psychologists are mental reactions of the person who develops one or another disorder and its treatment must take into account not only the state of the body, but also its “soul.” After all, the key to successful treatment of the patient is the assessment of personal reactions to the disease, its internal picture of the disease.

Հիվանդության ներքին պատկերը

Լ. Ասլանյան

Կլինիկական հոգեբանների ուշադրության կենտրոնում է այս կամ այն հիվանդությանը տառապող մարդու ռեակցիան իր իսկ հիվանդության նկատմամբ: Նրա բուժման հարցում կարևոր է հաշվի առնել ոչ միայն հիվանդի ֆիզիկական վիճակը այլ նաև նրա հոգեկանի արձագանքը, քանի որ բուժման հաջող ընթացքը կախված է ոչ պակաս կարևոր հանգամանքից՝ հիվանդության ներքին պատկերից:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԷՌՆԵՍՏ ՀԵՄԻՆԳՈՒԵՅԻ «ԾԵՐՈՒՆԻՆ ԵՎ ԾՈՎԸ» ՎԻՊԱԿԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ

Էռնեստ Հեմինգուեյը 1936թ. հրապարակած իր գրական ակնարկում նկարագրում է ձկնորսության այն տեսարանը, որին ինքն ականատես էր եղել Գոլֆսթրիմում: Երկար տանջանքներից հետո մի ծեր ձկնորսի հաջողվել էր բռնել ձուկը, որ երկար ժամանակ իր նավակից կապված՝ լողում էր ծովում: Ծերուկի բռնած ձուկն ամբողջությամբ խժռել էին շնածկները, իսկ ձկնորսը հուսահատությունից հեկեկում էր: Այս իրական պատմությունն է ընկած Հեմինգուեյի 1952թ. լույս տեսած «Ծերուկին և ծովը» վիպակի հիմքում, որն ինչպես, հեղինակն ինքն էր ասում, գրվել էր «մի շնչով»: Վիպակում նա շոշափում է հասարակական, բարոյական և փիլիսոփայական մի շարք էական խնդիրներ:

Վիպակի փիլիսոփայական ամենակարևոր հիմնախնդիրներից մեկն է **բնության և մարդու միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունը**: Ծեր Սանտյագոն փորձառու ձկնորս է, որը ողջ կյանքում

տանջվել է՝ պայքարելով բազում փորձությունների, զրկանքների և վտանգների դեմ: Նա «նիհար էր ու հյուժված, ծո՞րակն ակոսված էր խոր կնճիռներով, իսկ այրերը ծածկված էին մաշկային անվնաս քաղցկեղի թուխ բծերով, որ առաջ են բերում արևադարձային ծովի հարթության մեջ արտացոլված արևի ճառագայթները: Այդ բծերը այրերի վրայով իջնում–հասնում էին վզին, ձեռքերի վրա երևում էին խոր սպիներ, որ պարանն էր առաջացրել խոշոր ձուկ հանելու ժամանակ: Բայց նոր սպիներ չկային, եղածները հին էին՝ վաղուց անջուր անապատի ճաքերի նման»²:

Ծերունու ողջ կյանքը կապված է ծովի հետ: Ծովը կերակրում է ձկնորսներին, իսկ մարդիկ շարունակ պայքար են մղում տարերքի դեմ, և հենց այդ շարունակական պայքարն է, որ ծերունուն կոփել, դարձրել է ուժեղ և կամային մի անձնավորություն: Չնայած այս ամենին՝ Սանտյագոն թշնամաբար չի վերաբերվում ծովին, ինչպես իրենից ավելի երիտասարդները. նա բոլորովին այլ վերաբերմունք ունի ծո-

¹ Зарубежная Литература 1917–1975 гг., В. М. Тимофеева, В. П. Мицкевич, Минск, изд. БГУ им. В. И. Ленина 1976, стр. 377

² Էռնեստ Հեմինգուեյ, «Ծերուկին և ծովը», «Անտարես» հրատ., Երևան, 2008, էջ 3:

վի նկատմամբ. «Մտքում նա միշտ ծովն անվանում էր *la mar*, ինչպես իսպաներեն անվանում են նրան սիրող մարդիկ: Երբեմն նրան սիրողը վապ է խոսում նրա մասին, բայց միշտ ինչպես կնոջ մասին՝ իգական հոդով... Ծերունին ինքն էլ մշտապես մտածում էր ծովի՝ որպես կնոջ մասին, որը մեծ շնորհներ է պարգևում կամ մերժում, իսկ եթե իրեն թույլ է տալիս չմտածված կամ անբարյացակամ արարքներ գործել, ճարդ ինչ, այդպես է նրա բնույթը»:³

Սանտյագոն կարծես հասկանում է ծովի, ճայերի, ձկների լեզուն, կարողանում է մարդկայնացնել բնությունը և ըմբռնել դրա խորն ու բարդ էությունը, և միայն այսպիսի մարդկանց հետ է բնությունը կիսում իր բարիքները: «Նա քնքուշ սեր էր տաժում թռչող ձկների նկատմամբ, դրանք նրա լավագույն բարեկամներն էին այդտեղ՝ օվկիանոսում: Թռչուններին նա խղճում էր, մանավանդ ծովային փոքրիկ ու նրբակազմ ծիծեռնակներին, որոնք անվերջ թռչում են ու կեր փնտրում և համարյա երբեք էլ չեն գտնում...»⁴:

Նավակին մոտեցած թռչնակի հետ նա խոսում է ընկերաբար, հարցնում նրա տարիքը, խորհուրդ տալիս. «Մի լավ հանգստացիր, փոքրիկ թռչուն, իսկ հետո թռիր դեպի ափ ու պայքարիր, ինչպես պայքարում է ամեն մարդ, թռչուն ու ձուկ»⁵: Ծերունին խղճում է նաև կրիաներին, որոնց սիրտը դեռ երկար բաբախում է մորթվելուց հետո: «Բայց չէ՛ որ ես էլ նույնպիսի սիրտ ունեմ, – մտածում էր նա,

– իսկ իմ ձեռքերն ու ոտքերը այնքան նման են նրանց ձեռք ու ոտքին»⁶:

Նա իրեն պատասխանատու է զգում բնության առջև. մի տեսակ մեղքի զգացում ունի, քանի որ պայքար է մղում բնության զավակի՝ ձկան դեմ: Այդ է վկայում նրա անընդմեջ զրույցը ձկան հետ. «Ա՛յ ձուկ, ես քեզ շատ եմ սիրում և հարգում, բայց քեզ կսպանեմ, մինչև գիշերն իջնի»⁷:

Ծերունու հոգին կեղեքվում է այն մտքից, որ մարդը մշտապես սպանում, ոչնչացնում է իր «եղբայրներին»՝ ձկներին, թռչուններին ու գազաններին: Նա զարմանում է, թե որքան վեհանձն է ձուկը, և գտնում, որ աշխարհում ոչ ոք արժանի չէ նրանով սնվելու: Ահա թե ինչպես է նա նկարագրում ձկանը. «Եվ այդ ժամանակ ձուկն ասես կենդանացավ, թեև արդեն մահ էր կրում իր մեջ, նա ջրից վեր նետվեց՝ կարծես պարծենալով իր հսկայական երկարությամբ ու լայնությամբ, իր ամբողջ գեղեցկությամբ ու հզորությամբ»: ⁸:

Ծերունին անընդհատ մտորումների մեջ է, ու կարծես ներքին մի պայքար է ընթանում նրա խղճի և բանականության միջև. «Գուցե և մեղք էր ձուկն սպանելը: Կարծում եմ, թե մեղք է, թեև սպանեցի դրան, որպեսզի սովամահ չլինեմ ու դեռ բազմաթիվ մարդկանց կերակրեմ: Այդ դեպքում մեղք է այն ամենը, ինչ դու անում ես: Չարժե խորհրդածել այն մասին, թե ինչն է մեղք, ինչը մեղք չէ: Հիմա արդեն ուշ է դրա մասին մտածելը, բացի դրանից մեղքերով թող զբաղվեն նրանք, ում վճարում են դրա համար: Թող նրանք մտածեն, թե ինչ է մեղքը: Դու ծնվել ես ձկնորս

³ Նույն տեղում, էջ 16:

⁴ Էռնեստ Հեմինգուեյ «Ծերունին և ծովը», «Անտառներ» հրատ., Երևան, 2008, էջ 16:

⁵ Նույն տեղում, էջ 32:

⁶ Նույն տեղում, էջ 21:

⁷ Նույն տեղում, էջ 32:

⁸ Նույն տեղում, էջ 58:

դառնալու համար, ինչպես որ ծուկը ծնվել է ծուկ լինելու համար»⁹:

Սանտյագոն, իրեն համարելով բնության մի մասնիկը և փորձելով ներդաշնակ ապրել նրա հետ, հաճախ մտածում է, թե ինչ լավ է, որ մարդիկ ստիպված չեն սպանել արևը, լուսինը, աստղերը: Եվ չնայած այս ամենին՝ նա չի կարող պարտվել, նա պիտի ցույց տա ձկանը, թե ինչի է ընդունակ մարդը և ինչի կարող է դիմանալ:

Ծերունու կերպարին զուգահեռ հեղինակը զարգացնում է նաև փոքրիկ տղայի՝ Մանուոլյի կերպարը: Նա ծերունու աշակերտն է և ընկերը: Ծերունին փորձում է տղային սովորեցնել իր գիտեցած բոլոր հմտությունները, նրան փոխանցել ձկնորսական գործի բոլոր այն գաղտնիքները, որոնք բացահայտել է տարիների իր քրտնաջան աշխատանքի և դրա արդյունքում ձեռք բերված փորձի շնորհիվ: Տղան նույնպես ծերուկին սիրում է իր հոգու ողջ ջերմությամբ. նրա համար աշխարհի ամենալավ ձկնորսն է Սանտյագոն: Չնայած այն բանին, որ տղայի ծնողները, տեսնելով ծերունու անհաջողությունները, նրան արգելում են ծերուկի հետ ծով դուրս գալ, տղան շարունակում է մնալ Սանտյագոյի անդավաճան ընկերն ու բարեկամը: Նա անշահախնդրորեն հոգ է տանում իր ձեր ընկերոջ մասին: Մի շարք դրվագներում արտացոլված է տղայի հոգատարությունն ու սերը նրա հանդեպ. «Երբ տղան վերադարձավ, արևն արդեն մայր էր մտել, իսկ ծերունին, աթոռին նստած, քնել էր: Տղան մահճակալից վերցրեց զինվորական հին վերմակը և դրանով ծածկեց աթոռի թիկնակն ու ծերունու ուսերը»¹⁰:

Եվ ահա, երբ մայր բնությունը հերթական փորձությունն է պատրաստել Սանտյագոյի համար, տղան չի կարողանում ուղեկցել նրան: Ձկան դեմ մղած պայքարում ծերունին իրեն սարսափելի մենակ է զգում, նա Մանուոլյի կարիքը շատ ունի: Այստեղ արդեն հեղինակը շոշափում է ևս մեկ կարևոր խնդիր՝ **մարդու միայնության հիմնախնդիրը**. անեզր օվկիանոսը խորհրդանշում է հարատևություն և անսահմանություն, իսկ ծերունու կերպարը մարդկային հարուստ փորձի և միևնույն ժամանակ դրա սահմանափակության խորհրդանիշն է: Ծեր ձկնորսը մտածում է, որ ծերության ժամին մարդը չպետք է մենակ մնա՝ միևնույն ժամանակ քաջ գիտակցելով դրա անխուսափելիությունը: «*Իմ զարթուցիչը ծերությունն է: Ինչու՞ են ծերունիներն այդպես շուտ զարթնում, միթե նրա համար, որ երկարացնեն գոնե այդ օրը*»¹¹, — ասում է նա:

Եվ չնայած իր միայնությանը՝ նրան հաջողվում է հաղթանակած դուրս գալ իր մղած եռօրյա ծանր ու դաժան պայքարից: Հենց այս պայքարում է ձեր ձկնորսը երևում իր հասարակ ու պարզ հոգու մեծությամբ, ոգու կորովով, աննկուն կամքով ու անպարտելիությամբ: Պատահական չէ, որ նա երազում միշտ տեսնում է ծովափին մոտեցող առյուծներ, և երիտասարդ կապույտ աչքեր ունի. «*Հին էր նրա ամեն ինչը, բացի աչքերից, իսկ աչքերի գույնը նման էր ծովին. աննկուն մարդու ուրախ աչքեր էին դրանք*»¹²:

⁹ Նույն տեղում, էջ 65:

¹⁰ Նույն տեղում, էջ 9:

¹¹ Էռնեստ Հեմինգուեյ «Ծերունին և ծովը», «Անտառետս» հրատ., Երևան, 2008, էջ 12:

¹² Էռնեստ Հեմինգուեյ «Ծերունին և ծովը», «Անտառետս» հրատ., Երևան, 2008, էջ 3:

Հեղինակի նկարագրած եռօրյա ծանր ու դաժան այս պայքարի հիմքում ընկած է **մարդու բանականության, ուժի և կամքի հաղթանակի խնդիրը**, որը վիպակի մյուս կարևոր հիմնախնդիրն է: «Մարդ նրա համար չէ ստեղծված, որ պարտություններ կրի: Մարդուն կարելի է ոչնչացնել, բայց չի կարելի հաղթել»¹³, –ասում է ծեր ձկնորսը: Ծեր Սանտյագոն միայնակ է պայքարում բնության դեմ՝ ապացուցելով դրան ընդդիմանալու իր կարողությունը: Նա, իհարկե, հաղթանակ է տանում ձկան դեմ, բայց չի կարողանում հետ մղել ձկան վրա հարձակված շնածկներին, որոնք խժոռում են ձկանը և թողնում միայն դրա կմախքն ու ոսկորները: Այսինքն՝ նրա հաղթանակը բարոյական է. նա միաժամանակ և՛ հաղթում է, և՛ պարտվում: Նա կարողանում է դիմադրել բնությանը, բայց չի կարողանում հաղթել նրան: Ծերունու կրած հաղթանակը, սակայն, արժևորվում է մարդ արարածի կողմից. դրա ամենակարևոր գնահատականը իրեն դիմավորող Մանուլոյի արցունքներն են, որի կերպարը ևս առանցքային է վիպակում: «Երբ առավոտյան խրճիթ մտավ տղան, նա քնած էր...Տղան համոզվեց, որ ծերուկը շնչում է, բայց երբ տեսավ նրա ձեռքերը, լաց եղավ: Նա կամացուկ դուրս եկավ խրճիթից՝ սուրճ բերելու, և ամբողջ ճանապարհին լաց էր լինում»¹⁴:

Նրա և ծերունու միջև աստիճանաբար ձևավորվող և ամրապնդվող ջերմ ու բարի մտերմության, նրանց անկեղծ հարաբերությունների նկարագրության միջոցով հեղինակը կարևորում է **մարդկային ու գեղեցիկի հաստատումն ու պահպանումը մարդկանց միջև**՝ առաջ բերելով մարդկային հարուստ փորձը սերնդեսերունդ փոխանցելու թեման: Ծերուկը կարողացավ հաղթահարել իր առջև դրված ծանր փորձությունը, քանզի նրան ուժ էին հաղորդում հիշողությունները մարդկանց և հատկապես՝ Մանուլոյի ու իրենց զրույցների մասին, նա պատկերացնում էր իր վերադարձի քաղցրությունը, և դա նրան ստիպում էր չնահանջել, առաջ շարժվել: Դաժան փորձությունը հաղթահարելիս, նա հաճախ մտածում է. «Տղան, այ թե ով չի թողնում, որ մեռնեմ...»¹⁵:

Սա վկայում է այն, որ հեղինակը իր գլխավոր հերոսի՝ Սանտյագոյի կերպարը կերտելիս, շեշտը դնում է հատկապես *մարդու հոգևոր արժեքների հարստության* վրա և ապացուցում, որ միայն այդ արժեքների խորը գիտակցման դեպքում է հնարավոր դառնում մարդու լիիրավ հաղթանակը:

Այս առումով հատկանշական է վիպակի ավարտը. «Վերևում՝ իր խրճիթում, ծերուկը նորից քնել էր: Նա դարձյալ քնել էր երեսն ի վայր, և տղան հսկում էր նրան: Ծերունին երազում առյուծներ էր տեսնում»¹⁶:

¹³ Նույն տեղում, էջ 64:

¹⁴ Նույն տեղում, էջ 76:

¹⁵ Էռնեստ Հեմինգուեյ, «Ծերունին և ծովը», «Անտառես» հրատ., Երևան, 2008, էջ 66:

¹⁶ Նույն տեղում, էջ 79:

ԱՂՎԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

**ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ**

Ստեղծագործական գործունեությունը, որը կարևոր դեր է խաղում մարդու հոգևոր գործունեության մեջ, մարդուն բնորոշ համապիտանի ընդունակություններից մեկն է: Ստեղծագործական երևակայությանը նվիրված առաջին փորձարարական հետազոտություններն առնչվում են 19–րդ դարավերջին, 20–րդ դարասկզբին:

Հոգեբանամանկավարժական, ինչպես նաև փիլիսոփայական աշխատությունների վերլուծությունն ապացուցում է ինչպես ստեղծագործական գործունեության, նրա էության, այնպես էլ հոգեբանական մյուս գործընթացների հետ նրա կապի, մարդու ճանաչողական և փոխակերպող գործունեության մեջ նրա դերի մասին բազմաթիվ տեսակետների առկայությունը: Չնայած բնութագրումների բազմազանությանը՝ ժամանակակից հետազոտողների մեծ մասը ստեղծագործական երևակայությունն առնչակցում է հոգեբանական բարձր գործընթացների հետ: Ստեղծագործական երևակայության կայացումը ներառում է ընկալման, հիշողության, մտածողության, խոսքի, հույզերի անվերապահ զարգացում: Այն սերտորեն կապված է զգայական և միջնորդավորված ճանաչողությանը, բայց չի հանգեցվում դրան: Երևակայությունը գործնականում միահյուսվում է ճանաչողական բոլոր գործընթացներին և մեծապես կախված է անձի պահանջմունքներից ու ցանկություններից, նրա դրդապատճառներից:

Ստեղծագործական գործունեությունն

անցյալի փորձի հիման վրա նոր պատկերների (կերպարների) մտավոր արարման գործընթաց է: Երևակայությունը լինում է պասիվ և ակտիվ, վերջինն էլ իր հերթին կարող է լինել վերակերտող և ստեղծագործական: Երևակայությունն էական դեր է խաղում լեզվական ունակությունների՝ ընթերցանության, ունկնդրության, ուղղագրության, կետադրության, ինչպես նաև թեմատիկ նկարների հորինվածքների ստեղծման, մտովի նկարչության, նկարի հորինվածքի կառուցման և այլ դեպքերում: Դպրոցական ուսումնառության ժամանակ երեխաներից հիմնականում պահանջվում է այնպիսի հմտությունների տիրապետում, ինչպիսիք են վերացական տրամաբանական մտածողությունը, կամայծին հիշողություն: Հատկանշական է, որ այդ հմտությունների ձևավորման հիմքը հենց երևակայությունն է, որի դերը նշանակալի է նաև այս դեպքում: Ուսուցման հետագա գործընթացում երևակայությունը վերածվում է մտածողության այնպիսի ձևերի, ինչպիսին է պատկերային մտածողությունը՝ հիմք հանդիսանալով սուբյեկտի հետագա ստեղծագործական գործունեության համար:

Ստեղծագործական գործունեություն ենք անվանում մարդու այնպիսի գործունեությունը, որը միտված է ստեղծելու, արարելու ինչ–որ նոր բան: Մարդու պահվածքը, վարքը, գործունեությունն ուսումնասիրության ենթարկելով՝ կարելի է հեշտությամբ նկատել, որ նրանում

տարանջատվում են վարքագծի երկու հիմնական դրսևորումներ: Դրանցից մեկը անվանում են վերարտադրողական: Այն սերտորեն կապված է հիշողության հետ: Դրա էությունն այն է, որ մարդը վերարտադրում կամ կրկնում է նախկինում արդեն իսկ ստեղծված և մշակված վարքի հնարքները կամ վերամարմնավորում նախկին տպավորությունների հետքերը: Հիշելով տունը, որում անցկացրել է մանկությունը կամ հեռավոր երկրները, որոնք երբևէ այցելել է՝ նա վերարտադրում է այն տպավորությունների հետքերը, որոնք նա ապրել է այդ ժամանակահատվածում: Այդպես էլ, երբ մարդը նախանկարում է բնօրինակից, նա որոնում կամ իր գործողություններում հետևում է որոշակի առաջադրված օրինակի, այդ բոլոր դեպքերում վերարտադրելով միայն այն, ինչ գոյություն ունի իր առջև, կամ էլ այն, ինչը նա յուրացրել և մշակել է ավելի վաղ: Նշված բոլոր դեպքերում ընդհանրականն այն է, որ մարդու գործունեությունը չի ստեղծում ոչ մի նոր բան, որ նրա գործողությունների հիմքում արդեն իսկ եղածի առավել կամ պակաս ճշգրիտ կրկնությունն է [2, էջ 10]:

Դժվար չէ հասկանալ, թե մարդու ողջ կյանքի համար ինչ ահռելի նշանակություն ունի նրա նախկին փորձի այդպիսի պահպանումը, թե ինչքան է այն հեշտացնում շրջապատող աշխարհի ընտելացումը՝ ստեղծելով և մշակելով մնայուն սովորություններ, որոնք կրկնվում են միևնույն պայմաններում:

Նման վերարտադրողական գործունեության կամ հիշողության օրգանական հիմք է հանդիսանում մարդու նյարդային համակարգի ճկունությունը: Ճկունություն են անվանում այնպիսի հատկանիշը, որը

նրան հնարավորություն է ընձեռում փոխակերպվելու և պահպանելու այդ փոխակերպման հետքերը: Այսպես, մեղրամոմն այս իմաստով ավելի ճկուն է, քան ջուրը կամ երկաթը, քանի որ ավելի հեշտությամբ է ձևափոխվում, քան երկաթը, և ավելի լավ է պահպանում փոխակերպման հետքերը, ի տարբերություն ջրի: Այս երկու հատկանիշները միասին արտացոլում են մարդու նյարդային համակարգի ճկունությունը: Մարդու ուղեղը և նյարդերը, օժտված լինելով մեծ ճկունությամբ, հեշտությամբ փոխում են իրենց նուրբ կառուցվածքը ազդեցությունների ներքո և պահպանում այդ փոփոխությունների հետքերը, եթե հույզերը եղել են բավականաչափ ուժեղ և կրկնված: Այդ դեպքում ուղեղում տեղի է ունենում գրեթե այն, ինչ թղթի հետ. երբ այն ծալում ենք, ծալման տեղում մնում է ընդգծված հետք՝ փոփոխության արդյունքը և հետագայում այդ փոփոխությունը կրկնելու նախադրյալը: Այս դեպքում բավական է փչել ծալված թերթիկի վրա, որպեսզի այն թեքվի հենց այն նույն տեղից, որտեղ մնացել է հետքը: Նույնը տեղի է ունենում թաց հողի վրա մնացած հետքի հետ, որը պահպանում է անիվի առաջացրած փոփոխությունները և հեշտացնում նրա շարժումը հետագայում: Ուղեղում ուժգին կամ հաճախ կրկնվող հույզերը առաջացնում են համանման ներգործության արդյունք:

Այսպիսով, մարդու ուղեղը այնպիսի օրգան է, որը պահպանում է նախկին փորձը և հեշտացնում այդ փորձի վերարտադրումը: Սակայն, եթե ուղեղի գործունեությունը սահմանափակվեր միայն նախկին փորձի պահպանմամբ, մարդը կվերածվեր մի գոյության, որը ընդունակ կլիներ ընտելանալ

բացառապես շրջապատող միջավայրի կայուն, սովորական դարձած պայմաններին: Նոր և անսպասելի ցանկացած փոփոխություն միջվայրում, որը չի հանդիպել մարդուն նախկին փորձում, նրա մոտ չէր կարող առաջացնել ընտելացման հակազդեցություն: Նախկին փորձի պահպանման այդ գործառույթին զուգահեռ ուղեղը օժտված է նաև մեկ այլ գործառույթով, որը պակաս կարևոր չէ:

Բացի վերարտադրողական գործառույթից, դժվար չէ մարդու վարքի մեջ նկատել նաև գործունեության այլ ձևեր՝ համակցող կամ ստեղծագործական: Երբ մարդը երևակայության մեջ նկարում է ապագայի պատկերը, ասենք՝ մարդու կյանքը XXII-րդ դարում, կամ հեռավոր անցյալում, մարդու պայքարը նախապատմական ժամանակներում, ապա երկու դեպքերում էլ այն չի վերարտադրի այն տպավորությունները, որոնք երբևէ զգացել է: Մարդը ոչ միայն նորոգում է նախկին հույզերի հետքերը, որոնք պահպանվել են նրա ուղեղում, այլև երբեք գործնականում չի տեսել ոչ այդ անցյալը, ոչ էլ այդ ապագան, սակայն կարող է իր պատկերացումն ունենալ այդ իրականությունների մասին, ստեղծել իր պատկերը, իր նկարը [2, էջ 12]:

Մարդու այսպիսի գործունեությունը, որի արդյունքը ոչ թե նրա նախկին փորձում արդեն իսկ առկա տպավորությունների կամ գործողությունների վերարտադրությունն է, այլ նոր պատկերների կամ գործողությունների ստեղծումը և պատկանում է ստեղծագործական համակցող վարքի այդ նոր ձևին: Ուղեղը ոչ միայն մարդու նախկին փորձը պահպանող և վերարտադրող օրգան է, այլև այդ նախկին փորձի տարրերի հիման վրա և այդ տար-

րերը համակցված ձևով ստեղծագործաբար մշակելով նոր դրույթներ և նոր պահվածք ձևավորող կառույց: Եթե մարդու գործունեությունը սահմանափակվեր միայն հնին վերարտադրումով, ապա մարդը կլիներ այնպիսի գոյություն, որի հայացքն ուղղված է անցյալին և կկարողանար ընտելանալ ապագային միայն այնքանով, որքանով ապագան վերարտադրեր անցյալը: Հենց մարդու ստեղծագործական գործունեությունն է նրան վերածում այնպիսի էակի, որի հայացքն ուղղված է ապագային, ով ստեղծում է այդ ապագան և փոխակերպում իր ապագան:

Ուղեղի համակցող ընդունակության վրա հիմնված ստեղծագործական գործունեությունը անվանում են երևակայություն: Սովորաբար երևակայություն հասկացողության ներքո ենթադրվում է բոլորովին ոչ այն, ինչ ընկալվում է այս ըմբռնումի ներքո գիտական ոլորտում: Առօրյայում երևակայություն են անվանում այն ամենը, ինչ անիրական է, ինչը վեր է իրականությունից և ընդհանուր առմամբ գործնականում չի կարող ոչ մի նշանակություն ունենալ: Իսկ գործունեության մեջ երևակայությունը՝ որպես ստեղծագործական ամենայն գործունեության հիմք, միակերպ է դրսևորվում մշակութային կյանքի բոլոր կողմերում՝ հնարավոր դարձնելով գիտական, տեխնիկական, գեղարվեստական գործունեությունը: Այս իմաստով բացարձակապես ամեն ինչ, որ շրջապատում է մեզ և պատրաստված է մարդու ձեռքով, մշակույթի ամբողջ աշխարհը ի տարբերություն բնության աշխարհի, մարդկային երևակայության արդյունք է և այդ երևակայության վրա հիմնված ստեղծագործական գործունեության արդյունք [1, էջ 263]:

«Ամենայն ստեղծագործություն, լինի մեծածավալ, թե փոքր չափի մեջ, գործնականում իրականացվելուց, ամրակալվելուց առաջ ի մի է բերվել միայն երևակայության մեջ, մտովի կառուցվել նոր համադրությունների կամ համակցությունների միջոցով» [3, էջ 129]:

Ստեղծագործական հայտնագործությունների ճնշող մեծամասնության հեղինակների անունները հայտնի չեն. պահապանվել են միայն խոշոր գյուտարարների մի քանի անուններ: Մինչդեռ երևակայությունը միշտ մնայուն է, ընդ որում, այն ինքնըստինքյան գոյություն ունի՝ կարծես ոչնչից չառաջանալով: Որպեսզի գութանը, նախապես լինելով վառված ծայրով հասարակ փայտի կտոր, ձեռքի անմեղ գործիքից դառնար այն, ինչ դարձել է այժմ փոխակերպումների երկար ճանապարհ անցնելուց հետո (ինչի մասին գրված է մասնագիտական հոդվածներում, շարադրություններում), ով իմանա, թե քանի երևակայություն է աշխատել այդ մշակումների վրա: Նույն ձևով խեժափայտի ոստի աղոտ բոցը, հանդիսանալով ջահի նախատիպը, մի շարք հայտնագործություններից հետո մարդուն հասցրեց էլեկտրական լուսավորությանը: Առօրյա կյանքի բոլոր առարկաները, չբացառելով ամենապարզունակները, հասարակներն ու առօրեականները, այսպես կոչված «բյուրեղացված երևակայություն» է [4]:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ստեղծագործական գործունեության մասին մեր սովորական պատկերացումը ամբողջովին չի համապատասխանում այդ բառի գիտական ըմբռնմանը: Սովորական պատկերացմամբ ստեղծագործական գործունեությունը մի քանի ընտրյալ-

ների, հանճարների, տաղանդավորների առանձնահատկություն է, ովքեր ստեղծել են գեղարվեստական մեծ ստեղծագործություններ, գիտական մեծ հայտնագործությունների հեղինակ են կամ բացահայտել են որոշակի կատարելագործումներ տեխնիկայի ոլորտում: Մենք անվիճելիորեն ընդունում և հեշտությամբ ճանաչում ենք ստեղծագործական գործունեության տարրերը Տոլստոյի, Էդիսոնի և Դարվինի աշխատություններում, գործունեության մեջ, սակայն մեզ սովորաբար թվում է, որ շարքային մարդու կյանքում այդ տարրը բոլորովին բացակայում է: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, նման հայացքը սխալ է: Ռուս գիտնականներից մեկի համեմատությամբ՝ ինչպես էլեկտրականությունը գործում և դրսևորվում է ոչ միայն այնտեղ, որտեղ շլացնող կայծակներն են ու ամպրոպը, այլև գրպանի լուսարձակի մեջ, այնպես էլ ստեղծագործական գործունեությունը առկա է ոչ միայն այնտեղ, որտեղ ստեղծվում են մեծ պատմական ստեղծագործություններ, այլև բոլոր այն վայրերում, որտեղ մարդը երևակայում է, համակցում, փոխում և ստեղծում ինչ-որ նոր բան, ինչքան էլ այդ նորը լինի փոքր ու չնչին հանճարների ստեղծածի համեմատությամբ: Իսկ եթե ուշադրություն դարձնենք խմբային ստեղծագործական գործունեության առկայության վրա, որը միավորում է հաճախ աննշան թվացող բոլոր այդ մանրագույն բացահայտումները, անհատական ստեղծագործական գործունեության հատիկները, հասկանալի կդառնա, թե մարդկության կողմից ստեղծվածի ինչ ահռելի մասն է պատկանում հենց անհայտ ստեղծագործողների անանուն խմբային ստեղծագործական աշխատանքին [2, էջ 14]:

Այս հարցի գիտական ըմբռնումը ստիպում է մեզ ստեղծագործական գործունեությունը դիտարկելու ավելի շուտ որպես օրենք, քան բացառություն: Իհարկե, ստեղծագործական գործունեության բարձրագույն դրսևորումներն առ այսօր էլ հասու են միայն մարդկության մի քանի ընտրյալներին՝ հանճարներին, սակայն

մեզ շրջապատող հանապազօրյա կյանքում ստեղծագործական գործունեությունն անհրաժեշտ նախապայման է գոյության համար, և այն ամենը, ինչը դուրս է գալիս կաղապարայնության սահմաններից և ինչնում ներառված է նորի թեկուզ նշույլ, իր առաջացմամբ պարտական է մարդու ստեղծագործական գործընթացին:

Գրականություն

1. Богословский В. В., Общая психология, М., 1981, 635 с.
2. Выготский Л. С., Воображение и творчество в детском возрасте, М., 1967, 74 с.
3. Основы декоративного искусства в школе, М., 1981.
4. Петровский А. В., Воображение // Общая психология, М., 1997, с. 127-145.

Характеристика специфики творческой деятельности

А. Мхитарян

Огромная часть из всего созданного человечеством принадлежит безымянной коллективной творческой работе неизвестных изобретателей.

Научное понимание этого вопроса заставляет нас, таким образом, смотреть на творчество скорее как на правило, чем как на исключение. Конечно, высшие выражения творчества до сих пор доступны только немногим избранным гениям человечества, но в каждодневной окружающей нас жизни творчество есть необходимое условие существования,

The character of specific of imagination activity

A. Mkhitaryan

Huge part created by human belongs unknown creators' anonymous group imagination works.

Understanding of this question urges us observe imagination activity sooner as rule, than exception. Of course, high expressions of imagination activity still today are achievable only several elects fo human genius, so surrounded us in daily life, the imagination activity is necessary condition for living.

FAHIMEH KESHMIRI

CONSIDERING THE INFLUENCE OF SIGMUND FREUD ON F. SCOTT FITZGERALD'S CREATIVE WORKS, *THE GREAT GATSBY* AND *TENDER IS THE NIGHT*

Abstract

This paper will demonstrate how Sigmund Freud influences on F. Scott Fitzgerald as an American novelist and short story writer. Freud is the most famous psychoanalyst in the world whose writing and thoughts embody the very core of Modernism views and his influence is evident through the writings of several well-known authors in 20 century as well as the other ages. His influence on the symbols, characters and in particular the role gender plays on two classic literature novels of F. Scott Fitzgerald, *The Great Gatsby* and *Tender is The Night* is obvious and this paper will showcase these findings.

Key words: Sigmund Freud– Scott Fitzgerald – literary influence– *The Great Gatsby*– *Tender Is The Night*.

Generally modernism is a way to express or communicate the topic or subject of human subjectivity in a manner that makes them more “real than realism.” Perhaps a better, or at least another way to think of modernism, is the writers take a “plunge” for the reader into a complicated world of “mental landscapes” that are difficult to interpret and then are presented guides by the writer to better understand the meanings and limitations of these worlds. Sigmund Freud is possibly the best-known psychoanalyst the world has ever had. He developed the theory of psychoanalysis and notably authored *The Interpretation of Dreams*. In the public eye,

Freud has become so influential that he is seen less as a man and more as a collection of concepts and arguments; though these ideas vary from the commonly accepted to the outrageous it is impossible to ignore their presence and influence in a variety of disciplines, including that of literary criticism. His influence has been seen through the writings of numerous well-known authors as well. Freud’s writing and thoughts embody the very core of Modernism views. “Freud is the one figure who all reviews of Modernism privilege, and yet his work’s impact has to be understood within the general increased level of inquiry at the turn of the century into the workings of the mind and its relation to society.”¹ His influence on the symbols, characters and in particular the role gender plays on F. Scott Fitzgerald’s third novel and his masterpiece, *The Great Gatsby* (1925) is evident.

For Freud, the inability to accept “reality,” as the tenacity of religious faith in the modern world suggested, was a weakness shared by “the great majority of mortals.”² F. Scott Fitzgerald saw accepted culture not as a vehicle for identifying with “everybody,” but rather as an institution through which he might realize his dream of being one of

1 Childs Peter. *Modernism: the New Critical Idiom*. London. New York. Routledge. 2000. P. 48.

2 Freud Sigmund. *Civilization and its discontents*. Trans. and ed. James Strachey. New York. Norton. 1961. P. 21.

the chosen. Fitzgerald accepted that a permissive society activates its own oppressive agencies: the prohibitive Father is displaced only to make way for a “maternal” superego. If the contentment principle dictates that audiences be protected from any shock to the system that “the really new” might occasion, then the seemingly new would have to adopt the guise of the safe and familiar, thereby in Freudian terms “infantilizing” the public, or in the terms of a matricidal logic, “feminizing” it.

With *The Great Gatsby*, Fitzgerald was aware that he had accomplished something extraordinary, and thought he had earned the right to think himself “much better than any of the young Americans without exception”³

If *Gatsby* registers Fitzgerald’s dissatisfaction with the dual and gendered opposition between highbrow craftsmanship and emotional restraint, on the one hand, and lowbrow entertainment and self-indulgence, on the other, Fitzgerald’s struggle with this division nonetheless intensified in the latter half of the twenties in part because his stories were earning him a small fortune while his projected masterpiece couldn’t get written. During this time his marriage to Zelda Sayre became irreparably strained, as she endeavored to establish an artistic identity of her own through ballet dancing, then through writing and ultimately suffered a mental collapse that required expensive treatment.

The novel conveys Fitzgerald’s intelligence of what it meant to have become Zelda’s caretaker, as well as the threat posed by Zelda’s decision to write a novel of her own and his guilt for having failed to write “the model for the age”. Fitzgerald thus had to

make way for his wife’s maternal superego as Freud suggested. *The Great Gatsby* lastly emerged when he distorted his sense of being one of the chosen into the story of everyman’s failure.

Reacting against rigid Victorian value systems, people were more and more attracted to Freud’s ideas about the subconscious. Jazz allowed a freedom of expression not condoned by traditional moral codes. In the book, *The Great Gatsby*, F. Scott Fitzgerald’s continuous use of the Doctor T.J. Eckleburg sign symbolizes an inept God. Fitzgerald also shows us that even though God is watching, bad things still happen. *The Great Gatsby* showed a corrupt society under God’s eyes.

In this view, “masculinity” signifies, and assumes value against, the other’s “feminine” shortcomings, conceived of primarily as emotional needs and economic dependency. The matter of class identifications, though, gets overwritten by a distinctly masculine dream of transcending the human family altogether and enjoying a self-sufficiency barred to those “of women born.”

Freud insisted, we should evoke, that religious sentiment is motivated by a desire for an ideal father, and not by some oceanic feeling reminiscent of a primal bond with the maternal body. Still, the ideal father of infantile religious longing has obvious maternal properties; he is benign and comforting, and consoles his children for the instinctual renunciations that are essential to success in a highly competitive world.

In Fitzgerald’s fourth novel, *Tender Is the Night* (1934), Fitzgerald presents a character that is befitting this paper and topic. Dick Diver liked to address himself in his college years privately as “Lucky Dick—you big stiff”: like Diver’s own name, the phrase is

3 Fitzgerald F. Scott. *The Great Gatsby*. 1925. Reprint. New York. Scribner. 2004. P.113.

bawdily suggestive, specifically of how poorly Dick’s aspiration to be more than ordinary men. Unlike the ordinary men of his generation, Dick was spared the experience of the battlefield so that he might realize his ambition to be “the greatest [psychologist] that ever lived.”⁴ His ambition is Freudian here in a double sense: Dick both wants to supplant his father (a pastor) and rival the father of psychoanalysis, modernity’s secular savior. The phenomenon of transference at work in the psychoanalytic scenario (a phenomenon Freud and later Lacan speculated upon considerably) establishes, however illusorily, the phallic character of the analyst. In this scenario the analyst essentially masquerades as the phallus, or what Lacan describes as “the cause of desire” in the other”⁵

As Freud broke away from the Enlightenment tradition which specified that man was inherently good, artists and writers rebelled against traditional forms of artistic and literary expression. Their work created an immense cultural revolution which we call Modernism. Modernism can be characterized by the heightened consciousness of the Self.

